***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՍՊԻՏԱԿԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ***

***ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ***



***Լոռի 2023թ.***

**Բովանդակություն**

Ներածություն ____________________________________________________________3

1. Հաստատության գործունեությունը _______________________________________________________ 6

1.1 Հաստատության առաքելությունը ______________________________________________________ 12

1.1Դպրոցի առաքելությունըբավարարելու է հետևյալ կրթական կարիքները- _________________________16

1.2Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին _______________________________________________ 25

1.3Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների( դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին_______________________________________________________________________________ 27

2. Իրավիճակի վերլուծությունը, դպրոցի ուժեղ և թույլ կողմերը___________________________________ 53

2.1 Շենքային պայմանների վերլուծություն_____________________________________________________56

2.2 Նյութատեխնիկական բազան_____________________________________________________________64

2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն ___________71

2.4 Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ______________________________________________________ 83

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում ______________________89

2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում _________98

2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն ________________103

2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն__________________114

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն_____119

2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը__ __________________________________124
3. Հաստատությունում առկա հիմնախնդիրները ոլորտների______________________________________________132
4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացմումն ապահովող գործողություններ ու միջոցառումներ_134
5. Զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները ____________________________________________134
6. Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը ______________________________________________________135
7.Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները_135
8. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները______________________________136
9.Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները------------------------------------------------------170
10. Լուսանկարներ ________________________________________________________________________________216

## Ներածություն

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: / <<Կրթության մասին>> ՀՀ օրենք, Հոդված 3-ի 1-ին մաս/

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: / https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299 /

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը, և եթե դպրոցի աշխատանքային պլանը հիմնականում ուշադրություն է դարձնում դպրոցի ընթացիկ խնդիրների լուծմանը,ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարական պլան,որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան,ոչ միայն ամենօրյա, այլև ապագա խնդիրների լուծմանը, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացու ձևավորումը:

<<2024-2029 թթ. ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) մշակել եմ հիմքում դնելով և' Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և' զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև դպրոցի առանձնահատկությունները և' հենվելով նաև ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի վրա՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35- Ն հրամանի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 399-Ա հրամանի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկութունները, կարծիքները արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում և, հիմք ընդունելով դպրոցի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները, սույն ծրագիրն ուղղել եմ նաև դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

**Ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը՝**

1. Հաստատության գործունեությունը
2. Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմերը
3. Նպատակների և խնդիրների սահմանումը
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
5. Պատասխանատուները
6. Ռիսկերը: Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործոնություններ
7. Արդյունքների գնահատման չափանիշները.
8. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
9. Վերահսկողության մեխանիզմները

## 1. Հաստատության գործունեությունը

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացման միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես

նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: ( https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 )

**Հեռ.՝ (+374255)2-24-88**

**Հասցե՝ ք. Սպիտակ, Այգեստան 53, 1802**

**Վեբ կայք՝ https://spitak4.schoolsite.am/**

**Էլ. փոստ՝ spitak4school@yandex.ru**

**Փոստային դասիչ՝ 1802**

**Կազմակերպա-իրավական տեսակը՝ ոչ առևտրային**

**Իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ**

**Դպրոցի հիմնադրումը՝ 1955թ-ին**

**Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 1993 թ**

**Պետռեգիստրի գրանցման վկայականի համարը՝ 03Ա056856**

**Պետռեգիստրում գրանցման ամսաթիվը՝ 23.01.2003թ**

**Դպրոցի շենքը՝ հարմարեցված**

**Դպրոցի տիպը՝ հիմնական**

**Աշխատանքային շաբաթը՝ 5օրյա**

**Աշխատանքային ռեժիմը՝ միահերթ**

**Հարկայնությունը՝ 3**

**Մակերեսը՝** 5400ք.մ.

**Նախագծային հզորությունը՝** 163 աշակերտի համար

**Փաստացի հաճախող աշակերտների թիվը՝** 110

**ԿԱՊԿՈւ աշակերտների թիվը՝** 1

**Ջրամատակարարումը՝** Շուրջօրյա կենտրոնացված

**Կոյուղացումը՝** Կենտրոնացված

**Ջեռուցումը՝** Կենտրոնացված

**Դպրոցի պատմությունը՝**

http://lori.mtad.am/educational/

Դպրոցը հիմնադրվել է 1955թ-ին և 1955թ-ից մինչև 1960թ-նը եղել է Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի թիվ 61 յոթնամյա դպրոց: 1961 թ-ից այն դարձել է Սպիտակի 4-րդ ութնամյա դպրոց: Առաջին տնօրենը եղել է Վարդգես Զաքարյանը: 1968 թ-ից մինչև 1972թ-ը տնօրեն է եղել Քնարիկ Պետրոսյանը: 1972թ-ին դպրոցը տեղափոխվել է <<Չերյոմուշկա>> նորակառույց թաղամաս, դարձել է միջնակարգ՝ ունենալով 8 մասնաշենք, երկհարկանի տիպային մի կառույց: 1972 թ-ից մինչ 1978 թ-ը տնօրեն է եղել Ռուբեն Սիմոնյանը: 1978-1988թ-ը դպրոցը ղեկավարում էր Կորյուն Զաքարյանը: 1989 թ-ից դպրոցը գործում էր տնակային պայմաններում, իսկ 1993 թ. Քուվեյթի հայ համայնքը դպրոցին նվիրեց նոր շենք: 2005 թ-ին դպրոցը

հիմնանորոգվեց, բարեկարգվեց բակը, իսկ 2007 թ-ին կառուցվեց նոր մարզադահլիճը: 1989 թ-ից մինչև 2003 թ-ը դպրոցի ղեկավարությունն ստանձնել  է Քնարիկ Պետրոսյանը, իսկ նրա՝ թոշակի գնալուց հետո՝ Օֆելյա Պետրոսյանը, որը պաշտոնավարում է մինչ օրս:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 2003թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում (վկայական՝ 03Ա056856, գրանցված 23.01.2003թ): Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 03.06.2022թ.-ին: Դպրոցի շենքը հարմարեցված է, ուսումնառությունը կազմակերպվում է մեկ հերթով, 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, որը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որը սահմանում է ՀՀ կառավարությունը:

2017թվականի սեպտեմբերի 1-ից դպրոցն իրականացնում է համընդհանուր ներառական կրթության:

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

- **Պետական գրանցման վկայական**
- **Դպրոցի կանոնադրություն**
- **Լիցենզիա**

- Դպրոցի զարգացման ծրագիր
- Առարկայական ծրագրեր
- Ներքին կարգապահական կանոններ
- Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան (թղթային և էլեկտրոնային)
- Դպրոցի շենքի սեփականության վկայական
- Սովորողների շարժի մատյան
- Սովորողների անձնական գործ (թղթային և էլեկտրոնային)
- Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան 12. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
- Աշխատողների հրամանագիրք
- Աշակերտների հրամանագիրք
- Աշխատողի անձնական գործ(թղթային և էլեկտրոնային)
- Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդմիավորումների,ծնողական, աշակերտական,խորհուրդների արձանագրությունների մատյաններ
- Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ (թղթային և էլեկտրոնային)
- Հաստիքացուցակ (թղթային և էլեկտրոնային)
- Տարիֆիկացիոն ցուցակ(թղթային և էլեկտրոնային)
- Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան:

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են ՝ համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատուները:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

ՀՀ Սահմանադրություն

https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723

ՀՀ օրենքներ՝

- *<<Հանրակրթության մասին>>*
  *https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908*
- *, <<Կրթության մասին>>,*
  *https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299*
- *<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>,*
- *<< Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>,*
  *https://www.arlis.am/documentview.aspx?docid=51750*
- *<< Լեզվի մասին>>,*
  *https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418*
- *<< Ստանդարտացման մասին>>*

- ***https://www.arlis.am/documentview.aspx?docid=74337***
- ***<< Երեխաների իրավունքների մասին>>***

  ***https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115***
- ***<< Լիցենզավորման մասին>>***

  ***https://www.arlis.am/documentview.aspx?docid=73268***
- ***ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքով>>,***

  ***http://www.irtek.am/views/act.aspx?tid=176124***
- ***ուսումնական հաստատության կանոնադրությամբ*** **և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով :**

  **https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139**

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային անձնական ոչ գույքային իրավունքներ, պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի եւ իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր, ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ:

## ***1.1 Հաստատության առաքելության***

*Առաքելությունը կամ փեսլականը  կազմակերպության  ցանկալի  ապագայի  մփապափկերն  է:*

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ մտածելակերպով սերունդ առողջ քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ կրթական բարենպաստ միջավայրում իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ պետական ու հասարակական վերաբերմունքի ճշգրտման, որպեսզի այն վերաճի այնպիսի կրթական հաստատության, որտեղ ուսուցման արդյունավետության կատարելագործումը կդիտվի որպես դպրոցի զարգացման գրավական: Մեր կրթական ոլորտը

կուղորդվի դեպի գիտելիքների տնտեսություն և կապահովի մեր համակարգի տեղը գիտելիքների տնտեսության ոլորտում մրցակցող այլ երկրների կրթական համակարգերի շարքում:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. հուլիսի 15-ի N814-Ա/Ք հրամանի տրված լիցենզիաների՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70014 (emis-ում կատարվել է N814-Ա/Ք հրամանով հատկացված տեղերի փոփոխություն՝ տար. 65 տեղը փոխարինելով 68, հիմնական 92 տեղը՝ 95-ով ) ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿն ըստ լիցենզիայի իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական հանրակրթական՝ սերիա՝ N 0331 , 68 տեղ,
- Հիմնական հանրակրթական՝ սերիա N 0326 , 95 տեղ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0331

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց N 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Տարրական** հանրակրթական
(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ
(ստորագրությունը)

*Ա. Աշոտյան*
(անունը, ազգանունը)

Կ.Տ. « 15 » *հուլիսի* 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական

(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0326

Սույնով վավերացվում է, որ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց N 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53

(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53

(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

Հիմնական հանրակրթական

(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ _______ Ա. Աշոտյան

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

## 1.1 Դպրոցի առաքելությունը բավարարելու է հետևյալ կրթական կարիքները.

- ***Ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը:***
- ***Սովորողներին տալ ազգային հենքի վրա փարրական և հիմնական որակյալ կրթություն ՝ նրանց մեջ ձևավորելով կոմպետենտ քաղաքացիներ , որոնք օժտված կլինեն անհրաժեշտ գիտելիքներով , հմտություններով, դիրքորոշմամբ:***
- ***Դպրոցում ավանդական դասից անցում կատարել կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասերի:***
- ***Սովորողների մեջ ձևավորել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացի , որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ-մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:***
- ***Պահպանել սովորողների և մարդկային արժանապատվությունը:***
- **Սովորողի մեջ զարգացնել համակեցության, հանդուրժողականության, համագործակցության, ազգային դաստիարակության՝ պետական մտածելակերպ, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժվարությունների դիմակայելու պատրաստ, որակներ ունեցող մարդու ձևավորում:**
- ***Կերտել հստակ արժեհամակարգ ունեցող և գիտելիքներով զինված մարդ:***
- ***Սովորողների համար ստեղծել կրթական միջավայր, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:***
- ***Շարունակաբար ավելացնել ՏՀՏ-ի դերը կրթության համակարգում:***

- ★ *Հանրակրթությունը դպրոցում իրականացնել սովորողների փարիքային զարգացման մակարդակին համապատասխան:*
- ★ *Ապահովել հիմնական կրթության հասանելիությունը յուրաքանչյուր անձի համար՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից՝ հարամարեցնելով կրթական ծրագրերը, իրականացնելով տարբերակված ուսուցում և անհատական ուսուցման պլանավորում:*
- ★ *Սովորողների համար ստեղծել համապատասխան հարմարեցված միջավայր՝ ըստ իրենց ընդունակություններին, կարողություններին և առողջությանը, և ապահովել կրթություն իրենց առանձնահատկություններին համարժեք:*
- ★ *Դպրոցի ներառական կրթական միջավայրի ստեղծումով նպաստել ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) ներգրավվածությանը իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացում:*
- ★ *Սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն. մեդիագրագետ, համարձակ երազող, սեփական տեսակետը բարձրաձայնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու, ինքնուրույն կյանքին պատրաստ անհատ:*
- ★ *Կիրառել կրթության և արվեստի ներգործության ուժը սովորողների առողջական, հոգեբանական խնդիրները հաղթահարելու գործում:*
- ★ *Սովորողների մոտ ձևավորել իրենց շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:*
- ★ *Նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:*
- ★ *Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:*
- ★ *Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ սովորողը կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:*

- ***Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոց:***
- ***Սովորողին ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:***
- ***Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:***
- ***Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակություն:***
- ***Սովորողներին հմտացնել նախագծային ուսուցման մեջ:***
- ***Պահպանել սովորողների ու աշխատակազմի համար ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը,կազմակերպելով առողջության պահպանման և ամրապնդման համար միջոցառումներ:***
- ***Նպատակային ուսուցողական ծրագրեր իրականացնելու միջոցով սովորողների շրջանում ձևավորել անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ (այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին տիրապետում, ուսումնական վարժանքների իրականացում):***
- ***Բարձրացնել սովորողների իրավագիտակցությունը:***
- ***Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը (Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ):***
- ***Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ ձևավորել:***
- ***Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան դպրոցում ծավալել աշակերտական խորհրդի գործունեություն,,որի ներկայացրած առաջարկություններն արտացոլելու են սովորողների կարիքները՝***

*փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության պայմաններում:*

- ★ *Ապահովել սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը, նրանց մասնակցությունը մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին, մարզական և մշակութային մրցույթներին մասնակցությունը:*
- ★ *Մանկավարժական կազմի մասնագիտական չափանիշների կատարելագործման միջոցառումներ իրականացնել (վերապատրաստումներ, ատեստավորումներ՝ այդ թվում ներառական կրթության թեմաներով):*
- ★ *Սովորողների մոտ ձևավորել և զարգացնել հետևյալ կարողունակությունները՝*

1. *Խնդիրների համալիր լուծման,*
2. *Քննադատական մտածողության,*
3. *Ստեղծարարության,*
4. *Մարդկային ռեսուրսների կառավարման,*
5. *Փոխգործակցություն մյուսների հետ,*
6. *Հուզական բանականության,*
7. *Վերլուծություններ և որոշումների ընդունման,*
8. *Մասնագիտական կողմնորոշման,*
9. *Բանակցելու,*
10. *Քաղաքացիական պատասխանատվության,*
11. *Սոցիալական ձեռներեցության,*

***12. Ժամանակի կառավարման,***

***13. Փոփոխություններին ադապտացվելու ճկունության:***

Վերոնշյալ կոմպետենտցիաները կարևոր դեր ունեն սովորողների մեջ որակյալ, հասարակությանը և երկրին պիտանի քաղաքացու ձևավորման և, հետագայում նաև, որպես որակյալ աշխատողների կայացման գործում: Ուստի այս հատկանիշները սովորողների կրթության և ուսումնառության հիմքում պետք է դիտարկել ոչ որպես ցանկություն, այլ՝ որպես կենսական անհրաժեշտություն:

Դպրոցի առաքելությունը նաև բարենպաստ կրթական միջավայրի ապահովման միջոցով, ազգային հենքի վրա, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որի լիարժեք իրականացումը պայմանավորված է տարբեր ոլորտների՝ *դպրոցի կառավարման, ուսումնադասփիարակչական աշխապանքների, հասպապության վարչապնդպեսական գործառույթների,* աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ:

***Դպրոցի կառավարմանը*** *մասնակցում են բոլոր նրանք, ովքեր պապասխանապվություն են կրում սպանձնած գործի նկապմամբ և ապահովում ու վերահսկում են ուսումնական հասպապության կողմից իր գործունեության իրականացումը:*

***Հանրակրթական դպրոցի կառավարման մարմիններն են՝***

*1) հիմնադիրը.*

*2) նախարարությունը.*

*3) պարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապեպը.*

*4) խորհուրդը.*

*5) հանրակրթական դպրոցի տնօրենը:*

[www.arlis.am/documentview.aspx?docid=59769](http://www.arlis.am/documentview.aspx?docid=59769)

**Ներդպրոցական կառավարման համակարգն իրականացնում է՝**

- Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի գործունեության կազմակերպումը,
- Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը,
- Դպրոցում պարտականությունների բաշխումը,
- Դպրոցի տնօրենի, փոխտնօրենների, դասղեկի գործառույթներ,
- Դպրոցի համագործակցությունը միջավայրի, ծնողների հետ,
- <<Դժվար>> դաստիարակվողների հետ տարվող աշխատանքների կազմակերպում,
- Դպրոցի գործունեություն:

*Ներդպրոցական ղեկավարության էությունն ու արդյունավետությունն ապահովվում է ուսուցման բոլոր ներքոհիշյալ օղակների ճշգրիտ և փոխկապակցված աշխատանքով.*

***1. Դպրոցի կառավարման խորհուրդը, դպրոցի մանկավարժական խորհուրդը և տնօրենը***

***2. Դպրոցի փոխտնօրենները և կազմակերպիչը***

***3. Ուսուցիչների մեթոդական միավորումները***

***4. Ուսուցիչները, դասղեկները***

***5. Ծնողական խորհուրդը***

***6. Աշակերտական խորհուրդը***

Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը :

Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է հաստատությունում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա

***__Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.__***

Դպրոցի ուսուցման լեզուն գրական հայերենն է: Դպրոցի ուսումնական գործընթացն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Նախարարի N54-Ն 20.07.2021թ.հրամանով հաստատած օրինակելի ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով: https://escs.am/am/news/9309, իսկ այժմ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27 հուլիսի 2023 թվականի N 98-Ն հրամանով հաստատած օրինակելի ուսումնական պլանով https://escs.am/am/news/17547

- Հաստատությունում ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացվում է սովորողների առաջադիմության տվյալների, անցկացվող ընթացիկ, ամփոփիչ և արտաքին գնահատումների, կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները՝ ամեն տարի ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերանայելով մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները.

- Հաստատությունն ապահովվում է ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին (մարդկային, ժամանակային, նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար.
- Հաստատությունում գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար

Ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրատեսական դարձնելու գրավականներն են՝ կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումները, սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ, կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը, համայնքային պատասխանատվությամբ գործունեությունը դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում, արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն), դպրոցում ձևավորված ավանդույթները, խրախուսման միջոցները, սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին և այլն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելիս նաև  պետք է հնարավորինս բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝  լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերություններին: Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ: ՈՒսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն

նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և օրինակելի դասերի միջոցով : ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը:

«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի» պահանջին համապատասխան յուրաքանչյուր դպրոց պետք է իրականացնի երկարօրյա ուսուցում:

Ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական ծրագրերը ներառում են երկարօրյա խմբի սովորողների սննդի, հանգստի, դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարօրյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաև դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական և միջին դպրոց):
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր:
- Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր:

***<u>Հասպապության վարչապնտեսական գործառույթների</u>*** *հիմնական ուղղություններն են՝ հաշվապահություն, գնումների գործընթաց. պայմանագիր, սննդի կազմակերպում, սանիտարահիգիենիկ վիճակի ապահովում, անվտանգության տեխնիկայի*

*ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում, որը ևս ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը:*

## ***1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին***

- Դպրոցը, համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին , իր գործունեությունը իրականացնում է որպես համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող ժամանակակից դպրոց՝ բոլորի համար: Համայնքի հետ ակտիվ համագործակցելով՝ դպրոցը սովորողների համար ապահովում է այնպիսի կրթական միջավայր, որտեղ սովորում և կարող են սովորել ու իրենց ընդունակություններն առավելապես դրսևորել բոլոր աշակերտները:
- Դպրոցը կրթությունն իրականացնում է ելնելով՝

1. Սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին համապատասխան,
2. Ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ,
3. Հայրենասիրական դաստիարակությամբ ,
4. ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրմամբ ,
5. Համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան,
6. Շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան,
7. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատմամբ՝ գործունեության վերլուծությամբ:

- Դպրոցի գործունեությունը հանրամատչելի է և թափանցիկ ՝ ապահովոլով ժողովրդավարական կառավարման սկզբունքները:
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է համայնքի հետ համագործակցությամբ (համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածություն և նրանց մասնակցությունը համայնքային աշխատանքներին,համայնքի բնակիչների համար միջոցառումների կազմակերպում,շաբաթօրյակների կազմակերպում,ծառատունկ և այլն):
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության թափանցիկ ծրագրերի իրականացմամբ:
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների իրականացմամբ (էքսկուրսիաներ, սեմինարներ, քննարկումներ, կինոնկարների դիտում, զրույցներ համայնքի պատմամշակութային և արժեքավոր վայրերի ճանաչման և պահպանման շուրջ ):
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է կրթական գործընթացում բոլոր շահառուների ՝ սովորողների, ծնողների, մանկավարժական և վարչական աշխատողների, խորհրդի և խորհրդակցական մարմինների, ՀՀ ԿԳՄՍ

նախարարության ,պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,գործատուների, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների,համայնքային մասնակցությամբ:

## ***1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին / դահլիճներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, առարկայական կաբինետներ, ճաշարան,բուժկետ և այլն/ , մարդկային ռեսուրսներին և ներուժին***

*Ըստ <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի՝*

- *Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան,որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, գիտաարտադրական գործունեության եւ կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվում եւ զարգացվում է բյուջետային, ինչպես նաեւ սեփական միջոցների հաշվին՝ կրթության զարգացման պետական ծրագրի եւ ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի հիման վրա:*

- *Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ եւ սարքավորումներ, համակարգչային դասարաններ:*

**Դպրոցն ունի՝**

***Շենքային պայմանները***

| Շենքային պայմանները | Քանակը | Մակերես՝ քառ.մետր | Փաստացի վիճակը / լավ, գերազանց, բավարար/ |
|---|---|---|---|
| Տնօրենի կաբինետ | 1 | 15 | լավ |
| ուսուցչանոց | 1 | 35 | լավ |
| դասասենյակներ | 9 | 31,5 | բավ. |
| հոգեբանի սենյակ | 1 | 15 | բավ. |

| | | | |
|---|---|---|---|
| առարկայական սենյակներ/ շախմատ,…/ | 3 | 15, 15, 20 | բավ. |
| ՆԶՊ դասասենյակ | 1 | 30 | բավ. |
| զինասենյակ | 1 | 6 | լավ |
| <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա | 1 | 30 | լավ |
| համակարգչային սենյակ | 1 | 32 | բավ. |
| հաշվապահի սենյակ | 1 | 15 | բավ. |
| ճաշարան | 1 | 45 | լավ |
| խոհանոց | 1 | 10 | լավ |
| բուժսենյակ/ բուժկետ | 1 | 10 | բավ. |
| գրադարան | 1 | 30 | լավ |
| արհեստանոց | 1 | 39 | բավ. |
| մարզադահլիճ | 1 | 218 | բավ. |

| | | | |
|---|---|---|---|
| հանդերձասրահ | 2 | 20 | բավ. |
| սանհանգույց՝ նախատեսված տղաների և աղջիկների համար | 4-ը՝ աղջիկների, 4-ը՝ տղաների համար | 22 | բավ. |
| պահակակետ | 1 | 6 | բավ. |
| կաթսայատուն | 1 | 32 | բավ. |


ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Համար | Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակը | Մակերեսը (մ2) | Ծավալը (մ3) | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Շենք(եր) | 1 | 2080 | 6240 | |
| 2 | Առանձնասենյակներ | 9 | 128 | 384 | |
| 3 | Դասարաններ | 9 | 315 | 945 | |
| 4 | Առարկայական լսարաններ | 3 | 51 | 153 | |
| 5 | Լաբորատորիաներ | 1 | 18 | 54 | |
| 6 | Արհեստանոցներ | 1 | 39 | 117 | |
| 7 | Մարզադահլիճներ | 1 | 216 | 1296 | |
| 8 | Գրադարան(ներ) | 1 | 30 | 90 | |
| 9 | Բուժկետ | 1 | 20 | 60 | |
| 10 | Ճաշարան | 1 | 54 | 162 | |
| 11 | Հանդերձարան(ներ) | 2 | 20 | 60 | |
| 12 | Զուգարան(ներ) | 8 | 22 | 66 | |
| 13 | Տեխնիկական նշանակության այլ սենյակներ | | 578,338 | | |
| 14 | Մարզահրապարակ(ներ) | 2 | | | |
| 15 | Հանրակացարաններ | 0 | | | |
| 16 | Ննջասենյակներ | 0 | | | |
| 17 | Համակարգիչներ | 11 | | | |
| 18 | Համակարգչային այլ տեխնիկա | 3 | | | |
| 19 | Հեռախոսներ | 1 | | | |
| 20 | Ջեռուցվող տարածքներ | | 2296 | | |
| 21 | Ջեռուցման տեսակը | [illegible] | 32 | | |
| 22 | Ջեռուցման օրերը | 150 | | | |
| 23 | Տրանսպորտային միջոցներ | 0 | | | |
| 24 | Լոգապատ սովորողներ | 0 | | | |
| 25 | Երեւեթեկ սովորողներ | 0 | | | |
| 26 | Գիշերող սովորողներ | 0 | | | |
| 27 | Մրգատու այգիներ | 0 | | | |
| 28 | Դեկորատիվ, բուսական այգիներ | 0 | | | |
| 29 | Շենքերի ներսի մաքրվող մակերեսներ | | 1827 | | |
| 30 | Շենքերի դրսի մաքրվող մակերեսներ | | 3791 | | |
| 31 | Սան. հանգույցների մաքրվող մակերեսներ | 2 | 12 | 36 | |
| 32 | | | | | |
| 33 | | | | | |
| 34 | | | | | |
| 35 | | | | | |
| 36 | | | | | |
| 37 | | | | | |
| 38 | | | | | |
| 39 | | | | | |
| 40 | | | | | |

***Նյութատեխնիկական բազան***

| Անվանում | Քանակ /հատ/ | Փաստացի վիճակը / լավ, գերազանց, |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | | բավարար/ |
| DVD նվագարկիչ | 1 | բավ. |
| XEROX սարք | 2 | լավ |
| Աշակերտական աթոռ | 210+105 | բավ. |
| Աթոռ սրահների համար / ուսուցչանոցի/ | 12 | բավ. |
| Անխափան սնուցման սարք UPS | 5 | բավ. |
| Աշակերտական սեղան ֆիզիկայի լաբորատորիայի համար | 1 | լավ |
| Աշակերտական սեղան-նստարան | 30 | բավ. |
| Աշակերտական սեղան-աթոռի կոմպլեկտ | 62 | բավ. |
| Բազմոց | 2 | բավ. |

| | | |
|---|---|---|
| Գրապահարան | 2 | բավ. |
| Գրատախտակ | 16 | բավ. |
| Գրատախտակ սպիտակ | 1 | բավ. |
| Գրադարանի գեղարվեստական գրքեր | 1750 | բավ. |
| Դաշնամուր | 1 | բավ. |
| Դարակաշար միակողմ գրադարանի համար | 2 | բավ. |
| Էլեկտրական սալօջախ | 1 | գերազանց |
| Էլեկտրական վառարան | 1 | գերազանց |
| Թենիսի սեղան | 1 | լավ |
| Թեքահարթակ դրսում | 2 | բավ. |
| Լվացարան | 6 | բավ. |
| Լվացարան 2 տեղանի՝ խոհանոցի | 1 | գերազանց |

| | | |
|---|---|---|
| Խաղային քառակուսի սեղան | 4 | բավ. |
| Խոհանոցային դարակաշար մետաղյա շրջանակով | 2 | գերազանց |
| Խոհանոցային սեղան | 1 | գերազանց |
| Կահույք փափուկ (բազմոց) | 2 | բավ. |
| Կամրջակ | 2 | բավ. |
| Կշեռք | 1 | գերազանց |
| Կրակմարիչ | 2 | բավ. |
| Հագուստի պահարան մանկական | 4 | բավ. |
| Հակահրդեհային վահանակ | 1 | բավ. |
| Համակարգիչ | 11 | 3-ը՝ բավ.<br>8-ը՝ անսարք |
| Հայտարարությունների տախտակ | 1 | բավ. |

| | | |
|---|---|---|
| ՀՀ դրոշ | 1 | լավ |
| Ճաշասեղան | 1 | բավ. |
| Մարզանստարան | 2 | բավ. |
| Մարզապատ | 5 | բավ. |
| Մեծ այծիկ | 1 | բավ. |
| Նստարան բակի | 1 | լավ |
| Շախմատի գույք | 12 | բավ. |
| Շախմատի սեղան | 4 | բավ. |
| Ուսուցչի աթոռ | 12 | բավ. |
| Ուսուցչի սեղան | 18 | բավ. |
| Չիրկիզվող պահարան | 1 | բավ. |
| Պահարան | 8 | բավ. |

| | | |
|---|---|---|
| Քիմիական ապակեղենի պահարան | 1 | բավ. |
| Պահարան առաջին օգնության դեղամիջոցների | 1 | բավ. |
| Պատի հայելի | 2 | լավ |
| Պլանշետ | 49 | լավ |
| Ջրատաքացուցիչ | 1 | գերազանց |
| Սալօջախ էլեկտրական | 1 | գերազանց |
| Սառնարան | 1 | գերազանց |
| Սեղան տնօրենի կաբինետի | 1 | լավ |
| Սկաներ | 2 | բավ. |
| Սպասքի ընդունման սեղան | 1 | լավ |
| Տեսապրոյեկտոր | 1 | բավ. |
| Տպիչ | 3 | բավ. |

| | | |
|---|---|---|
| Ցուցադրական սեղան ֆիզիկայի | 1 | լավ |
| Ցուցադրական ստենդ ՆԶՊ | 1 | լավ |
| Փոքր այծիկ | 2 | բավ. |
| Ջանգահարող սարք | 1 | բավ. |
| Լաբորատոր գույք | 2 | բավ. |
| Ջեռուցման համակարգ | 1 | բավ. |

***<u>Առկա կրթական ռեսուրսներ են՝</u>***

- ❖ Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել բոլորը՝ այդ թվում նաև օժտված և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
- ❖ Սովորողի կրթական կարիքի գնահատում,
- ❖ Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
- ❖ Համայնքի հետ համագործակցություն ,
- ❖ Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք համագործակցությամբ,
- ❖ Աշակերտների մտավոր զարգացման բավարար պայմաններ,

- Սովորողների արժեհամակարգի ձևավորում,
- Փորձառու մանկավարժական համակազմ,
- Մեթոդմիավորումների համակցված աշխատանք,
- Խորհրդակցական մարմինների աշխատանքը
- Դրական հոգեբանական միջավայրը,
- Մասնակցային և համագործակցային աշխատանք,
- Համընդհանուր ներառական կրթության իրականացում :

***Մարդկային ռեսուրսներ և ներուժ***

Մարդկային ռեսուրսները մարդկանց աշխատունակ մասն են, որոնք իրենց հոգեֆիզիոլոգիական և ինտելեկտուալ որակների շնորհիվ մատուցում են ծառայություններ՝ տվյալ դեպքում կրթական ծառայություններ:

Մարդկային ներուժը աշխատանքային ռեսուրս է դառնում միայն այն դեպքում, երբ այն ներառվում է սոցիալական արտադրության համակարգում:

<u>ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչների քանակական և որակական ցուցանիշներն են՝</u>

| Ուս. տարիներ | 2018-2019 | | 2019-2020 | | 2020-2021 | | 2021-2022 | | 2022-2023 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը |
| | 19 | 14,32 | 19 | 14,32 | 17 | 16,00 | 17 | 16,00 | 17 | 16,00 |

***Ուսուցիչների քանակական ցուցանիշներն են՝***

| Ուսուցիչների տարիքային կազմ | Մինչև 30 տարեկան | 31-40 տարեկան | 41-50 տարեկան | 51-60 տարեկան | 61 և ավելի |
|---|---|---|---|---|---|
| Թիվ | 3 | 3 | 5 | 5 | 1 |

| | 1-5 տարի | 6-15 տարի | 16 և ավելի տարիներ |
|---|---|---|---|
| Ուսուցիչների թիվն ըստ աշխատային փորձի | 4 | 1 | 12 |



| Համար | Ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | Ծննդյան թիվը | Պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | [illegible] | 1981 | [illegible] |
| 2 | [illegible] | 1978 | [illegible] |
| 3 | [illegible] | 1965 | [illegible] |
| 4 | [illegible] | 1983 | [illegible] |
| 5 | [illegible] | 1971 | [illegible] |
| 6 | [illegible] | 1965 | [illegible] |
| 7 | [illegible] | 1959 | [illegible] |
| 8 | [illegible] | 1966 | [illegible] |
| 9 | | | [illegible] |

<u>**Վարչական աշխատողներ՝**</u>

Տնօրեն-1

Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով-1

Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակց. գծով-1

***<u>ՈՒսուցիչ</u>* -17**

***<u>Դասփիարակչական աշխապանքների կազմակերպիչ</u>* - 1**

**<u>Սպասարկող անձնակազմ</u>**

Լաբորանտ -1

Գրադարանավար-1

ՈՒսուցչի օգնական -1

Հոգեբան - 1

**<u>Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ</u>**

Հաշվապահ-1

Գործավար-1

Համակարգչի օպերատոր- 1

Հավաքարար - 2

Պահակ-3

Կաթսայատան հնոցապան / սեզոնային /- 3

***Ուսուցիչների որակական ցուցանիշներն են՝***

1. Տարակարգ ունեցող ուսուցիչներ- 0
2. Կամավոր ատեստավորված ուսուցիչներ-0
3. Վերապատրաստում անցած ուսուցիչներ-16
4. Վերապատրաստող ուսուցիչներ -0
5. Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ-2
6. Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ-16
7. Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ-1

**<u>Դպրոցի սովորողների մասին տեղեկություն.</u>**

2022-2023 ուսումնական տարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, որտեղ սովորում են 110 աշակերտ՝

տարրական դպրոց —57 աշակերտ (4 դասարան) ,

միջին դպրոց — 53 աշակերտ (5 դասարան)

1-ին դասարան- 13 աշակերտ

2-րդ դասարան- 16 աշակերտ

3-րդ դասարան- 14 աշակերտ

4-րդ դասարան- 14 աշակերտ

5-րդ դասարան-   8 աշակերտ

6-րդ դասարան-   9 աշակերտ

7-րդ դասարան-  14 աշակերտ

8-րդ դասարան-   9 աշակերտ

9-րդ դասարան-  13աշակերտ

Դպրոցին կից նախակրթարան չի գործում :

**<u>Սովորողների թիվը և առաջադիմությունն ըստ ուսումնական տարիների (բացառությամբ ԿԱՊԿՈՒ)</u>**

| Տարեթիվ | Սովորողների թիվը | Գերազանց սովորողներ | Լավ սովորողներ | Բավարար սովորողներ | Առաջադիմության որակ | ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 2018-2019 | 118 | 23 | 40 | 55 | 100/50 | 4 |
| 2019-2020. | 120 | 24 | 31 | 65 | 87/46 | 3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2020-2021 | 113 | 28 | 32 | 53 | 100/53 | 1 |
| 2021-2022 | 113 | 25 | 35 | 53 | 100/53 | 1 |
| 2022-2023 | 110 | 29 | 35 | 46 | 109/59 | 1 |

**Մարզային,հանրապետական օլիմպիադաներում ու մարզական,մշակութային մրցույթներին սովորողների մասնակցությունը 2021-2022, 2022-2023 ուստարիների ընթացքում :**

| Ցուցանիշ | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 5 | 7 |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 1 |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների | 0 | 1 |

| | | |
|---|---|---|
| մասնակիցների թիվը և տոկոսը | | |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 0 |
| Մարզային և հանրապետկան մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը | 0 | 2 |

***<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>***

**Դպրոցի բյուջեի ծախսերը 2022-2023 թթ.՝**

01.01.2022 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **<u>1.457,600</u>** **<u>դրամ</u>**, 2022 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 43.187,500 **<u>դրամ</u>**, ընդամենը՝ 2022 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **<u>44.645,100 դրամ:</u>**

| 2022թ. | Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/ | Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/ |
|---|---|---|
| Տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | |

| | | |
|---|---|---|
| Աշխատողների աշխատավարձեր | 38 317 .8 | 38 287. 6 |
| Տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճար | 0 | 0 |
| Էլեկտրաէներգիայի ծախսեր | 800.0 | 700.0 |
| Գազի ծախս | 1 101.5 | 1 011.9 |
| Աղբահանության ծախս | 53.2 | 53.2 |
| Ջրամատակարարման և ջրահեռացման ծախս | 130.0 | 118.5 |
| Կապ և ինտերնետ | 127.0 | 99 .5 |
| Տեղեկատվական ծառայություններ | 15.0 | 13.0 |
| Գազի տեխսպասարկում և անվտանգություն | 55.0 | 54.7 |

| | | |
|---|---|---|
| Հրդեհային անվտանգության ծառայություն | 20.3 | 20.3 |
| Ախտահանման աշխատանքների ծախս | 0 | 0 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 130.0 | 115.2 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1 207.2 | 1 156.2 |
| Այլ նպաստներ բյուջեից/դասագրքերի վարձավճար/ | 34.6 | 34.6 |
| Համակարգչային ծառայություններ/ՀԾ/ | 0 | 0 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 55.0 | 54.3 |
| Էլեկտրոնային ստորագրություն | 3.0 | 3.0 |
| Պարտադիր վճարներ | 80.0 | 37.5 |
| Այլ ծախսեր | 450.0 | 382.9 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | 44 645.1 | 44 176.0 |
| Մնացորդ | 0 | 469. 2 |

**<u>18. Դպրոցի բյուջետային միջոցների ծախսերը՝ դրամային արտահայտությամբ. 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 8 ամսվա համար</u>**

01.01.2023 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **<u>469.200 դրամ</u>**, 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ կատարվել է 8 ամսվա համար՝ **<u>28829000 դրամ,</u>** ընդամենը՝ 2023 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **<u>29298200 դրամ :</u>**

| | | |
|---|---|---|
| Նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը | 0 | 0 |
| Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | 0 | 0 |
| Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը | 0 | 0 |
| Աշխատավարձերի վճարման գծով տարեկան ծախսերի չափը | 26 000.0 | 16 822.5 |

| | | |
|---|---|---|
| Կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափը | 1 630.0 | 1 506.7 |
| Նոր գույքի,սարքավորումների ձեռք բերման գծով տարեկան ծախսերի չափը | 0 | 0 |

***<u>Ուսումնական հաստատության 2022-2023 ուսումնական տարվա  տարիֆիկացիոն ցուցակ</u>***

Քննարկվել և համաձայնության է արժանացել ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից

Խորհրդի նախագահ՝ [illegible]

« 03 » 01 2023 թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ [illegible]

« 31 » 01 2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՖԻԿԱՑԻՈՆ ՑՈՒՑԱԿ

(աշխատավարձերի հաշվառման մատյան)

« 20 22 - 20 23 » ուսումնական տարի

[illegible]

Տարիֆիկացիոն հանձնաժողով

նախագահ՝ [illegible]

անդամներ՝ [illegible]

| Հերթական համար | Ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական անձնակազմը — Ազգանունը, անունը, հայրանունը | Սեռը | Ծննդյան տարեթիվը | Ինչ ուսումնական հաստատություն է ավարտել / դիպլոմի (վկայականի) համարը | Մասնագիտությունը | Ի՞նչ առարկա է դասավանդում * (7-10, 12 և 29-30-րդ կետերի պարզաբանումները տես վերջին էջում) | [illegible] | Մանկավ. [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | [illegible] | ի | 1958 | [illegible] դիպլոմ թիվ AW001658 | ֆիզիկա | [illegible] | 03.10.81 հր.570 | 42 42 | |
| 2. | [illegible] | ի | 1961 | [illegible] դիպլոմ թիվ AW021201 | ֆիզիկա | [illegible] | 01.09.94 հր.269 | 26 34 | |
| 3. | [illegible] | ի | 1961 | [illegible] դիպլոմ թիվ ՀCB 008971 | [illegible] ֆիզիկա | [illegible] | 20.08.83 հր.1142 | 37 42 | |
| 4. | [illegible] | ի | 1993 | [illegible] դիպլոմ թիվ AB 208545 | [illegible] | [illegible] | 17.08.20 հր.028 | 2 2 | |
| 5. | [illegible] | ի | 1975 | [illegible] դիպլոմ թիվ AO 35698 | [illegible] | [illegible] | 01.09.97 հր 395 | 23 28 | |
| 6. | [illegible] | ի | 1973 | [illegible] դիպլոմ թիվ AW 023568 | [illegible] | [illegible] | 01.09.96 հր.352 | 24 30 | |
| 7. | [illegible] | ի | 1973 | [illegible] դիպլոմ թիվ AW023268 | [illegible] | [illegible] | 01.09.94 հր.19213 | 25 31 | |
| 8. | [illegible] | ի | 1990 | [illegible] դիպլոմ թիվ AB 122821 | [illegible] | [illegible] | 28.12.12 հր129 | 9 9 | |
| 9. | [illegible] | ի | 1975 | [illegible] դիպլոմ թիվ AO 35746 | [illegible] | [illegible] | 01.09.97 հր.394 | 23 27 | |
| 10. | [illegible] | ի | 1996 | [illegible] դիպլոմ թիվ AB 280394 | [illegible] | [illegible] | 17.08.20 հր.028 | 2 2 | |
| 11. | [illegible] | ի | 1958 | [illegible] դիպլոմ թիվ Г-1005122 | ֆիզիկա | [illegible] | 20.08.80 հր 339 | 39 43 | |
| 12. | [illegible] | ար | 1963 | [illegible] դիպլոմ թիվ AB003261 | [illegible] | [illegible] | 01.09.82 հր 449 | 38 38 | |
| 13. | [illegible] | ի | 1967 | [illegible] դիպլոմ թիվ ГВ-I063056 | [illegible] | [illegible] | 01.09.99 հր 443 | 32 37 | |
| 14. | [illegible] | ի | 1966 | [illegible] դիպլոմ թիվ ФB018545 | ֆիզիկա | [illegible] | 02.02.99 հր 43532 | 20 27 | |
| 15. | [illegible] | ի | 1992 | [illegible] դիպլոմ թիվ AB 190406 | [illegible] | [illegible] | 24.09.20 հր 043 | 2 2 | |
| 16. | [illegible] | ի | 1965 | [illegible] դիպլոմ թիվ AB008402 | [illegible] | [illegible] | 01.09.88 հր 474 | 34 34 | |
| 17. | [illegible] | ի | 1957 | [illegible] դիպլոմ թիվ ՀCB 008402 | [illegible] | [illegible] | 01.09.80 հր 6534 | 40 40 | |
| 18. | [illegible] | ի | 1966 | [illegible] դիպլոմ թիվ УB085276 | [illegible] | [illegible] | 01.09.93 հր 65 | 33 40 | |
| 19. | [illegible] | ի | 1987 | [illegible] դիպլոմ թիվ AB052691 | [illegible] | [illegible] | 19.02.18 հր 010 | 5 5 | |
| 20. | [illegible] | ի | 1967 | [illegible] դիպլոմ թիվ AW055799 | [illegible] | [illegible] | 02.02.98 հր 376 | 23 23 | |



| Հ/հ | Ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | Ծննդյան թիվը | Պաշտոնը | 5 | Ե՞րբ է ընդունվել աշխատանքի հրամանը, օրը, ամիսը, տարին | Կրթությունը | Դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | [illegible] | 1981 | հավաքարար | 18 | 16.07.20թ. հր.022 | բ | 1 |
| 2 | [illegible] | 1978 | լաբորանտ | 3 | 01.10.19թ. հր.042 | միջն. | 0,75 |
| 3 | [illegible] | 1965 | պահակ | 18 | 15.11.05թ. հր.157 | մ/մ | 1 |
| 4 | [illegible] | 1983 | [illegible] | 16 | 03.09.04թ. հր.2543 | բ | 1 |
| 5 | [illegible] | 1971 | հավաքարար | 26 | 02.05.05թ. հր.145 | միջն. | 0,75 |
| 6 | [illegible] | 1965 | հավաքարար | 16/34 | 01.02.05թ. հր.193 | մ/մ | 0,75 |
| 7 | [illegible] | 1959 | պահակ | 24 | 01.05.17թ. հր.17 | միջն. | 1 |
| 8 | [illegible] | 1966 | [illegible] | 12 | 01.04.19թ. հր.06 | միջն. | 0,75 |
| 9 | | | հավաքարար | | | | 1,75 |



| Հ/հ | Ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական անձնակազմը: Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյան թիվը | Կրթությունը | Ո՞ր ուսումնական հաստատությունն է ավարտել, դիպլոմի (վկայականի) համարը | Մասնագիտությունը | Պաշտոնը և ի՞նչ առարկա է դասավանդում | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 21 | [illegible] | 1976 | բ | [illegible], դիպլոմ թիվ 092067 | [illegible] | [illegible] և գրակ. | 03.03.21 հր.010 | | |
| 22 | [illegible] | 1976 | բ | [illegible], դիպլոմ թիվ AD 080868 | ԴԿԿ | [illegible] | 01.02.97 հր.376 | 23 23 | |
| 23 | [illegible] | 1985 | բ | [illegible], դիպլոմ թիվ A042483 | [illegible] | [illegible] | 22.09.08 հր.210 | 13 13 | |
| 24 | [illegible] | 1976 | բ | [illegible], դիպլոմ թիվ 042423 | [illegible] | [illegible] | 09.03.09 հր.223 | 11 16 | |
| 25 | [illegible] | 1991 | բ | [illegible], դիպլոմ թիվ AB 198839 | [illegible] | [illegible] | 01.09.22 հր.036 | 0 0 | |
| 26 | [illegible] | 1997 | բ | [illegible], դիպլոմ թիվ 274682 0197 | [illegible] | [illegible] | 09.09.21 հր.058 | 1 1 | |
| 27 | [illegible] | 1964 | մ/մ | [illegible], դիպլոմ թիվ N 17850 | [illegible] | [illegible] | 01.09.92 հր.361 | 26 28 | |
| 28 | * * * | | | դիպլոմ թիվ | | | | | |

**<u>Ուսումնական հաստատության տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակներն ու տվյալները.</u>**

| Հաստիքներ | Աշխատողների թիվը | Դրույքների թիվը | Ամսական աշխատավարձը / ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| Վարչական աշխատողներ | 3 | 2 | 357.000 |
| Մանկավարժներ | 17 | 12,4 | 1.539822 |
| Մանկավարժական հաստիքներ / զինղեկ մանկական կոլեկտիվի կազմակերպիչ սոց. մանկավարժ հոգեբան և այլն / | 7 | 4,5 | 498.417 |

| | | | |
|---|---|---|---|
| Հաշվապահ | 1 | 1 | 120.000 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | 7 | 8,25 | 788407 |
| Ընդամենը | 35 | 28,15 | 3.303.646 |

## 2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտներն են՝

1. **Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան**
2. **Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը**
3. **Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը, դրանց վարումը (դպրոցի կանոնադրություն,տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր)**
4. **Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները**
5. **Աշակերտական համակազմը**
6. **Մանկավարժական համակազմը**

7. **Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ**
8. **Ուսումնական միջավայրը**
9. **Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների**
10. **Տեխնոլոգիաները և նորարարությունները**

## *2.1Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան (Առկա վիճակը)*

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը հարմարեցված է , եռահարկ, շենքի ընդհանուր մակերեսը՝ 1827 ք.մ. , այգի՝ 3573 ք.մ. ,մարզադահլի՝ 218 ք.մ.,ընդհանուր տարածքը՝ 5400 ք.մ. ։ Շենքի նախագծային հզորությունը ՝163 աշակերտի համար:

Դպրոցի տարածքը ցանկապատված է, մեկուսացված ավտոճանապարհային երթևեկելի գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող օբյեկտներից, արտակարգ իրավիճակների պարագայում հատուկ նշանակության մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենք-շինություններին, տարածքը մաքուր է , իրականացվում են աղբահանության և ախտաբանական աշխատանքներ: Մասնաշենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր, միայն մուտքը ունի թեքահարթակ, դռները լայն են, տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն, առկա է տարհանման պլան: Տարհանման պլան-սխեմաները առկա են բոլոր հարկերում , սակայն փակցված չեն դասասենյակներում: Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է սահմանված նորմերին:

Դպրոցն ունի կենտրոնացված շուրջօրյա ջրամատակարարում, կենտրոնացված կոյուղացում, առկա է էլեկտրամատակարարում և գազամատակարարում:

Դպրոցն ունի առանձնացված շախմատի, ՆԶՊ և համակարգչային դասասենյակներ, գրադարան, հանդիսությունների դահլիճ, շինության ներքին հատվածներում / դրսից/ առկա են 2 թեքահարթակ: Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով:Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա՝ ՆԶՊ դասասենյակում, որտեղ հաճախում են տարբեր տարիքի սովորողներ:

Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական միջոցներն ու հաստատության ենթակառուցվածքների հնարավորությունները ցավոք բավականին աղքատ են և ունեն դրանց կառուցման, հիմնանորոգման ու համալրման կարիք: Դպրոցը չունի առարկայական կաբինետներ ու լաբորատորիաներ՝ քիմիայի, կենսաբանության / ֆիզիկայի լաբորատորիայի գույքը համալրման կարիք ունի/, արհեստանոցի գույքը ևս բավարար չէ լիարժեք կրթություն իրականացնելու համար, ճաշարանում կա սպասքի և գույքի (սեղաններ, աթոռների) պակաս, բուժկետը չունի անհրաժեշտ դեղորայքային և առաջին բուժօգնության համար նախատեսված միջոցներ, հանդիսությունների դահլիճը և սպորտդահլիճը ( առաստաղ, հատակ, պատերի ներկման), տանիքը, պատուհանները, դռները, դասասենյակները հիմնանորոգման և դպրոցն անհրաժեշտ գույքով ապահովման կարիք ունեն: Դպրոցը չունի սմարթ սենյակ, ընթերցասրահ, ԿԱՊԿՈՒ սովորողների համար առանձնացված սենյակ և անհրաժեշտ գույք, նաև ապաստարան կամ նկուղ: Սանհանգույցները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների համար (տեղադրված չեն բռնաձողեր): Դպրոցում չի գործում հրդեհաազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման, օդափոխության համակարգեր, վթարային լուսավորության համակարգը:

## *2.1.1Շենքային պայմանների վերլուծություն*

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Հաստատության շենքը կայուն է արտաքին վտանգների ազդեցությանը՝ ուժեղ քամիներ, սողանքներ,,հրդեհներ, և այլն:<br>➢ Տարհանման պլան-սխեման փակցված է միջանցքում: Տարհանման ուղիները բարեկարգ են:<br>➢ Դպրոցի տարածքը ցանկապատված է և | ➢ Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական միջոցներն ու հաստատության ենթակառուցվածքների հնարավորությունները ցավոք բավականին աղքատ են :<br>➢ Դպրոցի շենքը ընթացիկ վերանորոգման կարիք ունի, մասնավորապես՝ տանիքի, հին դռների և պատուհանների փոխարինում նորով (որը ջերմության ապահովման կարևոր գործոններից է), |

| | |
|---|---|
| վտանգ չի ներկայացնում սովորողների տեղաշարժի համար: Մեկուսացված է ավտոճանապարհային գոտուց,օդի աղտոտման աղբյուր հանդիսացող օբյեկտներից,<br>➢ Դպրոցն ունի մաքուր կանաչապատ տարածք:<br>➢ Շենքերում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:<br>➢ ԿԱՊԿՈՒ սովորողների համար թեքահարթակի առկայություն դպրոցի մուտքի կողմից<br>➢ Բոլոր հարկերում առկա են թվով 8 առանձնացված և վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար, որոնք ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով<br>➢ Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով, | ➢ Սանհանգույցները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների համար, սանհանգույցներում տեղադրված չեն բռնաձողեր,<br>➢ Սպորտդահլիճը հիմնանորոգման և կահավորման կարիք ունի (պատեր, առաստաղ, հատակ),<br>➢ Դպրոցի տանիքը ծառայում է որպես միջոցառումների դահլիճ, որն ունի վերանորոգման, կահավորման կարիք ( առաստաղ, հատակ, պատեր, բեմ )<br>➢ Դպրոցը չունի ընթերասրահ, առարկայական՝ քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ,<br>➢ Դասասենյակները հիմնանորոգման և դպրոցն անհրաժեշտ գույքով ապահովման կարիք ունի:<br>➢ Դպրոցը չունի SMART սենյակ,<br>➢ Դպրոցը չունի ընթերցասրահ,<br>➢ Դպրոցը չունի ԿԱՊԿՈՒ սովորողների համար առանձնացված սենյակ, ռեսուրս-կենտրոն, անհրաժեշտ գույք և դիդակտիկ պարագաներ,<br>➢ Դպրոցը չունի ապաստարան և նկուղ:<br>➢ Դպրոցը չունի հրաձգարան: |

| | |
|---|---|
| ➢ Դպրոցում առկա է ճաշարան, (խոհանոց, սննդի պահեստ) վերանորոգված է և համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին, ապահովված է համապատասխան նոր գույքով, սարքավորումներով( գազօջախ, սառնարան,էլեկտրական ջրատաքացուցիչ, չժանգոտվող մետաղյա դարակաշարեր և այլն), որը հնարավորություն է տալիս <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում 1-4 րդ դասարանների աշակերտներին ապահովել տաք սննդով:<br>➢ Առկա է բուժկետ և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն<br>➢ Դպրոցն ունի ընդարձակ սպորտդահլիճ,<br>➢ Դպրոցը ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով<br>➢ Դպրոցն ապահովված է ջրահեռացման | ➢ Դպրոցում չի գործում հրդեհաազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման, օդափոխության համակարգեր, վթարային լուսավորության համակարգը, անվտանգության համակարգ / տեսախցիկներ/ :<br>➢ Դպրոցը չունի բացօթյա սպորտդպրոց,<br>➢ Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգը հին է, որի հետևանքով ծախսը կրկնակի ավելին է լինում և դպրոցում չի ապահովում համապատասխան ջերմաստիճան:<br>➢ Դպրոցը չունի վեբ կայք, ֆեյսբուքյան էջ, որտեղ կլուսաբանվեր դպրոցի առօրյան:<br>➢ Դպրոցը չունի առարկայական կաբինետներ ու լաբորատորիաներ՝ քիմիայի, կենսաբանության /<br>➢ Դպրոցը չունի խաղահրապարակ կամ սովորողների համար նախատեսված հանգստի տարածք՝ թեպետ ունի մեծ տարածք:<br>➢ Դրոցը չունի ջերմոց:<br>➢ Դրոցը չունի բուֆետ: |

<table>
<tr><td>համակարգով,<br>➢ Դպրոցն , ապահովված է ՆԶՊ, շախմատի, համակարգչային դասասենյակներով, գրադարանով:<br>➢ Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա ՆԶՊ դասասենյակում, որտեղ հաճախում են տարբեր տարիքի սովորողներ:<br>➢ Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով:<br>➢ Դպրոցը ունի արհեստանոց:<br>➢ Դպրոցն ունի պահակակետի ծառայություն:<br>➢ Դպրոցի տարածքն ասֆալտապատ է:</td><td></td></tr>
<tr><td colspan="2">Անհրաժեշտ հղումներ՝<br>https://www.arlis.am/documentview.aspx?docid=119212<br>https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989<br>https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989</td></tr>
</table>

<table>
<tr><td>3.1 Նպատակներ</td><td colspan="6">Բարելավել դպրոցի շենքային պայմանները, ունենալ ժամանակակից գրականությամբ հարուստ գրադարան, նյութատեխնիկական պարագաներով զինված առարկայական դասասենյակներ և սպորտդահլիճ, բարեկարգել  բակ, խաղահրապարակ ու ապահովել կրթական անվտանգ միջավայր, շենքային պայմանները հարմարեցնել  սովորողների առանձնահատկություններին :</td></tr>
<tr><td>3.2 Խնդիրներ</td><td colspan="6">Շենքի վերանորոգում, հագեցված ընթերցասրահի, առարկայական դասասենյակի ստեղծում, ռեսուրս-սենյակի ստեղծում, ջերմոցի կառուցում, դպրոցի բակի բարեկարգում և խաղահրապարակի ստեղծում:</td></tr>
<tr><td>4.1 Գործողություններ ու միջոցառումներ</td><td>Վերանորոգել դպրոցը (դասասենյակներ, միջանցք,</td><td>Դպրոցում ստեղծել ընթերցասրահ՝ հագեցված նոր և</td><td>Դպրոցում ստեղծել առարկայական դասասենյակ</td><td>Սանհանգույցներից մեկը հարմարեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների</td><td>Դպրոցի բակում կառուցել ջերմոց:</td><td>Բարեկարգել դպրոցի բակը. այնտեղ տեղադրել նստարաններ, աղբամաններ և</td></tr>
</table>

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ) | ժամանակակից գրականությամբ: | ներ և լաբորատորիաներ: | առանձնահատկություններին, դպրոցում ստեղծել ռեսուրս-սենյակ : | | ստեղծել խաղահրապարակ: |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029 թթ. | 2024-2026թթ. | 2024-2027թթ | 2024-2025թթ | 2024-2028թթ | 2024-2025թթ |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հիմնադիր, ԿԳՄՍՆ լիազոր | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար, ՄԿԱ: | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, լաբորանտ: | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսվար, կառուցող | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսվար, համապատասխան | Տնօրեն, վարչական համակրգող, տնտեսվար, մանկավարժներ, աշխատանքում ներգրավված մասնագետներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մարմին, տնտեսվար, համապատասխան ոլորտի մասնագետներ: | | | մասնագետ, մանկավարժահոգեբանական աջակցության թիմ: | մասնագետներ: | |
| **6.1Ռիսկեր** | Ֆինանսական միջոցների սղություն:<br>Սովորողների և նրանց ծնողների վերոնշյալ գործողություններին մասնակցության պասիվություն: | | | | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Կազմել կրթական տարբեր նախագծեր ու ակտիվ մասնակցել դրամաշնորհային ծրագրերի մրցույթներին: Ստեղծել արտաբյուջե:<br>Կազմակերպել մոտիվացնող զրույցներ սովորողների և նրանց ծնողների հետ: | | | | | |

<table>
<tr>
<td rowspan="2">7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները</td>
<td colspan="5">Իրականացման ֆինանսական միջոցներն են պետբյուջեից և օրենքով չարգելվող այլ աղբյուրներից ստացվող ֆինանսավորում:<br>Վերոնշյալ գործողություններին մասնակից են դառնում ոչ միայն դպրոցի աշխատակիցները, այլ նաև սովորողները, նրանց ծնողները և համայնքի այլ շահագրգիռ անձիք:<br>Նյութատեխնիկական միջոցները կախված են կատարվող աշխատանքներից՝</td>
</tr>
<tr>
<td>Նոր պատուհաններ, դռներ, ներկեր, ներկելու գործիքներ, կախովի առաստաղ, հատակի համար անհրաժեշտ փայտ,</td>
<td>Նոր և ժամանակակից գրականություն, գրապահարաններ, պուֆիկներ, ռետինե գորգ, գրողների նկարներ:</td>
<td>Լաբորատոր գույք, մեթոդական դիդակտիկ նյութեր:</td>
<td>Սանհանգույցի կողքին տեղադրվող բռնակներ, ռեսուրս-սենյակի համար անհրաժեշտ գույք և պարագաներ:</td>
<td>Նստարաններ, աղբամաններ, ճոճեր, հնամաշ անվադողեր՝ բակի դեկորային դիզայնն ապահովելու, ինչպես նաև դրանցից խաղահրապարակի մարզագույք ստանալու համար:</td>
</tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պաստառներ, տանիք, այլ շինարարական գործիքներ և նյութեր: | | | | |

## <u>*2.1.2 Նյութապտեխնիկական բազան*</u>

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական բազայի՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Դպրոցում առկա է 11 համակարգիչ՝ ինտերնետ կապով, 3 տպիչ, 49 պլանշետ՝ լավ վիճակում: | ➢ .Դպրոցի գույքը՝ աշակերտական սեղաններ և աթոռներ, բավականին հնամաշ է, հիմնովին փոխման կարիք ունի, |

| | |
|---|---|
| ➢ Գրադարանը ապահովված է դասագրքերով, 1750 գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ:<br>➢ Դպրոցի մուտքերի մոտ կան թեքահարթակներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար:<br>➢ Ճաշարանն ապահովված է համապատասխան նոր գույքով, սարքավորումներով՝ գազօջախ, սառնարան,էլեկտրական ջրատաքացուցիչ, չժանգոտվող մետաղյա դարակաշարեր: | տարրական դասարաններում չի համապատասխանում ֆիզիոլոգիական առանձնահատկություններին:<br>➢ Դասասենյակները կահավորված չեն անհրաժեշտ ուսումնական բոլոր պարագաներով և դիդակտիկ նյութերով:<br>➢ ԿԱՊԿՈւ սովորողների ուսումնառության կազմակերպման համար չկա համապատասխան և անհրաժեշտ դիդակտիկ պարագաներ և խաղեր:<br>➢ Ուսուցչանոցում փափուկ կահույքի պահանջ կա:<br>➢ Համակարգիչներից 8-ը ֆիզիկապես մաշված է և չի աշխատում, դպրոցը չունի պրոյեկտոր, սմարթ գրատախտակ:<br>➢ Գրադարանային սենյակներում առկա չեն համակարգիչներ, էլեկտրոնային ռեսուրսների պակաս կա: Գրադրանավարության հատուկ համակարգչային ծրագրի բացակայություն:<br>➢ Դպրոցի գրադարանային ֆոնդը համալրել նոր գրականությամբ: |

- Դպրոցում ստեղծել նոր կահավորմամբ ընթերցասրահ:
- Ֆիզիկայի լաբորատորիայի գույքը համալրման կարիք ունի:
- Դպրոցի արհեստանոցի գույքը ևս բավարար չէ լիարժեք կրթություն իրականացնելու համար:
- Ճաշարանում կա սպասքի և գույքի / սեղաններ, աթոռներ/ պակաս:
- Բուժկետը չունի անհրաժեշտ դեղորայքային և առաջին բուժօգնության համար նախատեսված բոլոր միջոցները:
- .Դպրոցի տարածքում խաղերի համալրում:
- Սպորտդահլիճում սպորտային նոր գույքի պահանջ կա:
- Պահակակետում տեսախցիկների հսկողության բացակայություն :
- SMART գրատախտակների բացակայություն :
- Հանդիսությունների դահլիճի կահավորման պակաս կա:
- Արևային էներգիայի համակարգի ձեռքբերման անհրաժեշտություն կա:
- Սանհանգույցների մի մասը արդեն գտնվում է ոչ բարվոք վիճակում :

| | |
|---|---|
| | ➢ ՆԶՊ դասասենյակը և արհեստանոցը հագեցած չեն ժամանակակից սարքավորումներով:<br>➢ Պահակակետում չկան վերահսկող սարքեր:<br>➢ Դպրոցն ունի աղբամանների կարիք:<br>➢ Դպրոցում առկա է գրատախտակների, երաժշտական գործիքների՝ նվագարկիչ, բարձրախոս և այլն, պահանջ:<br>➢ Քարտեզների, ուսումնական պաստառների մաշվածությունը, անբավարարությունը կամ ընդհանրապես բացակայությունը:<br>➢ Դպրոցի բակում կառուցել նստարաններ:<br>➢ Դպրոցում ստեղծել ջերմոց: |

| | |
|---|---|
| **3.1 Նպատակներ** | Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, ԿԱՊԿՈՒ սովորողների ֆիզիկական հարմարեցում, առարկայական դասասենյակների նյութատեխնիկական միջոցների համալրում, տեխնոլոգիական միջոցների զինում, անվտանգության միջոցների տեղադրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **3.2 Խնդիրներ** | Մարզադահլիճի, ՆԶՊ դասասենյակի կահավորում, բուժկետի առաջին օգնության համար անհրաժեշտ բժշկական պարագաների զինում, դպրոցական գույքի թարմացում, ուսումնամեթոդական պարագաների հարստացում: | | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Վերանորոգել և հնարավորության դեպքում, նորացնել դպրոցի գույքը: | Ավելացնել մարզադահլիճի,ՆԶՊ դասասենյակի մարզական կահավորումը՝ համագործակցելով նաև ՊՆ-ի, ԱԻՆ-ի հետ, համագործակցելով համայնքային բուժհաստատությունների հետ՝ հարստացնել բուժկետի | Դասասենյակները զինել ուսումնամեթոդական դիդակտիկ պարագաներով, նյութերով : | Դպրոցը զինել էլեկտրատեխնիկական միջոցներով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դեղորքային հագեցվածությունը: Անվտանգության նկատառումներով դպրոցում տեսախցիկների տեղադրել: | | |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029թթ. | 2024-2025թթ | 2024-2026թթ. | 2024-2029թթ. |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | ԿԳՄՍՆ լիազոր մարմին, տնօրեն, վարչական համակարգող, տնտեսվար, բուժքույր, ՀԻՆՂԵԿ, այս աշխատանքների համար ծառայություններ մատուցող մարմիններ կամ կազմակերպություններ: | | | |
| **6.1Ռիսկեր** | Ֆինանսական միջոցների սղություն: Վերոնշյալ կազմակերպությունների կողմից համագործակցության ցանկության բացակայություն: | | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող** | Խնայողաբար օգտագործել ֆինանսական միջոցները: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **կամ չեզոքացնող գործողություններ** | Ստեղծել արտաբյուջե:<br>Գտնել հովանավորներ:<br>Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի:<br>Դպրոցում նպաստել սովորողների և դասարանների թվի մեծացմանը՝ ավելացնելով պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների ավելացմանը:<br>Իրականացվող աշխատանքների ճիշտ և համոզիչ ներկայացում համագործակցող կազմակերպություններին: | | | |
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Նյութատեխնիկական միջոցներն են՝**<br>Վերանորոգման պարագաներ, նոր սեղան-աթոռներ, գրատախտակներ, փառւկ կահույք, խոհանոցային սպասք: | Մարզագույք՝ գնդակներ, մեծ թենիսի ցանց, սպորտային ներքնակներ, պատգարակ, հակագազ, օգտագործման համար ոչ պիտանի ու գործածելի | Առարկայան պաստառներ և դիդակտիկ պարագաներ: | SMART գրատախտակ, նոր համակարգիչ, երաժշտական կենտրոն, բարձրախոս: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ռռնակներ և այլ զենք, զինամթերք:Դեղորայք, բամբակ, յոդ, վիրակապ, տեսախցիկներ: | | |
| | **Մարդկային ռեսուրսները՝** տնօրեն, վարչական համակարգող, տնտեսվար, բուժքույր, ՁԻՆՂԵԿ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, սովորողներ, ծնողներ, համայնքի ներկայացուցիչներ:<br>**Ֆինանսական միջոցներ՝** պետական բյուջե, դրամաշնորհներ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ | | | |

## 2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն




***<u>Դպրոցի կառավարմանը</u>*** *մասնակցում են բոլոր նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում սպանձնած գործի նկատմամբ և ապահովում ու վերահսկում են ուսումնական հաստատության կողմից իր գործունեության իրականացումը:*

Հանրակրթական դպրոցի կառավարման ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների օրինակելի կանոնադրության 27-րդ կետի համաձայն հաստատության կառավարման մարմիններն են՝

- ***Հիմնադիրը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության***
- ***ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ Լոռու մարզպետարանը՝ լիազոր մարմին***
- ***Կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ***
- ***Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը / ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 16 N 216 -Ն***

***որոշում/***

[www.arlis.am/documentview.aspx?docid=59769](www.arlis.am/documentview.aspx?docid=59769)

**Ներդպրոցական կառավարման համակարգն իրականացնում է՝**

- Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի գործունեության կազմակերպումը,
- Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը,
- Դպրոցում պարտականությունների բաշխումը,
- Դպրոցի տնօրենի, փոխտնօրենների, դասղեկի գործառույթներ,
- Դպրոցի համագործակցությունը միջավայրի, ծնողների  հետ,
- <<Դժվար>> դաստիարակվողների հետ տարվող աշխատանքների կազմակերպում,
- Դպրոցի գործունեություն:

Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը :

Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է հաստատությունում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանի 10.05.2021թ. թիվ 231Ա որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը բաղկացած է խորհրդի 9 անդամներից՝

| N | Անուն Ազգանուն | Կրթություն | Ներկայացնող մարմին |
|---|---|---|---|
| 1. | Սաղաթելյան Լևոն | Բարձրագույն | Նախարարություն |
| 2. | Գրիգորյան Երեմ | Բարձրագույն | Մարզպետ |
| 3. | Հովսեփյան Վահագ | Բարձրագույն | Մարզպետ |
| 4. | Օհանյան Արտյոմ | Բարձրագույն | Մարզպետ |
| 5. | Սահակյան Վարդան | Բարձրագույն | Համայնք |
| 6. | Օհանյան Արմինե | Բարձրագույն | մանկխորհուրդ /կասեցված է/ |
| 7. | Այվազյան Հայկանուշ | Բարձրագույն | մանկխորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Սահակյան Մարինե | Բարձրագույն | ծնողխորհուրդ |
| 9. | Մելոյան Մարուսյա | Բարձրագույն | ծնողխորհուրդ |

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անձից, մանկավարժական խորհուրդը՝ 17 անձից, ծնողական խորհուրդ՝ 9 անձից, աշակերտական խորհուրդը՝ 9 անձից:

Կառավարման խորհուրդն ակտիվորեն համագործակցում է տնօրինության և խորհրդակցական մարմինների հետ, գործում է բարեխղճորեն ՝ ի նպաստ սովորողի շահերի և կրթության արդյունավետության:

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքում կատարված նոր փոփոխությունների համաձայն՝ այսուհետ հաստատության գործունեության ղեկավարումն իրականացվելու է՝ դպրոցի գործադիր մարմնի՝ տնօրենի (ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգում ու մեթոդական ղեկավարում) և վարչատնտեսական մասի համակարգողի (կամ լիազոր մարմնի պատվիրակած իրավաբանական անձի ) կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տնօրենը՝ համագործակցելով դպրոցի կառավարման մարմնի՝ խորհրդի հետ, արդյունավետ աշխատանք է կատարում ի շահ հաստատության:

Հաստատության խորհուրդը

- ընտրել է տնօրեն և հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն
- Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի

կանոնները

- Քննարկել և հավանություն է տվել դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին
- Տնօրենի ներկայացմամբ քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային

ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանություն է տվել

- Քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական

աջակցությունների ծառայությունների մասին մասին հաշվետվությունները

- Քննարկել է ներքին գնահատման արդյունքները
- Վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝ քննարկելով դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները

*<u>Մանկավարժական խորհուրդը</u>* պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Մանկավարժական խորհրդի անդամների համար կկազմակերպվեն սեմինարներ, վերապատրաստումներ, կոնֆերանսներ ոչ միայն հանրակրթական դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու նպատակով, այլև ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար:

*Աշակերտական խորհուրդ*՝ դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհուրդում ընդգրկված են 9 սովորողներ:

Ծնողական խորհուրդ՝ սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Ծնողական խորհուրդը կազմված է 12 անդամներից:

*Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի* աշխատանքների ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհրդների հետ առավել սերտ համագործակցելու միջոցով:

*Առարկայական մեթոդական միավորումներ*՝ դպրոցում գործում են 4 առարկայական մեթոդական միավորումներ՝ տարրական, հումանիտար, բնագիտամաթեմատիկական, տեխնիկական առարկաներ (տեխնոլոգիա, ՆԶՊ, ֆիզկուլտուրա, շախմատ, երաժշտություն): Ուսումնական տարվա

ընթացքում, ըստ տարեկան աշխատանքային ծրագրի, գումարվում են մեթոդմիավորումների նիստեր: Նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի և կառավարման մարմնի համագործակցության՝

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով ,համաձայն որի՝ դպրոցի կառավարման մարմիններն են ՝<br>1. ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը,<br>2. տարածքային կառավարման մարմինը՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը,<br>3. կոլեգիալ կառավարման մարմինը ՝խորհուրդը,<br>4. գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:<br>➢ Դպրոցում ձևավորված են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական՝17, ծնողական՝ 9 անդամ, աշակերտական խորհուրդներ՝ 9 աշակերտ, (խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են | ➢ Դպրոցում թույլ է *ուսուցման բոլոր ներքոհիշյալ օղակների ճշգրիտ և փոխկապակցված աշխատանքները*<br>*1. Դպրոցի կառավարման խորհուրդը, դպրոցի մանկավարժական խորհուրդը և փնօրենը*<br>*2. Դպրոցի փոխփնօրենները և կազմակերպիչը*<br>*3. Ուսուցիչների մեթոդական միավորումները*<br>*4. Ուսուցիչները, դասղեկները*<br>*5. Ծնողական խորհուրդը*<br>*6. Աշակերտական խորհուրդը*<br><br>➢ Դպրոցը չունի շրջանավարտների և |

| | |
|---|---|
| դպրոցի կառավարմանը) , առարկայական մեթոդական միավորումներ՝ 4 ( տարրական , բնագիտական, հումանիտար և ընդհանուր), որոնց իրավասությունները սահմանված են դպրոցի կանոնադրությամբ:<br><br>➢ Դպրոցում կառավարման խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝<br>1. կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ,<br>2. հաստատում հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը,<br>3. ընթացիկ վերահսկողություն են իրականացնում տնօրենի գործունեության նկատմամբ:<br>➢ Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը<br>➢ Դպրոցի կառավարման խորհրդը հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները: | հոգաբարձուների խորհուրդներ:<br>➢ ԱԽ-ն քիչ է հանդես գալիս նախաձեռնություններով, ինքնուրույն միջոցառումներով, սպորտային մրցումներով, համայնքի այլ դպրոցների հետ հանդիպումներով:<br>➢ ԱԽ-ն չի համագործակցում այլ դպրոցների ԱԽ-ների հետ:<br>➢ ԱԽ-ն և ԾԽ-ն խորհրդակցական ձայնի իրավունքով չեն մասնակցում մանկավարժական խորհրդի նիստերին:<br>➢ ԱԽ-ի և ԾԽ-ի համագործակցությունը մանկավարժական համակազմի հետ թույլ է:<br>➢ ԾԽ-ն քիչ է ներգրավվում դպրոցի կառավարման գործընթացում:<br>➢ Խորհրդակցական մարմինները լիարժեք չեն տիրապետում դպրոցի ներքին իրավական ակտերին: |

| | |
|---|---|
| ➢ Դպրոցի կառավարման խորհրդի նիստերում քննարկվում և հաստատվում են տարեկան եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը:<br>➢ Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է հաստատությունում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությամբ:<br>➢ Կառավարման խորհրդում լսվել և հավանության է արժանացել տարիֆիկացիոն հանձնաժողովի կողմից կազմված տարեֆիկացիան և ուսումնական պլանը, ինչպես նաև հաստիքացուցակը: | ➢ Խորհուրդը տարիֆիկացիոն հանձնաժողովի կողմից կազմված տարեֆիկացիան և ուսումնական պլանը, ինչպես նաև հաստիքացուցակը հավանության է արժանացնում առանց քննարկման կամ առաջարկությունների:<br>➢ Պետք է վերահսկողության ձևեր մշակել:<br>➢ Խորհրդի որոշ անդամներ նիստերին հաճախակի չեն ներկայանում,<br>➢ Խորհրդի անդամների կողմից օրենսդրական ակտերի տիրապետման ցածր մակարդակ:<br>➢ Կառավարման խորհրդի և տնօրենի միջև անբավարար հաղորդակցությունը հանգեցնում է որոշումների կայացման հետաձգմանը, գործողությունների սխալ դասակարգմանը<br>Կառավարման խորհրդի կողմից ինքնուրույն նախաձեռնությունների պակաս |

| | |
|---|---|
| | Կառավարման խորհրդի նիստերին որոշ անդամների բացակայություններ<br>Խորհրդի որոշ անդամների կողմից պասիվ, ձեռնպահ վերաբերմունք<br>Կառավարման խորհրդի անդամների կողմից ներքին,<br>իրավական ակտերի իմացության ցածր մակարդակ,<br>Կառավարման խորհրդի անդամների միջև համագործակցության պակաս: |

| | |
|---|---|
| **3.1 Նպատակներ** | Կառավարման արդյունավետության բարձրացում: |
| **3.2 Խնդիրներ** | Կառավարման խորհրդի,խորհրդակցական մարմինների և դպրոցի ակտիվ համագործակցության ստեղծում և ապահովում : |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Բաց քննարկումների իրականացում՝ դպրոցի ներքին և արտաքին գնահատման արդյունքների մասին, բացթողումների և թերությունների շտկում, խորհրդակցական մարմինների ավելացում և ակտիվացում, նրանց իրազեկվածության բարձրացում և կառավարման աշխատանքներում խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվում, զարգացման ծրագրի իրականացման ամենամյա հաշվետվության ներկայացում և ծրագրի վերահսկողության բարձրացում: | | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ: | Աշակերտական խորհրդի հետ հաճախակի կազմակերպել դպրոցի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումներ և աշխատանքներ: | Աշակերտական և ծնողական խորհուրդներին մասնակից դարձնել մանկավարժական ժողովների նիստերին: | Խորհրդակցական մարմինների համար կազմակերպել դպրոցի ներքին իրավական ակտերի վերաբերյալ իրազեկվածության զրույց- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | քննարկումներ: |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029թթ. | | | |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Տնօրեն, կառավարման խորհուրդ | | | |
| **6.1Ռիսկեր** | Խորհրդի անդամների կողմից դրսևորվող պասիվություն: | | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Առանձին քննարկումների, առողջ բանավեճերի իրականացում խորհրդակցական մարմինների և նրանց անդամների հետ, ռազմավարության նոր մոտեցումների մշակում: | | | |
| **7.Ուսումնական հաստատության** | | | | |

| | |
|---|---|
| **զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Նյութատեխնիկական միջոցներն** են՝<br>Ներքին իրավական ակտեր, ֆինանսական հաշվետվություններ, աշխատանքների գնահատման միջոցներ, միասնական հարթակներ, քննարկումների համար անհրաժեշտ պարագաներ:<br>**Ֆինանսական միջոցներն են**՝ պետական բյուջեից տրամադրվող կազմակերպչական ծախսեր<br>**Մարդկային ռեսուրսներ**՝ աշակերտական, ծնողական, մանկավարժական համայնք, խորհրդակցական մարմիններում ընդգրկված անձիք: |

## 2.4 Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը գործում է որպես մեծ համայնքի անբաժանելի մաս՝ իր ամենօրյա գործունեության ընթացքում համագործակցելով համայնքի, կրթամշակութային , առողջապահական հաստատությունների, կրթության կառավարման

մարմինների, բնապահպանական կազմակերպությունների, գործարարների, կրթական գործի նկատմամբ շահագրգիռ անձանց հետ:

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության՝

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| --- | --- |
| ➢ Դպրոցը համագործակցում է՝<br>1. ԿԳՄՍ նախարարության,<br>2. Մարզպետարանի,<br>3.Տեղական ինքնակառավարման մարմինների<br>4. ԿՏԱԿ-ի<br>5. ԵՄԻՍ-ի<br>6.Սպիտակի գեղարվեստի, երաժշտական դպրոցների հետ:<br>7. «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հետ:<br>8. ԱԻՆ-ի (զրույցներ, տագնապ): | ➢ Դպրոցը չի համագործակցում ADRA Armenia, **ՀՕՖ-ի երեխաների պաշտպանության**, **Թումո - Ստեղծարար** կազմակերպությունների հետ,<br>➢ Դպրոցը ակտիվ չի մասնակցում համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:<br>➢ Դպրոցի աշակերտները չեն իրականացնում տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը և զարգացմանը:<br>➢ Դպրոցը չի համագործակցում SMART Center - |

| | |
|---|---|
| 9.ԴՇՀ՝ Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի հետ:<br>10. Սպիտակի մշակույթի տան, սպորտդպրոցի հետ:<br>11. ՔԴԿ -ի<br>12. ՏՄԱԿ-ի<br>13.ՀՀ Ոստիկանության տարածքային բաժնի հետ (զրույց, դասախոսություն):<br>14.Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզի Սպիտակի տարածքային ստորաբաժանման հետ:<br>Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ Գիտելիքի օրվան , Վերջին զանգին, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին:<br>15.Համագործակցում է համայքապետարանի կրթության բաժնի հետ:<br>➢ Դպրոցը և առանձին ուսուցիչներ ընդգրկված են ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր | Children of Armenia Fund (COAF) կենտրոնի հետ:<br>➢ Դպրոցը չի համագործակցում ATP Eco Leaders / Էյ Թի Փի-ի էկո-ի հետ:<br>➢ Դպրոցը չի համագործակցում **Դասավանդի՛ր, Հայաստան** կրթական կազմակերպության հետ:<br>➢ Դպրոցը չի համագործակցում **Goals Armenia** կազմակերպության հետ:<br><br>**Ծնողական համայնքը ՝**<br>ակտիվ չէ աշակերտների հաճախումների, ուսումնական առաջընթացի բարձրացման աշխատանքներում՝ հատկապես միջին դպրոցում: |

| | |
|---|---|
| սեմինարներին , ծրագրերում:<br>➢ ԳԹԿ–ի կողմից դպրոցում իրականացնում են արտաքին գնահատում<br>➢ ԿՏԱԿ– Ուսուցիչներն ընդգրկված են ԿՏԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր սեմինարներում, ծրագրերում:<br>➢ , ՏՄԱԿ – ԿԱՊԿՈւ երեխաների հետ աշխատանքի կազմակերպում:<br>**<u>Ծնողական համայնքը ՝</u>**<br><br>➢ հետևում է տարրական դասարանների աշակերտներին տրամադրվող անվճար սննդի գործընթացին,<br>➢ մասնակցում է սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը,<br>➢ ակտիվորեն մասնակցում է արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը, | |

| | |
|---|---|
| | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **3.1 Նպատակներ** | Դպրոց-համայնք, դպրոց-կրթական կազմակերպություններ կապերի ամրապնդում, սովորողների սոցիալականացում: | | | |
| **3.2 Խնդիրներ** | Աշակերտներին, ծնողներին և մանկավարժներին համայնքի մշակութային կյանքին ակտիվ ներգրավվում , ՏԻՄ-երի հետ ակտիվ համագործակցում, համայնքային զարգացման ծրագրերի մշակում և իրականացում, պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխանեցում: | | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Աշակերտների և ուսուցիչների միջոցով իրականացնել տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների | Ակտիվացնել դպրոցի և դպրոցականների մասնակցությունը համայնքային իրենց հասանելի խնդիրների | Ակտիվ համագործակցել տարբեր կրթական կազմակերպությունների հետ, որոնք նշված են այս ոլորտում: | Համագործակցել ՀԿ-ների հետ՝ աշակերտների մեջ սերմանելով կամավորության ցանկություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | զարգացմանը: | վերհանմանը և լուծմանը: | | |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029թթ | | | |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | ՏԻՄ, տնօրեն, ուսումնական և կազմակերպչական գծով փոխտնօրեններ, ԴԱԿ, դասղեկներ, ծնողական համայնք: | | | |
| **6.1Ռիսկեր** | ՏԻՄ-ի և ՀԿ-ների կողմից դպրոցի հետ համագործակցության պասիվացման դրսևորում: | | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Աշխատանքներին պատշաճ կերպով նախապատրաստվել և լինել ներկայանալի:<br>Աշխատանքները կատարել հետևողական և բխեցնել համայնքի կարիքնեից: | | | |
| **7.Ուսումնական** | | | | |

| | |
|---|---|
| **հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Մարդկային ռեսուրսներ** ՝ Համայնքի շահագրգիռ անձինք, տնօրեն, ուսումնական և կազմակերպչական գծով փոխտնօրեններ, ԴԱԿ, դասղեկներ, աշակերտական և ծնողական խորհուրդներ:<br>**Նյութատեխնիկական պարագաներ** ՝ տարբեր համայնքային աշխատանքներ( շաբաթօրյակներ և այլն) կատարելու համար անհրաժեշտ պարագաներ, գործիքներ, դիդակտիկ նյութեր:<br>**Ֆինանսական միջոցներ**՝ պետական բյուջե, բարերարներ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ: |

## 2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ունի փորձառու և հմուտ մանկավարժական համակազմ, որը ՝ներկայացվում է ստորև.

**Վարչական աշխատողներ՝**

Տնօրեն-1

Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով-1

Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակց. գծով-1

*Ուսուցիչ* -**17** , որոնցից

- Տարակարգ ունեցող ուսուցիչներ- 0
- Կամավոր ատեստավորված ուսուցիչներ-0
- Վերապատրաստում անցած ուսուցիչներ-16
- Վերապատրաստող ուսուցիչներ -0
- Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ-2
- Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ-16
- Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ-1

*Դասփիարակչական աշխատանքների կազմակերպիչ* - 1

**Սպասարկող անձնակազմ**

Լաբորանտ -1

Գրադարանավար-1

Ուսուցչի օգնական -1

Հոգեբան - 1

***Առարկայական մեթոդ միավորում*- 4՝**

Հումանիտար՝ 1

ԲԴՃՄ՝ 1

Տարրական՝ 1

Ընդհանուր (ՆԶՊ, Ֆիզկուլտուրա ) ՝ 1

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական համակազմի մասնագիտական, մեթոդական, մանկավարժական կարողությունների շարունակական որական աճով, որը անհրաժեշտ նախադրյալ է ուսուցչի ստեղծագործական կարողությունների , մանկավարժական վարպետության, մանկավարժական փորձի անընդհատ զարգացման համար:

Դպրոցի մանկավարժական և վարչական անձնակազմը մասնակցել է նոր ՀՊՉ-ի վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչների քանակական և որակական ցուցանիշներն են՝

| Ուս. տարիներ | 2018-2019 | | 2019-2020 | | 2020-2021 | | 2021-2022 | | 2022-2023 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | Ուսուցիչների ընդհանուր թիվ | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը |
| | 19 | 14,32 | 19 | 14,32 | 17 | 16,00 | 17 | 16,00 | 17 | 16,00 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |

| Ուսուցիչների տարիքային կազմ | Մինչև 30 տարեկան | 31-40 տարեկան | 41-50 տարեկան | 51-60 տարեկան | 61 և ավելի |
|---|---|---|---|---|---|
| Թիվ | 3 | 3 | 5 | 5 | 1 |

| | 1-5 տարի | 6-15 տարի | 16 և ավելի տարիներ |
|---|---|---|---|
| Ուսուցիչների թիվն ըստ աշխատային փորձի | 4 | 1 | 12 |

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Դպրոցում աշխատում են փորձառու և հմուտ մանկավարժներ, որոնց հիմնական մասը անցել է պարտադիր վերապատրաստում:<br>➢ Ուսուցիչները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ 1 ուսուցչի, ունեն բարձրագույն կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:<br>➢ Ուսուցիչները կազմակերպում են հետաքրքիր դասեր և միջոցառումներ:<br>➢ Ձևավորված է առողջ և համագործակցող կոլեկտիվ:<br>➢ Մեթոդմիավորումների աշխատանքը համակարգված | ➢ Դպրոցում տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան:<br>➢ Կամավոր ատեստավորման մասնակից ուսուցիչներ ևս չկան, և նրանց մոտ նաև կամավոր ատեստավորման մասնակցության մոտիվացի պակաս կա:<br>➢ Վերապատրաստող կամ մենթոր ուսուցիչ չկա դպրոցում:<br>➢ Ուսուցիչների գերակշիռ մասը դժվարանում է ՏՀՏ գործիքներից օգտվել:<br>➢ Բոլոր ուսուցիչները լիարժեք չեն տիրապետում նոր |

| | |
|---|---|
| է:<br>➢ Ուսուցիչները սիրով են հաճախում աշխատանքի:<br>➢ Սահմանված կարգով իրականանում է մանկավարժների թափուր տեղի համար մրցույթները:<br>➢ Իրականացնում են համագործակցային և նախագծային աշխատանքներ:<br>➢ Ձևավորված մեթոդական միավորումներ ՏՀՏ գործիքների տիրապետում Հետաքրքիր միջոցառումների կազմակերպում:<br>➢ Դպրոցում պարբերաբար իրակացվում են փոխադարձ դասալսումներ: | ՀՊՉ-ի պահանջներին և մոտեցումներին:<br>➢ Ոչ բոլոր մանկավարժներն են ընդգրկված ԿՁՆԱԿ-ի, ԿԳՄՍՆ-ի , ՀՄԿ-ի կողմից անցկացվող տարբեր ծրագրերում, սեմինարներում, վերապատրաստումներում:<br>➢ Մանկավարժները չեն համագործակցում կրթական միջազգային և նորագույն մոտեցուներ դրսևորող կազմակերպությունների հետ:<br>➢ Մանկավարժները պասիվ են նաև հեռավար սեմինարներին մասնակցելու գործում:<br>➢ Նրանց մոտ խնդիրներ են առաջանում դասը պլանավորելու:<br>➢ Խմբակի ծրագիր կազմելու բացակայություն,<br>➢ Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների պակաս:<br>➢ ՀՊՉ-ի կիրառման ցածր մակարդակ:<br>➢ Սկսնակ ուսուցիչների մոտ վստահության մթնոլորտի պակաս: |

| | |
|---|---|
| | ➢ Մեդիագրագիտության և ՏՀՏ գործիքներին տիրապետման ցածր մակարդակ: |

| **3.1 Նպատակներ** | Մանկավարժների մասնագիտական որակների բարելավում: | | | |
|---|---|---|---|---|
| **3.2 Խնդիրներ** | Մանկավարժների մոտ ինքնակրթության աշխատանքների կազմակերպում և խրախուսում, մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ապահովում՝ վերապատրաստումների, սեմինարների, մ/մ նիստերի, քննարկումների, համագործակցության միջոցով: | | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Կամավոր ատեստավորման և | ՏՀՏ գործիքների տիրապետման և ՀՊՉ-ի ճիշտ կիրառմանը | Իրականացնել մասնագիրական քննարկումներ: | Մեթոդմիավորումների հետ իրականացնել վերլուծություն ուսուցիչների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տարակարգի շնորհման մրցույթների մասնակցության խթանում սեմինարների, բարոյական և նյութական խրախուսման միջոցով: | նպաստող վերապատրաստումներ իրականացնել: | | մոտ մոտիվացիայի բացակայության վերաբերյալ և մշակել դրանց շտկմանն ուղղված քայլեր: |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029թթ. | | | |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, ուսուցիչ: | | | |

| | |
|---|---|
| **6.1Ռիսկեր** | Ուսուցիչների ցուցաբերած պասիվություն: |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Բարոյական և նյութական խրախուսման միրոցներով ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը, ստեղծել մոտիվացիայի համար անհրաժեշտ պայմաններ, ուսուցչի համար լինել օգնող կառույց: |
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսկան ռեսուրսներ՝**<br>Պետական բյուջե , դրամաշնորհներ , բարերարներ , օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցներ:<br><br>**Մարդկային ռեսուրսներ՝**<br><br>Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, ուսուցիչ, վերապատրաստող անձնակազմ:<br><br>**Նյութատեխնիկական միջոցներ՝**<br>Համակարգիչներ, |

| | |
|---|---|
| | Նյութատեխնիկական պարագաներ ՝ ՏՀՏ սարքեր, գրենականներ: |

## 2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

Կրթության որակի բարելավման գործում կարևոր դեր ունի ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում:
Այս գործում կարևոր դերակատարում է ունեցել դպրոցում <<Արմաթ>> լաբորատորիայի ստեղծումը, սակայն դպրոցի ուսումնական գործընթացում գրեթե չեն կիրառում ՏՀՏ գործիքները, որը կբարձրացներ կրթության որակը, սովորողների և ուսուցիչների ՏՀՏ ոլորտի իմացությունը ցածր մակարդակում է, անտեսված է նաև մեդիագրագիտության մակարդակը: Դպրոցն ունի ինտերնետ կապ, սակայն գերարագ չէ և երբեմն խոչընդոտում է աշխատանքները, դպրոցում չկա թվայնացված

գրադարան, բայց առկա է համակարգչային սենյակ, որի ոչ բոլոր համակարգիչներն են գործում, հեռավար դասավանդման կարողունակությունները զարգացման կարիք ունեն:

Դպրոցի մատենավարությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների՝

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ Դպրոցն ունի ինտերնետային կապ:<br>➢ Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա:<br>➢ Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ:<br>➢ Դպրոցն օգտվում է էլեկտրոնային ներքոնշյալ կրթական հարթաններից՝<br>http://www.teachingenglish.org.uk/<br>http://www.meghu.am/about.html<br>http://www.meghu.am/about.html | ➢ Որակյալ կրթություն ստանալու համար դպրոցում առկա է նորագույն տեխնոլոգիաների կիրառման պասիվություն:<br>➢ Համակարգչային սենյակի ոչ լիարժեք վիճակի և Սմարթ գրատախտակի բացակայության հետևանքով ուսուցիչներն ու աշակերտները չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին և նորարարությանը:<br>➢ Դպրոցում առկա է համակարգչային տեխնիկայի ոչ բավարար քանակ՝ 11 համակարգիչներից միայն 3-ն են |

http://www.meghu.am/about.html

http://kangaroo.am/

- Դպրոցում մատենավարությունը, սովորողների շարժը կատարվում է էլեկտրոնային տարբերակով:
- Դպրոցն օգտվում է էլեկտրոնային կրթական տարբեր ռեսուրսներից՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram.am, dasaran.am:
- Մանկավարժները տեղեկացված են << Հայկական կրթական միջավայր>>, << Պաշարների շտեմարան>> հարթակների մասին:
- Ուսուցիչները կարողանում են օգտվել Teams հարթակից:
- Օնլայն հարթակում ունեն ստեղծած աշակերտական, ծնողական, մանկավարժական խմբեր, որոնք հնարավորություն են տալիս աշխատում, ինչը ևս դժվարացնում է ակտիվ ուսումնառության կազմակերպումը:
- Դպրոցի գրադարանը թվայնացված չէ:
- Տպիչ սարքերը լավ վիճակում չեն գտնվում:
- Էլեկտրոնային գրատախտակների բացակայությունը նվազեցնում են դասապրոցեսի արդյունավետությունը:
- Էլեկտրոնային գրադարաններից, էլեկտրոնային գրքերից, էլեկտրոնային պարբերականներից, բառարաններից, տեղեկատու գրքերից, կրթական ծրագրերից, տեղեկատվական համակարգերից օգտվելու պասիվություն և ուսուցիչների և աշակերտների կողմից:
- Ուսուցիչներն ու աշակերտներն ունեն ՏՀՏ գործիքների ( https://kahoot.com/ , https://ru.padlet.com/ , https://quizizz.com/admin/quiz/5a, 89da50d7c2a3002085c859/- , https://learningapps.org/index.php?overview&s&category=0&tool ) տիրապետման ցածր մակարդակ, ինչի պատճառով թեմատիկ, գործնական աշխատանքները չեն կատարվում

| | |
|---|---|
| անհրաժեշտության դեպքում կազմակերպել օնլայն քննարկումներ: | վերոնշյալ կամ այլ հարթակներում:<br>➢ Դասապրոցեսի ընթացքում տեսադասերի, թեմատիկ սահիկաշարերի պատրաստման և կիրառման բացակայություն աշակերտների և ուսուցիչների կողմից:<br>➢ Մանկավարժներն ակտիվություն չեն ցուցաբերում << Հայկական կրթական միջավայր>>, << Պաշարների շտեմարան>> հարթակներում կրթական հետազոտական նյութեր տեղադրելու կամ քննարկումներին մասնակցելու գործում :<br>➢ Դպրոցի պաշտոնական կայքը թարմացման կարիք ունի:<br>➢ Դպրոցը չունի ֆեյսբուքյան կայք, որտեղ կլուսաբանվեր դպրոցի, աշակերտների, ուսուցիչների կատարած օրինակելի գործերը, ձեռք բերած հաջողությունները ու մոտիվացիայի աղբյուր կդառնար նաեւ մյուսների համար: |

| **3.1 Նպատակներ** | Ուսուցման արդյունավետության բարձրացում ՏՀՏ գործիքների |
|---|---|

<table>
<tr><td></td><td colspan="3">միջոցով:</td></tr>
<tr><td>3.2 Խնդիրներ</td><td colspan="3">Դպրոցումշարունակական ներդնել ՏՀՏ գործիքներ և մեթոդներ, մանկավարժների և սովորողների մոտ ՏՀՏ կիրառման հմտություններ զարգացնել,հարստացնել դպրոցի էլեկտրոնային և համակարգչային տեխնիկան:</td></tr>
<tr><td>4.1<br>Գործողություններ ու միջոցառումներ</td><td>Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում:</td><td>Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում : Մենթորական համակարգի ներդնում</td><td>Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում :</td></tr>
<tr><td>4.2Գործողությունների ժամանակացույց</td><td colspan="3">2024-2029թթ</td></tr>
<tr><td>5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ</td><td colspan="3">Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, օպերատոր, վերապատրաստող կազմակերպություններ, ուսուցիչ:</td></tr>
</table>

| | . |
|---|---|
| **6.1Ռիսկեր** | Ոչ բավարար ֆինանսական միջոցներ և ուսուցիչների մասակցության պասիվություն, թվային տեխնիկայի բացակայություն: |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Խնայողաբար օգտագործել բյուջետային միջոցներ, ստեղծել արտաբյուջե, ուսուցիչների մոտիվացում:<br>Նորամուծությունները ներմուծել փոքր չափաբաժիններով:<br>Ձեռք բերել անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումները: |
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսական միջոցներ՝** պետբյուջե, արտաբյուջետային միջոցներ,<br>**Դպրոցի նյութատեխնիկական միջոցներ՝** ՏՀՏ սարքավորումներ/համակարգիչ, էկրան/:<br>**Մարդկային ռեսուրսներ՝** Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, օպերատոր, վերապատրաստող կազմակերպությունների մասնագետներ, ուսուցիչներ: |

## 2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Կրթության որակն արդյունք է այնպիսի ուսումնառության համակարգի,որը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին ու պահանջներին և սովորողներին ապահովում անհրաժեշտ գիտելիքներով, արժեքային համակարգով ու որակներով: Կրթության որակն ուսումնադաստիարակչական գործընթացի համապատասխանությունն է սահմանված նպատակներին, այն ուսումնական գործընթացի ամբողջ արդյուքն է, հետևաբար ներառում է՝

1. սովորողներին,
2. ուսումնական միջավայրը,
3. կրթության բովանդակությունը,
4. որակյալ ուսուցչական կազմը,
5. հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթացը,
6. արդար ու արժանահավատ գնահատման համակարգը,
7. ուսուցման վերջնարդյունքները, որոնց վերաբերող ցուցանիշները բնորոշվում են առաջին հերթին աշակերտների առաջադիմությամբ, որն արտահայտվում է նրանց ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով, մրցույթներին և օլիմպիադաներին մասնակցելը:

2022-2023 ուսումնական տարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, որտեղ սովորում են 110 աշակերտ, որից 57-ը տարրական դպրոցում, իսկ 53-ը՝ միջին:

Դպրոցում պահպանվում է բարոյահոգեբանական առողջ և անվտանգ ուսումնական միջավայր, սակայն նյութատեխնիկական բազան և շենքային պայմանները ոչ բարվոք վիճակում են և բարելավման կարիք ունեն:Այդ իսկ պատճառով սովորողների ուսուցումը լիարժեք չի կազմակերպվում:

Դպրոցի ուսուցչական կազմը բաղկացած է 17 անձից, որոնցից 16-ն ունեն բարձրագույն կրթություն, մեկը՝ միջին մասնագիտական: Նրանցից ոչ մեկը չի մասնակցել կամավոր ատեստավորման և չունի տարակարգ:

Սովորողների կրթությունն իրականացվում է նոր ՀՊՉ-ով, սակայն ոչ բոլորն ուսուցիչներն են ամբողջովին յուրացրել ՀՊՉ-ի պահանջները և դրանց կիրառման ժամանակ ունեն դժվարություններ:

Դպրոցում իրականացվել են ծրագրեր սոցիալապես անապահով և Արցախից բռնի տեղահանված ընտանիքների սովորողներին աջակցելու նպատակով:

Դպրոցում հաճախակի են լինում դասալսումներ և քննարկումներ, մեթոդմիավորման նիստեր, փորձի փոխանակում:

Սովորողների չնչին մասն է մասնակցում օլիմպիադաներին, սակայն նրանց մեջ կան նաև բարձր արդյունք ցուցաբերած աշակերտներ: Վոժերջին տարիներին նկատվում է սովորողների առաջադիմության և որակի աճ:

Տարվա մեջ կազմակերպվում են 9 պատմամշակութային դպրոցական էքսկուրսիաներ, 3_4 դպրոցական միջոցառումներ:

Դպրոցը չունի շուրջօրյա ջրամատակարարում, օրվա մեջ 4_5ժամ է ջրամատակարարում լինում: Դասարանների ջերմաստիճանը 18_20 աստիճան է, տաքացվում է 7:09_13:00՝ կաթսայատան միջոցով:

**Ուսուցման վերջնարդյունքներն ըստ ուսումնական տարիների՝**

| Տարեթիվ | Սովորողների թիվը | Գերազանց սովորողներ | Լավ սովորողներ | Բավարար սովորողներ | Առաջադիմություն/ որակ | ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 2018-2019 | 118 | 23 | 40 | 55 | 100/50 | 4 |
| 2019-2020. | 120 | 24 | 31 | 65 | 87/46 | 3 |
| 2020-2021 | 113 | 28 | 32 | 53 | 100/53 | 1 |
| 2021-2022 | 113 | 25 | 35 | 53 | 100/53 | 1 |
| 2022-2023 | 110 | 29 | 35 | 46 | 100/59 | 1 |

| Ցուցանիշ | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 5 | 7 |

| | | |
|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 1 |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 0 | 1 |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 0 |
| Մարզային և հանրապետկան մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը | 0 | 2 |

2022-2023 ուսումնական տարում սովորողների առաջադիմության թիվը և տոկոսն ըստ դասարանների.

| Դասարան | Որակ սով. թիվ/տոկոս | Առաջադիմություն սով. թիվ/տոկոս |
|---|---|---|
| 2-րդ | 6/75% | 6/100% |
| 3-րդ | 5/75% | 6/100% |
| 4-րդ | 5/69% | 3/58% |
| 5-րդ | 2/63% | 3/100% |

| | | |
|---|---|---|
| 6-րդ | 1/78% | 6/78% |
| 7-րդ | 1/50% | 6/100% |
| 8-րդ | 3/65% | 2/100% |
| 9-րդ | 4/54% | 3/100% |
| | | |

2023 թ.-ին դպրոցն ավարտել է 13 աշակերտ, որոնցից 8_ը շարունակում են ուսումը ավագ և 1-ը՝ ֆիզմաթ դպրոցում, իսկ 4_ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

| Ցուցանիշ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխություններ |
|---|---|---|---|---|
| Սովորող/ուսուցիչ հարաբերություն | 6,3 | 6,4 | 7 | Աճ |
| Սովորող/սպասարկող վարչական անձնակազմ հարաբերություն | 9,7 | 9,9 | 10,8 | Աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասարանների միջին խտությունը | 11,8% | 12% | 13,2% | Աճ |

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից չափորոշչային պահանջներին համապատասխան իրականացված կրթության որակի՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Դպրոցն ապահովում է տարրական, հիմնական կրթություն՝ չափորոշչային պահանջներին համապատասխան:<br>➢ Կրթությունը կազմակերպում է ըստ սովորողների կարողությունների:<br>➢ Դպրոցն ապահովում է չափորոշչային պահանջներին համապատասխան հավասար, հասանելի ներառական և որակյալ կրթության քաղաքականություն:<br>➢ Դպրոցում առկա են թեմատիկ պլաններ, իրականացվում է դասերի պլանավորում՝ օրվա դասի | ➢ Նոր ՀՊՉ-ի կիրառմամբ պայմանավորված ուսուցիչների մոտ դրանց պահանջների ընկալման որոշակի դժվարությունների առկայություն:<br>➢ Գնահատման նոր համակարգի հետ կան դժվարություններ, մանկավարժները լիովին չեն պատկերացնում գնահատման նոր համակարգը 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում:<br>➢ Սովորողների համար գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով մասնագիտական կողմնորոշման |

| | |
|---|---|
| պլանավորում, պահպանվում են գնահատման չափանիշները, կատարվում են մշտադիտարկումներ, տրվում են ամփոփիչ գրավոր աշխատանքներ:<br>➢ Դպրոցը բոլոր սովորողներին ապահովում է դասագրքերով:<br>➢ Դպրոցն ունի անհրաժեշտ բավարար սանիտարահիգենիկ պայմաններն ու ապահովում է անվտանգ կրթական միջավայր:<br>➢ Դասասենյակների լուսավորությունը համապատասխանում է պետական չափանիշներին:<br>➢ Տարեցտարի նկատվում է սովորողների առաջադիմության որակի բարելավում:<br>➢ Աշակերտներն ակտիվ մասնակցում են մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաներին և ցուցաբերում բարձր արդյունքներ:<br>➢ Աշակերտներն ակտիվ մասնակցում են մարզային և հանրապետական մշակութային ոլորտում իրականացվող մրցույթներին են ցուցաբերում բարձր | հնարավորության բացակայություն:<br>➢ Դպրոցում առկա է ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն:<br>➢ Դպրոցում չկա ընթերցասրահ, սովորողների հանգստի կազմակերպան համար տարածք՝ խաղահրապարակ կամ կանաչ գոտի, դպրոցի բակում չկան նստարաններ:<br>➢ Դպրոցի գրադարանը հագեցված չէ ժամանակակից և արտասահմանյան գրականությամբ:<br>➢ Սովորողների շրջանում նկատվում է ինքնարտահայտման պակաս:<br>➢ Ուսուցիչները չունեն տարակարգ և կամավոր ատեստավորման չեն մասնակցում:<br>➢ Դպրոցում չի իրականացվում նախագծային ուսուցում:<br>➢ Սովորողները չեն տիրապետում համայնքային զարգացման ծրագրեր մշակելու հմտություններին:<br>➢ Դպրոցը չունի կենսաբանության և քիմիայի լաբորատորիա, իսկ ֆիզիկայի լաբորատորիան |

| | |
|---|---|
| առաջադիմություն:<br>➢ Աշակերտների հաճախումների խնդիրներ չեն առաջանում:<br>➢ Բոլոր սովորողներն ապահովված են դասագրքերով:<br>➢ Որպես օտար լեզու ուսուցանվում են ռուսերեն են անգլերեն:<br>➢ Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիան են ունի շախմատի դասասենյակ:<br>➢ Սովորողները մասնակցում են մարզային և հանրապետական առարկայական են մշակութային օլիմպիադաների:<br>➢ Դպրոցում գործում է երկարօրյա խմբակներ:<br>➢ Դպրոցի շրջանավարտներն իրենց կրթությունը շարունակում են ավագ կամ միջնակարգ դպրոցներում կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ապահովելով կրթության շարունակականությունը: | նյութատեխնիկական համալրման կարիք ունի:<br>➢ Դպրոցում առկա է համակարգիչների պակաս և էլեկտրոնային գրատախտակի բացակայություն:<br>➢ Սպորտդահլիճում ձմռանը չի ապահովվում անհրաժեշտ ջերմաստիճան, չունի անհրաժեշտ մարզական գույք, հանդերձարանները ոչ բարվոք վիճակի պատճառով չեն շահագործվում, և այս ամենից ֆիզկուլտուրայի դասապրոցեսը թերի է անցկացվում:<br>➢ ՆԶՊ դասասենյակը համալրված չէ անհրաժեշտ գույքով, դպրոցում չկա հրաձգարան, մարզապատ:<br>➢ Համակարգիչների անսարքությունը կրթական խնդիրներ են առաջացնում սովորողների համար և աշխատանքային խնդիրներ՝ մանկավարժների համար:<br>➢ Դպրոցն ունի տարածք, բայց չունի ջերմոց, որտեղ աշակերտները ձեռք կբերեն գյուղատնտեսական կենսական հմտություններ, և որի արտադրանքի |

| | |
|---|---|
| | իրացման շնորհիվ արտաբյուջեն կհարստանա:<br>➢ Դպրոցի ջեռուցման և ջրամատակարարման վիճակը ոչ բարվոք վիճակում է, քանի որ շուրջօրյա չէ:<br>➢ Դպրոցում չեն իրականացվում նպատակային ուսուցողական ծրագրեր ՝ սեռերի ու ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավասարության ձևավորմանն ուղղված:<br>➢ Դպրոցի ֆիզիկական միջավայրն այդքան էլ հարմարեցված չէ բոլոր սովորողների կարիքներին:<br>➢ Դպրոցը չունի վեբ-կայք, որտեղ կլուսաբանվեր ձեռքբերումները և կառաջացնի մոտիվացիա:<br>➢ Սովորողները պասիվ են արտադասարանական միջոցառումներ նախաձեռնության գործում: |

<table>
<tr><td>3.1 Նպատակներ</td><td colspan="6">Կարողունակ քաղաքացիների ձևավորում՝ չափորոշչային կրթության որակի ապահովման միջոցով:</td></tr>
<tr><td>3.2 Խնդիրներ</td><td colspan="6">Սովորողների առաջադիմության բարելավում, կրթության մատչելիության ապահովում, սովորողների կողմից կրթական չափորոշիչների յուրացում՝ իրենց կարողություններին համապատասխան, դասավանդման և գնահատման նոր մեթոդների, հնարների և գործիքակազմի կիրառում, հետադարձ կապի ապահովում:</td></tr>
<tr><td>4.1 Գործողություններ ու միջոցառումներ</td><td>Արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը</td><td>Կազմակերպել ներդպրոցական վերահսկողությունը՝ թեստերի, դասալսումների, հարցաթերթիկների և այլ</td><td>Ստեղծել ուսումնական արտադասարանական խմբակներ:</td><td>Ստեղծել երկարօրյա խմբակներ՝ նպաստելով ցածր առաջադիմությամբ սովորողների առաջադիմության բարձրացմանը</td><td>Բանավեճերի, զրույցների, մրցույթների, քննարկումների միջոցով իրականացնել սովորողների համագործակցությունը իրենց հասակակիցն</td><td>Հետևել դպրոցական կարգապահությանը, միջավայրի անվտանգությանը, բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմանը</td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | միջոցների կիրառմամբ: | | : | երի հետ: | : | |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024_2029թթ. | | | | | | |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Տնօրեն, ուսումնական և կազմակերպչական  գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, դասղեկ, ուսուցիչ , ծնող, աշակերտ: | | | | | | |
| **6.1Ռիսկեր** | Սովորողների մոտիվացիայի պակաս և նյութատեխնիկական միջոցների սղություն: | | | | | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող** | | | | | | | |

| | |
|---|---|
| **գործողություններ** | Տարբեր միջոցներով խրախուսել և մոտիվացնել սովորողներին և հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան: |
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսական միջոցներ**՝ Բյուջե, արտաբյուջե, բարերարներ:<br><br>**Նյութատեխնիկական պարագաներ** ՝ Դպրոցի նյութատեխնիկական հագեցվածությունը:<br><br>**Մարդկային ռեսուրսներ**՝ Տնօրեն, ուսումնական և կազմակերպչական գծով փոխտնօրեն, մեթոդմիավորում, դասղեկ, ուսուցիչ , ծնող, աշակերտ: |

## 2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցում տիրում է հարգալից և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, սակայն կարիք կա բարձրացնել մեդիագրագիտության մակարդակը:

Դպրոցում չի իրականացվել բռնության կանխարգելման և հալածանքի վերաբերյալ սեմինար- քննարկումներ:

Դպրոցը չունի վեբ կայք որով հնարավոր կլիներ ապահովե ներառված սովորողների ծնողների հետ հետադարձ կապը:

Ֆիզիկական միջավայրը հարմարեցված ու հասանելի չէ բոլոր սովորողների առանձնահատկություններին:

Դպրոցում տիրում է անկաշկանդ միջավայր և սովորողներն ազատ արտահայտում են իրենց մտքերը, քննադատում կամ կատարում դիտարկումներ տարբեր հարցերի շուրջ:

Դպրոցը համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ և ունի մանկավարժահոգեբանական թիմ, որն օժանդակում է ԿԱՊԿՈւ սովորողների ուսուցման և ԱՈւՊ-ների լրացման գործընթացներին:

Դպրոցում իրականացվե են սոցիալական աջակցության ծրագրեր, որին մասնակից են եղել նաև ծնողներն ու սովորողները:

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Դպրոցում բոլորի համար ստեղծված է անվտանգ ու | ➢ ԿԱՊԿՈւ սովորողների համար դպրոցը չունի |

| | |
| --- | --- |
| հարգալից միջավայր, նաև՝ սոցիալապես անապահով, ԿԱՊԿՈւ սովորողների համար:<br>➢ Դպրոցում ստեղծված է սովորողների ազատ խոսքի , քննադատական մտածողության համար անհրաժեշտ անկաշկանդ մթնոլորտ:<br>➢ Դպրոցում ստեղծված է ուսուցիչների և սովորողների թիմային աշխատելու և համագործակցելու համար անհրաժեշտ անկաշկանդ միջավայր :<br>➢ Դպրոցի մուտքի մոտ կան թեքահարթակներ անվասայլակով տեղաշարժվողների համար:<br>➢ Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն:<br>➢ Դպրոցն ունի ԿԱՊԿՈւ սովորողների որակյալ կրթությունն ապահովող փորձառու և հմուտ բազմամասնագիտական մանկավարժական թիմ:<br>➢ Մանկավարժները տիրապետում են ԱՈւՊ-ների մշակմանն ու կիրառմանը:<br>➢ Դպրոցը հետևողական է սոցիալապես անապահով սովորողների նկատմամբ, նրանց տրամադրում է | ռեսուրս-սենյակ:<br>➢ Դպրոցը հագեցված չէ ԿԱՊԿՈւ սովորողների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներով:<br>➢ ԿԱՊԿՈւ սովորողների համար դպրոցը չունի սանհանգույց:<br>➢ Դպրոցն իր բազմամասնագիտական թիմին հաճախակի չի գործուղում մասնագիտական վերապատրաստումներին:<br>➢ Դպրոցում կրթության հավասարության համար հաճախակի չեն կազմակերպվում սեմինար-քննարկումներ:<br>➢ Դպրոցը պասիվ է էլեկտրոնային հարթակներում և լիարժեք չի ապահովում հետադարձ կապը սովորողների, նրանց ծնողների և համայնքի հետ:<br>➢ Ֆիզիկական միջավայրը ոչ բոլոր սովորողների համար է հասանելի՝ կախված նրանց առանձնահատկություններից: |

| | |
|---|---|
| անվճար դասագրքեր կամ այլ պարագաներ:<br>➢ ԿԱՊԿՈւ սովորողին տրամադրվում է աջակցություն նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:<br>➢ Դպրոցն իրականացնում է դասագրքերի համար վճարի զեղչեր սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: | ➢ Ոչ բոլոր սովորողներն են ներառվում համադպրոցական շաբաթօրյակներին: Հիմնականում նույն աշակերտներն են ընդգրկվում: |

| | | | |
|---|---|---|---|
| **3.1 Նպատակներ** | Ներառական կրթության պայմանների բարելավում և արդյունավետության բարձրացում, բարոյահոգեբանական միջավայրի ստեղծում: | | |
| **3.2 Խնդիրներ** | Դպրոցում ապահովել անվտանգ պայմաններ բոլոր սովորողների համար, ստեղծել առողջ բարոյահոգեբանակ միջավայր՝ կրթության հավասարության սկզբունքի պահպանմամբ, միջավայրի հարմարեցմամբ, դպրոցում ստեղծել անհրաժեշտ ռեսուրս-սենյակ և կահավորել : | | |
| **4.1** | ԿԱՊԿՈՒ սովորողների | Ֆիզիկական միջավայրը | Դպրոցում իրականացնել |

| | | | |
|---|---|---|---|
| **Գործողություններ ու միջոցառումներ** | համար ստեղծել ռեսուրս-սենյակ: | հարմարեցնել նրանց առանձնահատկությունների ն՝ ապահովելով անվտանգությունը: | միջոցառումներ ծնողազուրկ, սոցիալապես անապահով սովորողների բացահայտման և աջակցության տրամադրման ուղղություններով: |
| **4.2Գործողությունների ժամանակացույց** | 2024-2029թթ. | | |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Դպրոցի համակազմ, ծնողներ: | | |
| **6.1Ռիսկեր** | Ֆինանսական միջոցների սղության հետևանքով անհրաժեշտ միջավայրի ստեղծման անհնարինություն: | | |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Արտաբյուջեի ստեղծում , պետական բյուջեի տնտեսում, տարբեր մրցույթային ծրագրերի ակտիվ մասնակցություն, դպրոցի բյուջեի ճիշտ կառավարում: | | |

| | |
|---|---|
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսական միջոցներ**՝ պետբյուջե, արտաբյուջե, դրամաշնորհային ծրագրեր, բարերարներ:<br>**Նյութատեխնիկական պարագաներ** ՝ ուսումանկան դիդակտիկ պարագաներ, հարմարեցված կրթական միջավայր:<br>**Մարդկային ռեսուրսներ**՝ տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող, մանկավարժներ, ծնողներ: |

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Դպրոցում ուսուցչի դերը կարևորվում է, խրախուսվում է գովեստի, ճանաչման և արժևորման միջոցով, սակայն դրամական պարգևներ չի տրվել:

Երբեմն շնորհվել է շնորհակալագրեր՝ խրախուսելով անձնակազմի ձեռքբերումները, բայց ոչ նյութապես:

Դպրոցում աշխատակազմի ինքնակրթության համար բավարար պայմաններ ստեղծված չեն:

Կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման մրցույթներում ուսուցիչները հետաքրքրություն չեն դրսևորում, ուսուցիչների չնչին մասն է նախագծային աշխատանքներում մասնակցում: Մանկավարժների ինքնակրթության համար դպրոցում անհրաժեշտ միջավայր ձևավորված չէ: Դպրոցում վերապատրաստումների արդյունավետության ստուգում չի իրականացվում և հետադարձ կապ տալու, շարունակական աջակցության տրամադրման մեխանիզմը ձևական բնույթ է կրում:

Իքնակրթությամբ զբաղվող ուսուցիչների համար չկան անհրաժեշտ բավարար պայմաններ՝ առանձնացված հանգստի սենյակ, համակարգիչ, հարուստ գրականություն: Դպրոցն անձնակազմի անդամներին կրթական ռեսուրսներով չի ապահովում: Դպրոցը ուսուցիչների ձեռքբերումները չի հրապարակում, որը ևս խթան կհանդիսանան մյուսների համար:

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների՝

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ Դպրոցը գումար է տրամադրում և | ➢ Դպրոցը չի խրախուսում այն մանկավարժներին, որոնց |

| | |
|---|---|
| կազմակերպում է ուսուցիչների պարտադիր ատեստավորումը:<br>➢ Դպրոցն օժանդակում է ԿԶՆԱԿ-ի, ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված սեմինարներին մանկավարժների մասնակցությանը:<br>➢ Փորձի փոխանակման նպատակով իրականացնում է փոխադարձ դասալսումներ:<br>➢ Դպրոցն ապահովում է մասնագիտական աճի հնարավորություն ուսուցիչների համար:<br>➢ Դպրոցն ուսուցիչների կերպարը դրականորեն է ներկայացնում ծնողներին և աշակերտներին՝ նպաստելով նրա հեղինակության բարձրացմանը:<br>➢ Դպրոցում պահպանված է ուսուցիչների համար դրական արժևորման մթնոլորտ:<br>➢ Ուսուցիչների հանդեպ հարգալից վերաբերմունք կա և՛ կոլեկտիվի, և՛ ծնողների և՛ աշակերտները կողմից: | սաները հաջողություններ են գրանցել մարզային կամ հանրապետական օլիմպիադաներում կամ այլ մրցույթներում:<br>➢ Դպրոցը չի ուղղորդում կամ մոտիվացնում ուսուցիչներին, որպեսզի մասնակցեն կամավոր ատեստավորմանը և որակավորման տարակարգին:<br>➢ Դպրոցը շռայլ չի գովեստի կամ արժևորման միջոցով մանկավարժներին խրախուսելու գործում:<br>➢ Դպրոցը չունի արտաբյուջե , որով կկարողանա ուսուցչին նյութական խրախուսանք տալ:<br>➢ Ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչների համար չկան անհրաժեշտ բավարար պայմաններ՝ առանձնացված հանգստի սենյակ, համակարգիչ, հարուստ գրականություն:<br>➢ Դպրոցն անձնակազմի անդամներին կրթական ռեսուրսներով չի ապահովում:<br>➢ Դպրոցը ուսուցիչների ձեռքբերումները չի հրապարակում, որը ևս խթան կհանդիսանան մյուսների համար:<br>➢ Լավագույն նախագծերը չեն պարգևատրվել: |

| | |
|---|---|
| ➢ Դպրոցն արդար և անկողմնակալ վերաբերմունք է դրսևորում բոլոր աշխատակիցների հանդեպ: | |

| | | | |
|---|---|---|---|
| **3.1 Նպատակներ** | Մանակավարժների մասնագիտական որակների բարելավում և նրանց խրախուսման, արժևորման ու ինքնակրթության բարձրացում: | | |
| **3.2 Խնդիրներ** | Խրախուսման միջոցով մանկավարժների շրջանում ստեղծել առողջ մրցակցային միջավայր, ստեղծել ինքնակրթությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմաններ, բարձրացնել ուսուցիչների դերը սովորողների և նրանց ծնողների շրջանում, պարգևատրել և ոգևորել բարձր ակտիվություն ցուցաբերող և անընդհատ կատարելագործվող ուսուցիչներին: | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Նյութական ու ոչ նյութակ միջոցներով խրախուսել մանկավարժների ձեռքբերերումները: | Ողղորդել և մոտիվացնել ուսուցիչներին, որպեսզի մասնակցեն կամավոր ատեստավորմանը, տարակարգի շնորհման մրցույթներին: | Ուսուցիչներին ուղղորդել մասնակցելու ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորած սեմինարներին: |

| | |
|---|---|
| **4.2Գործողություն ների ժամանակացույց** | 2024-2029թթ. |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատու ներ** | Տնօրեն, ուսումնական և կազմակերպչական գծով փոխտնօրեններ, մեթոդիստներ, ուսուցիչներ, ծնողներ: |
| **6.1Ռիսկեր** | Ուսուցիչների մոտ մոտիվացիայի պակաս: |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Այլ անձանց դրական օրինակներով մոտիվացնել ուսուցիչներին: |
| **7.Ուսումնական հաստատության** | |

| | |
|---|---|
| **զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսական միջոցներ՝** պետբյուջե, բարերարներ, արտաբյուջե:<br>**Նյութատեխնիկական պարագաներ՝** պատվոգրեր, մեդալներ, շնորհակալագրեր, դրամական պարգևներ:<br>**Մարդկային ռեսուրսներ՝** ուսուցիչներ, տնօրեն, փոխտնօրեններ: |

## 2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից: Ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով այն տեղադրվում է դպրոցի կայքում:

Բյուջեի ծախսերի ուղղություններն են՝

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ( նաեւ եկամտահարկը),
2. Կոմունալ վճարումներ,

3. Գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
4. Գույք և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
5. Կապիտալ ծախսեր,
6. Այլ ծախսեր:

01.01.2022 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **1457600 դրամ**, 2022 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 43.187,500 **դրամ**, ընդամենը՝ 2022 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **44645100 դրամ:**

01.01.2023 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **469200 դրամ**, 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ կատարվել է 8 ամսվա համար՝ **28829000 դրամ,** ընդամենը՝ 2023 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **29298200 դրամ :**

| 2023թ. | Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/ | Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/ |
|---|---|---|
| Տնտեսագիտական դասակարգման | | |

| | | |
|---|---|---|
| հոլածների անվանումները | | |
| Նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը | 0 | 0 |
| Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | 0 | 0 |
| Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը | 0 | 0 |
| Աշխատավարձերի վճարման գծով տարեկան ծախսերի չափը | 26 000.0 | 16 822.5 |
| Կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափը | 1 630.0 | 1 506.7 |
| Նոր գույքի,սարքավորումների ձեռք բերման գծով տարեկան ծախսերի չափը | 0 | 0 |

| Ցուցանիշներ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023_2024ուստարի | Փոփոխություններ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Վարչական աշխատողների միջին աշխատավարձ | 112 000 դրամ | 112 000 դրամ | 227 400 դրամ | Աճ |
| Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը | 389 119 դրամ | 394 454 դրամ | _ | Աճ |
| Ուսուցչի տարեկան միջին աշխատավարձը | 1 086 933 դրամ | 1 086933 դրամ | 1 337 422 դրամ | Աճ |
| Սպասարկող կազմի միջին աշխատավարձը | 1 146 244 դրամ | 1 272 966 դրամ | 1 805 146 դրամ | Աճ |

Ստորև ներկայացված է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական նպատակով կատարված ծախսերի՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Դպրոցի բյուջեի պլանավորումն իրականացվում է հաշվի առնելով դպրոցի և սովորողների կարիքները, հաստատության ուսումնական պլանը, մասնաշենքի պահպանումը, առկա ռեսուրսները:<br>➢ Դպրոցի բյուջեն ձևավորում է համաձայն <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգի>>: https://www.arlis.am/documentview.aspx?docid=168828<br>➢ Դպրոցը եռամսյակը մեկ հրապարակում է ֆինանսական հաշվետվությունը:<br>➢ Իրականացնում է պետբյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին | ➢ Դպրոցի ֆինանսավորումը հիմնականում կատարվում է պետբյուջեից և չի մասնակցում դրամաշնորհային մրցույթներին, չունի արտաբյուջե:<br>➢ Աշակերտների թվի քիչ լինելու պատճառով քիչ է նաև դպրոցի բյուջեն:<br>➢ Ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպում, դպրոցի ֆինանսական մուտքերի և դրանց փոփոխությունների կանխատեսում և ծախսերի արդյունավետ բաշխում,<br>➢<br>➢ Դպրոցը չունի բարերարներ և նվիրատուներ:<br>➢ Դպրոցի տարածքը վարձակալությամբ չի տրամադրվում ոչ դպրոցական խմբակների համար: |

| | |
|---|---|
| փոխանցումներ՝ աշխատավարձեր, կոմունալ ծախսերի ժամանակին փոխանցումներ:<br>➢ Դպրոցի բյուջեն օգտագործվում է նպատակին և արդյունավետ:<br>➢ Դպրոցն ունի տնտեսված ֆինանսական միջոցներ:<br>➢ Դպրոցի բյուջեից գումար է տրամադրվում ուսուցիչների պարտադիր ատեստավորման համար իրականացվող վերապատրաստման մասնակցելու նպատակով:<br>➢ Բյուջեի ծախսման ուղղություններց շեղումներ չի գրանցվել: | ➢ Դպրոցում չի իրականացվում ձեռնարկատիրական գործունեություն:<br>➢ Դպրոցի բյուջեն հիմնականում ուղղվում է աշխատավարձերին և կոմունալ ծախսերին և ուսումնական նպատակով կատարվող ծախսերը քիչ են:<br>➢ Դպրոցը չունի լրացուցիչ ֆինանսական միջոցներ:<br>➢ Դպրոցի բյուջեն հիմնականում ուղղվում է աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին ու դպրոցի պահպանման ծախսերին, իսկ ուսումնական նպատակով կատարված ծախսերը քիչ են:<br>➢ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **3.1 Նպատակներ** | Ապահովել ֆինանսատնտեսական միջոցների աճ: | | | |
| **3.2 Խնդիրներ** | Արտաբյուջեի ստեղծում, պետական բյուջեի մեծացում՝ աշակերտների թվի աճի ապահովման միջոցով, դպրոցի բյուջեի ճիշտ կառավարում: | | | |
| **4.1 Գործողություններ ու միջոցառումներ** | Ստեղծել արտաբյուջե՝ մասնակցելով դրամաշնորհային ծրագրերի, դպրոցի տարածքը տրամադրել վարձակալությամբ:<br>: | Ավելացնել սովորողների և կազմավորված դասարանների թիվը, և հետևաբար նաև՝ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումը: | Գտնել բարերարներ և հովանավորներ: | Դպրոցում ծավալել ձեռնարկատիրական գործունեություն: |
| **4.2Գործողությու** | | | | |

| | |
|---|---|
| **ների ժամանակացույց** | 2024-2029թթ |
| **5.Զարգացման ծրագրի կատարման համար պատասխանատուներ** | Տնօրեն, համապատասխան մասնագետներ: |
| **6.1Ռիսկեր** | Երկրում արտակարգ դրության ստեղծում և համապատասխան մարմինների կողմից ֆինանսական միջոցների տրամադրում դրանց հետևանքների նվազեցմանը: |
| **6.2Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ** | Դպրոցի տարածքում ջերմոցի կառուցման և շահագործման, արևային համակարգի տեղադրման միջոցով արտաբյուջեի ավելացում: |

| | |
|---|---|
| **7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները** | **Ֆինանսական միջոցներ՝**<br>Պետբյուջե և արտաբյուջե, ձեռնարկատիրական գործունեության ծավալում:<br><br>**Մարդկային ռեսուրսները՝**<br>Բոլոր շահագրգիռ անձինք, դպրոցի համակազմ:<br><br>**Նյութատեխնիկական պարագաներ՝**<br>Ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ պարագաներ, շինանյութ: |

## 3. Նպատակներ և խնդիրներ

**<<Կրթության ամբողջ նպատակը հայելիները**
**պատուհաններ դարձնելն է>>:** ՍԻԴՆԵՅ Ջ.ՀԱՐԻՍ

Նպատակն, այն ցանկալի արդյունքն է, որ մարդ կամ համակարգ պատկերացնում է, պլանավորում և պարտավորվում հասնել անձնական կամ կազմակերպական ցանկալի վերջնակետի ակնկալվող զարգացման պարագայում:

Խնդիրները նպատակների իրականացման համար միջոցներն են:

Դպրոցի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը նպատակաուղղված է հաստատության հետագա արդյունավետ գործունեության և աստիճանական զարգացման ապահովմանը,նպատակային խնդիրների լուծմանը,այդ գործում ներգրավելով՝ կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին, շահագրգիռ կողմերին՝ բարձրացնելով կրթադաստիարակչական աշխատանքների որակը, ապահովելով՝ բաց մասնակցային կառավարումը,բարձրացնելով՝ դպրոցի նկատմամբ վստահությունը:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները սահմանված են և նշված աղյուսակի տեսքով՝ վերոնշյալ կրթական յուրաքանյուր ոլորտի համար առանձնացված ենթաբաժիններում:

**Հաստատության հիմնախնդիրներն են**

- Կրթական կարիքներին համապատասխան ժամանակակից կրթական միջավայրի ապահովում,
- Դպրոցի շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի հարստացում,
- Դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքների բարելավում,
- Սովորողների համար ուսուցման նկատմամբ մոտիվացիայի բարձրացում,
- Ուսուցիչների տարաբնույթ կրթական բնույթի վերապատրաստումների իրականացում, միմյանց միջեւ փոխադարձ կապի ապահովում՝ դասալսումների իրականացման և քննարկումների միջոցով:
- Ակտիվացնել դպրոցի փիամագործակցությունը համայնքի, կրթության կառավարման ղեկավար մարմինների հետ:
- Բարոյա-հոգեբանական նպաստավոր միջավայրի ստեղծում, դպրոցում հալածանքի, բռնության, օտարման միջավայրի բացառում, ուսուցիչ-աշակերտ-ծնող կապի պահպանում:
- Սովորողների և մանկավարժների խրախուսման, արժեորման միջոցների ձեռնարկում, ինքնակրթության համար նպաստավոր միջավայրի ապահովում:
- ՏՀՏ գործիքների տիրապետման նպատակով ուսուցիչների համար վերապատրաստումների իրականացում, համակարգչային են էլեկտրոնային սարքերի ավելացում:
- Ֆինանսական միջոցների ավելացում՝ աշակերտների թվի աճի ապահովման և արտաբյուջեի ստեղծման, պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման միջոցներով:

## 4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացմումն ապահովող գործողություններ ու միջոցառումներ

Սույն զարգացման ծրագրում նշված կրթության յուրաքանյուր ոլորտի համար հստակ նշված են գործողություններ և դրանց կատարման ժամանակացույց, որոնք կապահովեն ծրագրում սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը: Ներկայացված է յուրաքանչյուր ենթաբաժնում՝ աղյուսակի տեսքով:

## 5. Զարգացման ծրագրի կատարման պատասխանատուներ

Սույն զարգացման ծրագրում յուրաքանչյուր գործողության համար նշված են պատասխանատու անձինք, որոնց գործողությունները կապահովեն ծրագրի իրականացումը, իսկ անգործությունը կհանգեցնի ծրագրի կատարման անհնարինության կամ ոչ պատշաճ կատարման: Աղյուսակի տեսքով նրաք ներկայացված են կրթության վերոնշյալ ոլորտներում :

## 7 Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը

Յուրաքանչյուր աշխատանք կատարելիս նախ և առաջ պետք է կատարել ռիսկերի գնահատում, վեր հանել այն խոչընդոտները, որոնք կարող են հանգամանքների բերումով անհնարին դարձնել կամ խանգարել ծրագրի պատշաճ իրականացումը:

Իմ կողմից կազմած ուսումնական հաստատության զարգացման ծրագրում ևս վեր եմ հանել այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել զարգացման ծրագրի իրականացումը, ինչպես նաև նշել այդ ռիսկերը մեղմացնող միջոցներ: Դրանք ներկայացված են յուրաքանչյուր ոլորտում առանձին-առանձին՝ աղյուսակի տեսքով:

## 8. Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները

Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն են մարդկային ռեսուրսները, ֆինանսական միջոցները, անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովումը, նյութատեխնիկական պարագաները, կահավորումը և այն ամենն, ինչը ևս կապահովի սույն ծրագրի իրականացումը: Այդ միջոցներն ավելի մանրամասն ներկայացված են վերոնշյալ ոլորտներում:

## 6.Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

Զարգացման ծրագիրը գնահատելիս հաշվի է առնվում,թե՝

- համապատասխան աշխատանքներ կատարողներն աշխատանքի կատարման ընթացքում որքանով են պահպանել նորմատիվ իրավական ակտերին պահանջները,

- որքանով է բարելավվել դպրոցի շենքային պայմաններն ու հարստացել նյութատեխնիկական բազան,
- որքանով է բարձրացվել ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը,
- որքան մոտիվացնող ու հարմարավետ է դարձել կրթական միջավայրը,
- հաստատության կառավարման ու ղեկավարման գործում որքանով են մասնակից լինում ուսուցիչները, ծնողները, խորհուրդներն ու այլ շահագրգիռ անձինք ու կազմակերպությունները,
- որքանով է կրթական միջավայրն անվտանգ սովորողների և աշխատողների համար,
- մանկավարժների խրախուսման ինչ արդյունավետ միջոցներ են կիրառվել:

| Բաժիններ | Գործողություններ | Գնահատման սանդղակ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գերազանց | Բավարար | Անբավարար | |
| 1.Դպրոցի շենքային պայմաններն ու նյութատեխնիկական | 1. Վերանորոգել դպրոցը (դասասենյակներ, միջանցք, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ) ____________ 2. Դպրոցում ստեղծել | Դպրոցը դարձել է **ամբողջությամբ** վերանորոգված (բարեկարգ | Դպրոցը դարձել է **կիսով չափ՝ 50%-ով,** վերանորոգված (հանդիսությունների դահլիճ, | Դպրոցի վերանորոգման ու նյութատեխնիկական բազայի հարստացմանն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բազան | ընթերցասրահ՝ հագեցված նոր և ժամանակակից գրականությամբ:<br>____________<br>3. Դպրոցում ստեղծել առարկայական դասասենյակներ և լաբորատորիաներ:<br>____________<br>4. Սանհանգույցներից մեկը հարմարեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունների, դպրոցում ստեղծել ռեսուրս-սենյակ :<br>____________<br>5. Դպրոցի բակում կառուցել ջերմոց:<br>____________<br>6. Բարեկարգել դպրոցի բակը. այնտեղ տեղադրել նստարաններ, աղբամաններ և ստեղծել խաղահրապարակ:<br>____________<br>7. Վերանորոգել և հնարավորության դեպքում, | բակ, ջերմոց, ԿԱՊԿՈւ սովորողների համար առանձնացված սանհանգույց, դասասենյակներ, միջանցք, մարզադահլիճ, ՆԶՊ սենյակ և հանդիսություններ դահլիճ) և **ամբողջությամբ ձեռք է բերել անհրաժեշտ** նյութատեխնիկական պարագաները՝ զինվելով առարկայական կաբինետներով ու լաբորատորիաներով, էլեկտրատեխնիկական սարքավորումն | դասասենյակներ, միջանցք) և նյութատեխնիկական բազայով **բավարար չափով** համալրված դպրոց: | ուղղված **ոչ մի աշխատանք չի կատարվել**: | Գնահատման չափանիշներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նորով փոխարինել դպրոցի գույքը:<br>____________<br>8. Ավելացնել մարզադահլիճի,ՆԶՊ դասասենյակի մարզական կահավորումը՝ համագործակցելով նաև ՊՆ-ի, ԱԻՆ-ի հետ, համագործակցելով համայնքային բուժհաստատությունների հետ՝ հարստացնել բուժկետի դեղորքային հագեցվածությունը: Անվտանգության նկատառումներով դպրոցում տեսախցիկների տեղադրել:<br>_______________<br>9. Դասասենյակներրը զինել ուսումնամեթոդական դիդակտիկ պարագաներով, նյութերով :<br>_______________<br>10. Դպրոցը զինել էլեկտրատեխնիկական միջոցներով: | երով հագեցված առաջադեմ դպրոց: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 2.Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքները | ***<u>Ա/ Սովորողներին ուղղված գործողություններ</u>***՝<br>1. Արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը<br>_______________<br>2. Կազմակերպել ներդպրոցական վերահսկողությունը՝ թեստերի, դասալսումների, հարցաթերթիկների և այլ միջոցների կիրառմամբ:<br>_______________<br>3. Ստեղծել ուսումնական արտադասարանական խմբակներ:<br>_______________<br>4. Ստեղծել երկարօրյա խմբակներ՝ նպաստելով ցածր առաջադիմությամբ սովորողների առաջադիմության | Նշված ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարվել են **ամբողջ ծավալով** և սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեն **էական ազդեցություն:**<br>_______________<br>Ա/ Սովորողի ուսուցումն ու դաստիարակու | Նշված ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարվել են **կիսով չափ** և սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեն **չափավոր** ազդեցություն: | Նշված ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարվել են **մասնակի ու ձևական բնույթ են կրել** և սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեն **էական ազդեցություն չեն ունեցել:**<br>_______________<br>Ա/ Սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բարձրացմանը:<br>________________<br>5. Բանավեճերի, զրույցների, մրցույթների, քննարկումների միջոցով իրականացնել սովորողների համագործակցությունը իրենց հասակակիցների հետ:<br>______________________<br>***Բ/ Ուսումնական միջավայրին ուղղված գործողություններ***՝<br>6. Ստեղծել բարեկարգ ու անվտանգ ուսումնական միջավայր, որտեղ | թյունը կազմակերպվել է **արդյունավետ** և իրականացվել է ներդպրոցակա ն **բոլոր** վերահսկողությ ան միջոցները, ստեղծվել և **արդյունավետ** գործում են ուսումնադաստ իարակչական, երկարօրյա խմբակներրը<br>______________<br>***Բ/***<br>Դպրոցում ստեղծված է ***որակյալ*** կրթական միջավայր, որն ունի **լավագույն** պայմաններով գործող | ______________<br>**Ա/**<br>Սովորողի ուսուցումն ու դաստիարակու թյունը կազմակերպվել է **կիսով չափ արդյունավետ** և իրականացվել է ներդպրոցական **ոչ բոլոր** վերահսկողությ ան միջոցները, ստեղծվել, սակայն **արդյունավետ չեն** գործում ուսումնադաստի արակչական, երկարօրյա խմբակները:<br>______________<br>**Բ/** | կազմակերպվել է **անարդյունավե տ** և **չի իրականացվել** ներդպրոցակա ն վերահսկողությ ան միջոցներ, ուսումնադաստ իարակչական, երկարօրյա խմբակներ **չեն ստեղծվել:**<br>______________<br>**Բ/**<br>Դպրոցում ստեղծված է ***ցածր որակ*** կրթական միջավայր, որի գրադարանը հագեցած է միայն դասագրքերով | Գնահատմ ան չափանիշն եր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պահպանվում է սովորողների առողջությունն ու հավասարությունը և հագեցված է անհրաժեշտ ուսումնական գույքով ու ռեսուրսներով:<br>_____________<br>7. Հետևել դպրոցական կարգապահությանը, միջավայրի անվտանգությանը, բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմաը:<br>______________<br>8. Դպրոցում իրականացվում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ ձևավորելու անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններու հմտություններ: | գրադարան, լաբորատորիաներ և առարկայական կաբինետներ, սպորտդահլիճ, որոնք հագեցած են անհրաժեշտ նյութերով և **դպրոցում առկա է անվտանգ միջավայր** և տիրում է **առողջ** բարոյահոգեբանական մթնոլորտ և **բացակայում է** սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր : | Դպրոցում ստեղծված է **բավարար մակարդակ ապահովող** կրթական միջավայր, որն ունի **բավարար** գրականությամբ հագեցած և գործող գրադարան, **բավարար հագեցվածությամբ** լաբորատորիաներ և առարկայական կաբինետներ, սպորտդահլիճ, դպրոցում տիրում է **առողջ** բարոյահոգեբան մթնոլորտը, սակայն միջավայրն **այնքան էլ** | և **չունի** գեղարվեստական և մանկավարժների համար մեթոդական գրականություն , լաբորատորիաները և առարկայական կաբինետները չեն գործում , սպորտդահլիճն անմխիթար վիճակում է, դպրոցում տիրում է **անառողջ** բարոյահոգեբանական մթնոլորտ, և **առկա է** սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Գ/**<br>***Կրթության չափորոշչով սահմանված կրթության բովանդակության պահպանում և սովորողների խրախուսում***<br><br>9. Սովորողների կրթությունն իրականացնել նոր ՀՊՉ-ով:<br>10. Դպրոցում իրականացնել ձևավորող և միավորային գնահատում:<br>11. Սովորողների մոտ առաջադիմության և որակի աճ ապահովել:<br>12. Արտակարգ ընդունակություններ ունեցող և ցածր | **Գ/**<br>**Ամբողջովին** կատարվել են նշված աշխատանքները:<br>Դպրոցում ամբողջությամբ **ճիշտ** է իրականացվում սովորողների առաջադիմության գնահատումը: Սովորողների մոտ առկա է կրթության առաջադիմության և որակի **զգալի աճ,** | **անվտանգ չէ**, դպրոցական կարգապահությունն **ամբողջությամբ չի վերահսկվում**:<br><br>**Գ/**<br>Նշված աշխատանքները կատարվել են **մասնակի**: Դպրոցում սովորողների առաջադիմության գնահատումը **թերի է** իրականացվում, ուսուցիչներն | հոգեբանական ճնշման դեպքեր:<br><br>**Գ/**<br>Նշված աշխատանքները **չեն կատարվել**, և սովորողների մոտ առկա է կրթության առաջադիմության և որակի **նվազում, սովորողներն չեն մասնակցում** առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին: Դպրոցում սովորողների գնահատման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | առաջադիմություն ունեցող սովորողների համար իրականացնել անհատական ուսուցում և պարապմունքներ:<br>13. Սովորողների մոտ զարգացնել չափորոշչային կարողունակություններ:<br>14. Սովորողների մոտ զարգացնել մոտիվացիան օլիմպիադաների և առարկայական ու ուսումնադաստիարակչական մրցույթներին մասնակցելու հանդեպ:<br>15. Սովորողների մոտ զարգացնել հիմնարար գիտելիքները, կենսական հմտություններ ձևավորել առողջության պահպանման, առողջ սնուցմանն ուղղված:<br>16. Դպրոցում իրականացնել սովորողների գիտելիքների արժանահավատ ու արդար գնահատում:<br><br>17. Մեդալով, պատվոգրերով, | **սովորողներն ակտիվ** մասնակցում են առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին և ցուցաբերում **բարձր** արդյունքներ, նրանք ստացած գիտելիքներն **ակտիվորեն** կիրառում են նախագծային և այլ աշխատանքներում: Դպրոցի կողմից **միշտ** խրախուսվում է սովորողների առաջադիմությունն ու ձեռքբերումները: | ամբողջովին չեն յուրացրել գնահատման նոր համակարգը: Սովորողների մոտ առկա է կրթության առաջադիմության և որակի **չնչին աճ**,սովորողները մասնակցում են առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին, սակայն ցուցաբերում են **ցածր** արդյունքներ, այդ գիտելիքները **հազվադեպ են** կիրառում կյանքում : | աշխատանքը ձախողված է: Դպրոցը սովորողների առաջադիմության խրախուսում **չի իրականացնում:** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | շնորհակալագրերով պարգևատրել առարկայական և ոչ առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում բարձր ցուցանիշներ ցուցաբերած սովորողներին:<br><br>18. Գովասանագրերով, շնորհակալագրերով պարգևատրել բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին:<br><br>19. Սովորողների հաղթանակներն ու ձեռքբերումները լուսաբանել դպրոցի կայքում:<br><br>________________________<br>***Դ/ Մանկավարժական կազմին և վարած դասերի որակի սպուգման ուղղված գործողություններ՝***<br><br>20.ՏՀՏ գործիքների | ______________<br>**Դ/**<br>**Բոլոր** ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժակ | Դպրոցի կողմից **ոչ միշտ է** խրախուսվում սովորողների ձեռքբերումներն ու առաջադիմությունը: | ______________<br>**Դ/**<br>Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժակ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տիրապետման և ՀՊՉ-ի ճիշտ կիրառմանը նպաստող վերապատրաստումներ իրականացնել:<br><br>21. Իրականացնել մասնագիտական քննարկումներ:<br><br>22. Իրականացնել ներքին գնահատում:<br><br>23. Հաճախակի իրականացնել դասալսումներ և քննարկումներ<br><br>24. Մեթոդմիավորումների հետ իրականացնել վերլուծություն դասերի որակի վերաբերյալ, քննարկել ուսուցիչների հետ, վեր հանել խնդիրները և մշակել դրանց շտկմանն ուղղված քայլեր:<br><br>25. Ուսուցիչներին հաճախակի | ան կրթություն , նրանց **70%-ը** տիրապետում է ՏՀՏ գործիքներին և կիրառում ուսումնական գործընթացում, **ակտիվ** մասնակցում են մեթոդմիավորումներին, նաև տարբեր կրթական վերապատրաստումների, հաճախ են կատարում փոխադարձ դասալսումներ և քննարկումներ, **հաճախ** են օգտվում կրթական առցանց հարթակներից՝ | ____________<br>Դ/<br>**Բոլոր** ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն , նրանց **20%-ն** է տիրապետում ՏՀՏ գործիքներին և կիրառում ուսումնական գործընթացում, **ակտիվ** մասնակցում են մեթոդմիավորումների, նաև տարբեր կրթական վերապատրաստումների, հաճախ են կատարում դասալսումներ և քննարկումներ, | ան կրթություն , **նրանք չեն տիրապետում** ՏՀՏ գործիքներին **և չեն կիրառում** ուսումնական գործընթացում, **բոլորովին չեն** մասնակցում տարբեր կրթական վերապատրաստումների,կամ ավոր ատեստավորման և **չունեն** տարակարգ : Նրանք **չեն օգտվում** կրթական առցանց հարթակներից: Նրանց վարած դասերն **անարդյունավետ են:** | Գնահատման չափանիշներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մասնակից դարձնել մասնագիտական վերապատրաստումներին:<br><br>26.Ուսուցիչներին հորդորել հաճախակի օգտվել ԿՁՆԱԿ-ի առցանց հարթակից և վերահսկել այն: | այդ թվում նաև ԿՁՆԱԿ-ի, նրանց **40%**-ը մասնակցել կամավոր ատեստավորման և ցուցաբերել դրական արդյունք, տարակարգ ստացած ուսուցիչների թիվը **50%** է: Նրանք **միշտ** վարում են հետաքրքիր և **բարձր արդյունավետություն** ցուցաբերող դասեր: | **հազվադեպ են** օգտվում կրթական առցանց հարթակներից՝ այդ թվում նաև ԿՁՆԱԿ-ի, **սակայն նրանց 20%-ն** է մասնակցել կամավոր ատեստավորման և ցուցաբերել դրական արդյունք, տարակարգ ստացած ուսուցիչների թիվը **20**% է: Նրանց վարած դասերը **ոչ միշտ** են տալիս բարձր արդյունք սովորողների շրջանում: | | Գնահատման չափանիշներ |
| 3.Բազմակարծիք, | ***Ա/ Ժողովրդավար մշակույթի ձևավորում և*** | Դպրոցում սովորողների | | Դպրոցում **բացակայում է** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ներառական և մասնակցային արժեքային միջավայր | **համընդհանուր ներառականության ապահովում**<br><br>1. Դպրոցում ստեղծել հավասար պայմաններ դպրոց ընդունվող և դպրոցում սովորող բոլոր սովորողների համար:<br><br>2. Դպրոցի ուսումնական գործընթացում ապահովել բոլոր սովորողների մասնակցության համար հավասար պայմաններ՝ անկախ նրանց կարիքներից, կարողություններից ու սոցիալական խոցելիության աստիճանից:<br><br>3. Դպրոցում ստեղծել ներառական և հարգալից միջավայր:<br><br>4. Խրախուսել սովորողների | իրավունքներն ու շահերը պաշտպանվում են **հավասարապես**, ուսումնական գործընթացում ներառված են **բոլոր** սովորողները, **խրախուսվում է** այլակարծությունը և **խթանվում է** ազգային ու համամարդկային արժեքները:<br><br>Ա/ Դպրոցում բոլոր | Դպրոցում սովորողների իրավունքներն ու շահերը պաշտպանվում են **անհավասարապես**, երբեմն գրանցվել են սովորողների իրավունքներն ու շահերը ոտնահարող դեպքեր, ուսումնական գործընթացում **սահմանափակ թվով** սովորողներ են ներառված, **սահմանափակվում է** այլակարծությունը և | սովորողների իրավունքների ու շահերի պաշտպանություն, ուսումնական գործընթացում ներառված **չեն բոլոր** սովորողները, **չկա** այլակարծությունը և **ձևավորված չէ** ազգային ու համամարդկային արժեքները: | Գնահատման չափանիշներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կարծիքներ ու գաղափարնե արտահայտելու ցանկությունը և դրանք հաշվի առնել որոշումների կայացման գործում:<br><br>5. Դպրոցում ստեղծել սովորողների և աշխատողների համար ազատ, անկաշկանդ և անվտանգ միջավայր: | սովորողների կրթության համար տիրում է **լիարժեք** հավասարությա ն մթնոլորտ , ներառական և հարգալից միջավայր: **Միշտ կարևորվում և խրախուսվում է** այլակարծությու նը, սովորողների արտահայտվելո ւ ցանկությունը և նրանց գաղափարները **հաճախակի են** հաշվի առնվում որոշումների կայացման գործում: | **խեղաթյուրված է** ազգային ու համամարդկայի ն արժեքները:<br>______________<br>**Ա**/ Դպրոցում ոչ բոլոր սովորողների համար է ստեղծվել **կրթության համար հավասար պայմաններ**, ներառական և հարգալից միջավայր: Միշտ կարևորվում և խրախուսվում է սովորողների արտահայտվելո ւ ցանկությունը , նրանց գաղափարները | **Ա**/ Դպրոցում բոլոր սովորողների կրթության համար **բացակայում է** հավասար պայմաններ, ներառական և հարգալից միջավայր: **Երբեք չի** կարևորվում և խրախուսվում է սովորողների արտահայտվել ու ցանկությունը և նրանց գաղափարները **հաշվի չեն** առնվում որոշումների կայացման գործում: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **B/ Ֆիզիկական միջավայրը հարմարեցում**<br><br>1. Ֆիզիկական միջավայրը հարմարեցնել և մատչելի ու հասանելի դարձնել բոլոր սովորողների առանձնահատկությունների՝ ապահովելով անվտանգությունը:<br><br>2. Դպրոցը համալրել ներառական կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ սարքերով, դիդակտիկ նյութերով և ձեռնարկներով: | **B/** Դպրոցի ֆիզիկական և կրթական միջավայրն **ամբողջովին** անվտանգ է և հարմարեցված, **մատչելի և հասանելի է** բոլոր սովորողների համար, **ամբողջությամբ** համալրված է անհրաժեշտ գույքով և ստեղծված է ԿԱՊԿՈւ սովորողների համար անհրաժեշտ պայմաններով : | **հաշվի չեն առնվում** որոշումների կայացման գործում:<br><br>**B/**Դպրոցի ֆիզիկական և կրթական միջավայրն **ամբողջովին** անվտանգ է, սակայն **կիսով չափ է** հարմարեցված, **մատչելի և հասանելի** չէ | **B/** / Դպրոցի ֆիզիկական և կրթական միջավայրն **անվտանգ չէ, հարմարեցված, մատչելի և հասանելի չէ** բոլոր սովորողների համար, համալրված չէ անհրաժեշտ գույքով և ԿԱՊԿՈւ սովորողների | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3. ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծել ռեսուրս-սենյակ:<br><br>4. Դպրոցի վեբ կայքում ստեղծել ներառական կրթության բաժին՝ դպրոց-ընտանիք-համայնք փոխադարձ կապի ապահովման համար:<br><br>5. Դպրոցի ֆիզիկական միջավայրը դարձնել առավելագույն անվտանգ՝ դպրոցում ունենալ հակահրդեհային համակարգ, տարհանման պլան, տեսախցիկներ, բակապահ, գրաֆիկով սահմանված հերթապահություն: | | բոլոր սովորողների համար, **մասամբ է** համալրված է անհրաժեշտ գույքով և ԿԱՊԿՈւ սովորողների համար ոչ բոլոր անհրաժեշտ պայմաններով : | համար անհրաժեշտ պայմաններով : | Գնահատման չափանիշներ |
| | **Գ/ Ուսուցիչների մասնակցային աշխատանքների** | **Գ/** Ուսուցիչները **միշտ ակտիվ** մասնակցում են ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, | | **Գ/** Ուսուցիչները | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **կատարում և մասնակցային կառավարում**<br><br>1. Դպրոցում ապահովել սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմի ներկայությունը:<br><br>2. Դպրոցի բազմամասնագիտական թիմին պարբերաբար մասնակից դարձնել ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստումներին և առաջավոր փորձը ներդնել ուսումնական գործընթացում:<br><br>3. Մանկավարժներին պարբերաբար մասնակից դարձնել նոր ՀՊՉ-ի հիման ԱՈւՊ-ների մշակման և լրացմանն ուղղված սեմինար - քննարկումներին: | գնահատման, մեթոդների մշակման աշխատանքներին, **լիովին** ներգրավված են համագործակցային աշխատանքներում, լավագույն փորձի փոխանակման և շարունակական մասնագիտական զարգացման մեջ: | ______________<br>**Գ/**<br>Ուսուցիչները **հազվադեպ են** մասնակցում ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, գնահատման, մեթոդների մշակման աշխատանքներին, **մասամբ** են ներգրավված համագործակցային աշխատանքներում, լավագույն փորձի փոխանակման և շարունակական մասնագիտակա | **չեն մասնակցում** ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, գնահատման մեթոդների մշակման աշխատանքներում, **բոլորովին ներգրավված չեն** համագործակցային աշխատանքներում, լավագույն փորձի փոխանակման և շարունակական մասնագիտական զարգացման մեջ: | Գնահատման չափանիշներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 4. Ուսուցիչներին ակտիվ մասնակից դարձնել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, գնահատման մեթոդների մշակման մեջ:<br><br>5. Ուսուցիչներին մշտապես ներգրավվել լավագույն փորձի փոխանակման, միմյանց հետ համագործակցության, շարունական մասնագիտական զարգացման մեջ:<br>________________<br>**Դ/ Սովորողների ներգրավվում**<br><br>1. Դպրոցում իրականացվում են նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ | __________<br>**Դ/**<br>Սովորողներին տրված է **լիարժեք** հնարավորություն մասնակցելու արտադպրոցական միջոցառումներին, աշխորհիրդի աշխատանքներին և նրանք **ակտիվ** մասնակցում են այդ աշխատանքներին: | ն զարգացման մեջ:<br>__________<br>**Դ/**<br>Սովորողներին տրված է **լիարժեք** | __________<br>**Դ/**<br>Սովորողներին հնարավորություն չի տրվում մասնակցելու արտադպրոցական միջոցառումներին, աշխորհիրդի աշխատանքներ | Գնահատման չափանիշներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ձևավորելու հավասարություն՝ սեռերի և ազգային փոքրամասնությունների միջև:<br><br>2. Սովորողներին ակտիվորեն մասնակից դարձնել արտադպրոցական միջոցառումներին, աշակերտական խորհրդի աշխատանքներին:<br><br>**Ե/ Դպրոցի կառավարման աշխատանքներում ուսուցիչների և շահագրգիռ կողմերի ներգրավվում /մասնակցային կառավարում/**<br><br>1. Ուսուցիչներին մասնակից դարձնել դպրոցում որոշումներ կայացնելու գործում ՝ ինչպիսիք են ներքին կարգապահական կանոնների մշակում, ռեսուրսների բաշխում, | **Ե/**<br>Ուսուցիչները **միշտ** մասնակցում են դպրոցի քաղաքականության մշակման, ռեսուրսների բաշխման, ուսուցման բարելավման աշխատանքներին:<br>Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներում ծնողներն, ուսուցիչներն ու | հնարավորություն մասնակցելու արտադպրոցական միջոցառումներին, աշխորհրդի աշխատանքներին, սակայն նրանք **հազվադեպ են** մասնակցում այդ աշխատանքներին:<br><br>**Ե/**<br>Ուսուցիչները **հազվադեպ են** մասնակցում դպրոցի քաղաքականության մշակման, ռեսուրսների բաշխման, ուսուցման բարելավման | ին և նրանք **բոլորովին չեն** մասնակցում այդ աշխատանքներին:<br><br>**Ե/**<br>Ուսուցիչները **չեն** մասնակցում դպրոցի քաղաքականության մշակման, ռեսուրսների բաշխման, ուսուցման բարելավման աշխատանքներին:<br>Դպրոցի կառավարման և | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ուսուցման բարելավում:<br><br>2. Ապահովել խորհրդակցական մարմինների ակտիվ մասնակցությունը դպրոցի կառավարման և որոշումների կայացման գործընթացում:<br><br>3. Դպրոցում ապահովել սովորող-ուսուցիչ-ծնող-տնօրեն հաղորդակցումը, համագործակցությունն ու հետադարձ կապը:<br><br>4. Համագործակցելով ՏԻՄ-ի հետ՝ իրականացնել սոցիալական աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար: | սովորողները **մշտապես ակտիվ** ընդգրկված են: | աշխատանքներ ին:<br>Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներում ծնողներն, ուսուցիչներն ու սովորողների ընդգրկվածությունը **սիմվոլիկ** բնույթ է կրում : | խորհրդակցական մարմիններում, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներում ծնողներն, ուսուցիչներն ու սովորողներն առհասարակ **ընդգրկված չեն:** | Գնահատման չափանիշներ |
| 4.Աշխատակ | **Ա/ Աշխատակազմի** | Աշխատանքներ | Աշխատանքները կատարվել են | Աշխատանքներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում | **արժևորում և խրախուսում:**<br><br>1. Պարզել աշխատողների մասնագիտական զարգացման ուղղություններն ու արդյունավետությունը<br><br>2. Նյութական՝ նվերներով, դրամական պարգևներով, ու ոչ նյութակ միջոցներով՝ պատվոգրերով, շնորհակալագրերով, խրախուսել մանկավարժների ձեռքբերերումները:<br><br>3. Խրախուսել ուսուցիչների փոխադարձ համագործակցությունը:<br><br>4. Ողղորդել և մոտիվացնել ուսուցիչներին, որպեսզի մասնակցեն կամավոր ատեստավորմանը, տարակարգի շնորհման մրցույթներին: | ը **գերազանց** կերպով՝ **ամբողջ** ծավալով կատարված են:<br><br>Ա/ Դպրոցում **մշտապես** արժևորվում, մեծարվում է մանկավարժի դերը և տարեկան **2_3 անգ**ամ խրախուսվում է աշխատակազմը՝ իրենց կատարած բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար: | **մասամբ՝ բավարար** չափով:<br><br>Ա/ Դպրոցում **մշտապես** արժևորվում, մեծարվում է մանկավարժի դերը, սակայն **տարեկան մեկ անգամ է** խրախուսում աշխատակազմին՝ իրենց կատարած բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար: | **չեն կատարվել**:<br><br>Ա/ Դպրոցում մանկավարժի դերն **անտեսված** է և աշխատակազմի խրախուսում **չի իրականացվում**: | Գնահատման չափանիշները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 5. Կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման մրցույթների մասնակցության խթանում դպրոցի կողմից տրամադրվող աջակցության՝ սեմինարների, բարոյական և նյութական աջակցման և խրախուսման միջոցով:<br><br>6. Խրախուսել անձնակազմի ձեռք բերած առաջավոր փորձն ու ներդնել աշխատանքում:<br>7. Խրախուսել նախագծային աշխատանքների իրականացմանն ուղղված ուսուցիչների աշխատանքը:<br><br>8. Հրապարակել անձնակազմի ձեռքբերումները:<br><br>______________________<br><br>**Բ/ Աշխատակազմի** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ինքնակրթության միջավայրի ստեղծում**<br><br>9. Մանկավարժներին ապահովել կրթական ռեսուրսներով և ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններով:<br><br>10. Աշխատակազմի ինքնակրթության համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ:<br><br>11. Ըստ կրթական կարիքների՝ ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստումներ:<br><br>12. Ուսուցիչներին մասնակից դարձնել ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորած սեմինարներին:<br><br>13. Մասնագիտական և մեթոդական գրականությամբ համալրել | ______________<br><br>**Բ**/Աշխատակազմը **լիովին** ապահոված է կրթական ռեսուրսներով և գրականությամբ՝ նաև էլեկտրոնային, բացահայտված կարիքներից ելնելով նրանք **մշտապես** մասնակցում են մասնագիտական զարգացման սեմինարներին: | ______________<br><br>**Բ**/Աշխատակազմը **մասամբ է** ապահոված կրթական ռեսուրսներով և գրականությամբ, **դպրոցում չկա** էլեկտրոնային գրադարան , բացահայտված կարիքներից ելնելով նրանք **հազվադեպ են** մասնակցում մասնագիտական զարգացման սեմինարներին: | ______________<br>**Բ**/<br>Աշխատակազմն **ապահոված չէ** կրթական ռեսուրսներով և գրականությամբ, դպրոցում **չկա** էլեկտրոնային գրադարան , բացահայտված կարիքներից ելնելով նրանք **չեն** մասնակցում մասնագիտական զարգացման սեմինարներին: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դպրոցի գրադարանը։<br><br>14. Ստեղծել էլեկտրոնային գրադարան։<br><br>______________<br>**Գ/ Վերապատրաստման արդյունավետության ստուգում**<br><br>1. Գնահատել, թե որքանով է համապատասխանում վերապատրաստումների ծրագրերի բովանդակությունը դպրոցի և մանկավարժների կարիքներին։<br><br>2. Գնահատել որքանով է արդյունավետ վերապատրաստման ընթացքում անձնակազմի ձեռք բերած կարողունակությունները և որքանով են դրանք կիրառվում | ______________<br>Գ/ Վերապատրաստումների բովանդակություն **ամբողջությամբ** համապատասխանում է դպրոցի և անձնակազմի կարիքներին։ Վերապատրաստումների ընթացքում անձնակազմը ձեռք է բերել | ______________<br>Գ/ Վերապատրաստումների բովանդակություն **ամբողջությամբ** համապատասխանում է դպրոցի և անձնակազմի կարիքներին։ Վերապատրաստումների ընթացքում անձնակազմը ձեռք է բերել **լիովին արդյունավետ** կարողունակությ | ______________<br>Գ/ Վերապատրաստումների բովանդակություն **ամբողջությամբ** համապատասխանում է դպրոցի և անձնակազմի կարիքներին։ Վերապատրաստումների ընթացքում անձնակազմը ձեռք է բերել **լիովին** | Գնահատման չափանիշները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դասապրոցեսներում:<br><br>3. Գնահատել դպրոցում կրթության որակի բարելավման, սովորողների առաջադիմության բարձրացման վրա աշխատակազմի վերապատրաստման ազդեցությունն ու արդյունավետությունը:<br>____________________<br>**Դ/ Հետադարձ կապի ապահովում**<br>1. Աշխողների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար գնահատել նրանց կատարողականները | **լիովին արդյունավետ** կարողունակություններ և դրանք ամբողջությամբ կիրառում է աշխատանքում: Վերապատրաստումների արդյունքում սովորողների առաջադիմությունը և կրթության որակը բարելավվել **է 60%_ով:**<br>______________<br>**Դ/** Աշխատակազմին տրամադրվել է **կառուցողական** հետադարձ կապ և | ուններ, սակայն **աշխակազմի 30%-ն է** կիրառում աշխատանքում: Վերապատրաստումների արդյունքում սովորողների առաջադիմությունը և կրթության որակը բարելավվել է **20%**_ով:<br>______________<br>**Դ/** Աշխատակազմին տրամադրվել է **կառուցողական** հետադարձ կապ, սակայն **ոչ միշտ** է նրանց աջակցություն | **արդյունավետ** կարողունակություններ, սակայն դրանք **երբեք չի կիրառում** աշխատանքներում: Վերապատրաստումների արդյունքում սովորողների առաջադիմության և կրթության որակի **էական բարելավում չի գրանցվել:**<br>______________<br>**Դ/** Աշխատակազմին **չի տրամադրվել** կառուցողական հետադարձ կապ և | Գնահատման չափանիշները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | և տրամադրել հետադարձ կապ ։<br><br>2. Ըստ անձնակազմի անդամների կատարած աշխատանքի արդյունքների՝ ուժեղ և թույլ կողմերի, նրանց տրամադրել շարունակական աջակցություն: | **մշտական ու շարունակական** աջակցություն: | տրամադրվել: | մշտական ու շարունական աջակցություն: | |
| 5.Դպրոց-համայնք կապեր, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցություն: | **Ա/ Դպրոց- համայնք կապի ապահովում**<br><br>1. ՏԻՄ-ին մասնակից դարձնել դպրոցի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման գործին:<br><br>2. Ակտիվացնել դպրոցի և դպրոցականների մասնակցությունը համայնքային իրենց հասանելի խնդիրների վերհանմանը և լուծմանը: | Աշխատանքները իրականացվել են **ամբողջ ծավալով:** Դպրոց-համայնք կապերը, ծնողական համայնքի կապերը, տնօրենի և կառավարման ու խորհրդակցակ | Աշխատանքները մասամբ՝ **բավարար չափով** էին իրականացվել: Դպրոց-համայնք կապերը, ծնողական համայնքի կապերը, տնօրենի և | Աշխատանքները **ոչ բավարար** չափով են իրականցավել՝ մինչև **10%**-ի չափով: Դպրոց-համայնք կապերը, ծնողական համայնքի կապերը **բացակայում են:** Տնօրենի և | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3. Ակտիվ համագործակցել տարբեր կրթական կազմակերպությունների հետ:<br><br>4. Համագործակցել ՀԿ-ների հետ՝ աշակերտների մեջ սերմանելով կամավորության ցանկություն:<br>5. Տարբեր ՀԿ-ների հետ համագործակցությամբ՝ սովորողների համար իրականացնել տարբեր կրթական ծրագրեր:<br>6. Կրթական գործընթացում ընդգրկել համայնքային ներուժը:<br>7. Համայնքին մասնակից դարձնել սովորողների կողմից իրականացվող համայնքային զարգացման և նախագծային աշխատանքներում: | ան մարմինների հետ համագործակցություններն **գերազանց** հիմքերի վրա են, նիստերը կրում են **մշտական** բնույթ:<br>__________<br>**Ա**/ Դպրոց- համայնք, դպրոց- շահույթ չհետապնդող կազմակերպություններ կապերը **ամուր** հիմքի վրա են և նրանք **ակտիվ** մասնակցում են ներդպրոցակա | կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունները **բավարար** հիմքերի վրա են, նիստերը կրում են **ձևական** բնույթ:<br>__________<br>**Ա**/ Դպրոց- համայնք, դպրոց- շահույթ չհետապնդող կազմակերպություններ կապերը **թույլ** են և նրանք **շատ քիչ են** մասնակցում | կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունները **բացակայում են,** նիստեր չեն գումարվում, կառավարումը միանձնյա է:<br>__________<br>**Ա**/ Դպրոց- համայնք, դպրոց- շահույթ չհետապնդող կազմակերպություններ կապերը **խզված են** և նրանք **բոլորովին չեն** մասնակցում ներդպրոցակա | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Բ/ Դպրոց-սովորող- ծնող համագործակցություն**<br><br>1. Սովորողներին ակտիվ մասնակից դարձնել իրենց վերաբերվող խնդրահարույց հարցերին: | ն կյանքին, որի շնորհիվ **շատ են մեծացվել** սովորողների կրթական հնարավորությունները: Համայնքային ներուժն **առավելագույնս** օգտագործվում է դպրոցի գործունեության մեջ:<br>______________<br>**Բ/** Ծնողներն ու սովորողներն **առավելագույնս** ներգրավված են դպրոցի աշխատանքներում՝ որոշումների կայացմանը, կամավոր աշխատանքներ | ներդպրոցական կյանքին, որի հետևանքով սովորողների կրթական հնարավորությունները **սահմանափակ են**: Համայնքային ներուժը **բավարար չափով է** օգտագործվում դպրոցի գործունեության մեջ:<br>______________<br>**Բ/** Ծնողներն ու սովորողները **կիսով չափ են** ներգրավված են դպրոցի աշխատանքներում՝ | ն կյանքին : Համայնքային ներուժը **բոլորովին չի** օգտագործվում դպրոցի գործունեության մեջ:<br>______________<br>**Բ/** Ծնողներն ու սովորողները **բոլորովին ներգրավված չեն** դպրոցի աշխատանքներում՝ որոշումների կայացմանը, կամավոր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2. Սովորողներին և ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը:<br>3. Աշակերտական խորհուրդը քայլեր է մշակում և իրականացնում ուսման մեջ հետ մնացող կամ և միմյանց մեջ վեճեր ունեցող սովորողների խնդիրների կարգավորմանը մասնակցելու համար<br>4. Աշակերտական և ծնողական խորհուրդներին մասնակից դարձնել արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին, էքսկուրսիաներին, շաբաթօրյակներին: | ում) և համայնքային նախագծերում, որի արդյունքում համայնքը **շատ բարեկեցիկ** է դարձել: Դպրոց-ծնող համագործակցությունն ու տարբեր հարթակներում հաղորդակցումը **լիովին արդյունավետ** է, **Մշտապես** տրվում է հետադարձ կապ սովորողների և նրանց ծնողների հետ՝ նրանց ներգրավվածության մակարդակը | որոշումների կայացմանը, կամավոր աշխատանքներում, և համայնքային նախագծերում, որի արդյունքում համայնքի **բարեկեցությունը չնչին է փոփոխվել** :Դպրոց-ծնող համագործակցությունն ու տարբեր հարթակներում հաղորդակցումը **մասամբ արդյունավետ** է: **Ոչ միշտ է** տրվում հետադարձ կապ սովորողների և նրանց ծնողների հետ՝ | աշխատանքներում,և համայնքային նախագծերում, որի արդյունքում համայնքի **բարեկեցությունը չի փոփոխել:** Դպրոց-ծնող համագործակցությունն ու տարբեր հարթակներում հաղորդակցումը **անարդյունավետ** է: **Երբեք չի** տրվել հետադարձ կապ սովորողների և նրանց ծնողների հետ՝ նրանց ներգրավվածու | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 5. Ծնողական խորհրդին մասնակից դարձնել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին աջակցության տրամադրման աշխատանքներին:<br><br>6. Դպրոց-ծնող կապի արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծել հաղորդակցման առցանց հարթակներ:<br>7. Դպրոցում իրականացվող կրթության որակի և ծնողների ներգրավման վերաբերյալ ականացնել հարցումներ ծնողների և սովորողների շրջանում: | պարզելու համար: | նրանց ներգրավվածության մակարդակը պարզելու համար: | թյան մակարդակը պարզելու համար: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 8. Ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ: 9. Աշակերտական խորհրդի հետ հաճախակի կազմակերպել դպրոցի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումներ և աշխատանքներ: 10. Աշակերտական և ծնողական խորհուրդներին մասնակից դարձնել մանկավարժական ժողովների նիստերին: 11. Հարցումների միջոցով պարզել սովորողների և ծնողների ներգրավվածությունը սովորողների կրթության մեջ: | | | | Գնահատման չափանիշները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում: | ______________________________ **Գ/ Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպում** 1. Օրենքով սահմանված կարգով և սովորողների կրթական կարիքներից ելնելով դպրոցում իրականացնել արտադպրոցական և երկարօրյա ուսուցում : 2. Իրականացնել վերահսկողություն արտադպրոցական և երկարօրյա ծրագրերում սովորողների ընդգրկվածության և հաճախումների շուրջ: 3. Իրականացնել դպրոցում կրթության որակի վրա արտադպրոցական և երկարօրյա ծրագրերի | ______________ **Գ/** Դպրոցում օրենքով սահմանված կարգով **հաճախակի** իրականացվում են **որակյալ** արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ծրագրեր, որում սովորողներն **առավելագույնս** ներգրավված են, և այն **առավելագույնս բարելավում է** կրթության որակն ու համայնքի բարեկեցությունը: | ______________ **Գ/** Դպրոցում **ոչ պարբերաբար են** իրականացվում արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ծրագրեր՝ ընդգրկելով **սահմանափակ ուղղություններ**, որում սովորողները **կիսով չափ են** ներգրավված, | ______________ **Գ**/ Դպրոցում **հազվադեպ** են իրականացվում արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ծրագրեր, որում սովորողները **կիսով չափ են** ներգրավված, և այն **բոլորովին չի բարելավում** կրթության որակն ու համայնքի բարեկեցությունը: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ազդեցության գնահատում: | | և այն **կիսով չափ է բարելավում** կրթության որակն ու համայնքի բարեկեցությունը: | | |
| 6.Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում | **Ա/ Կանխարգելող գործողություններ**<br>1. Դպրոցում բարձրացնել մեդիագրագիտության մակարդակը:<br>2. Վերահսկել և կանխել դպրոցում սովորողների նկատմամբ մեդիաահաբեկչության դեպքերը:<br>3. Պահպանել անձանց անձնական բնույթի վեճերի կամ գործերի վերաբերյալ գաղտնիությունը:<br>4. Վերահսկել և կանխել սովորողի նկատմամբ հալածանքի դեպքերը:<br>5. Դպրոցում ապահովել առողջ բարոյահոգեբանական | Դպրոցում **իսպառ** բացակայում են հալածանքի, օտարման և բռնության դեպքեր, տիրում է **լիարժեք** առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, սովորողները **պարբերաբար իրազեկվում** և **տիրապետում** են իրենց իրավունքներին: | Դպրոցում **շատ քիչ են** գրանցվում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր, դրանց կանխարգելման համար իրականացվում են միջոցառումներ: Դպրոցում **հիմնականում** | Դպրոցում **հաճախակի են** ոտնահարվում սովորողների իրավունքները և հալածանքի, օտարման և բռնության դեպքեր գրանցվում, որի կանխարգելման համար աշխատանքներ չեն տարվում: Դպրոցում **տիրում** է **անառողջ** բարոյահոգեբանական մթնոլորտ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մթնոլորտ: | | **տիրում** է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, սովորողների **իրազեկումը մշտակ չէ** և **լիարժեքորեն չեն տիրապետում** իրենց իրավունքներին: | | |
| | 6. Բոլորին դարձել լսելի:<br>7. Դպրոցում պահպանել անհրաժեշտ ջերմաստիճանը<br><br>8. Ձևավորել կարեկցանք դպրոցի շրջապատի կարիքավոր մարդկանց հանդեպ:<br><br>9. Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ՝ տվյալների հավաքագրման և դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի առկա մակարդակի որոշման նպատակով: | **Ա/** Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում աշխատանքներն **ամբողջ ծավալով** են իրականացվել **և առավելագույնս արդյունավետ ՝ ամբողջովին** պահպանելով գաղտնիության էթիկայի նորմերը և **գրագետ** կերպով ընդգրկելով մեդիատեխնոլոգիան: | **Ա/** Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում աշխատանքներն **կիսով չափ են** իրականացվել **և մասամբ արդյունավետ ՝ կիսով չափ** պահպանելով | **Ա/** Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում աշխատանքներն **չնչին են** իրականացվել, որոնք **անարդյունավետ են և բոլորովին չեն պահպանում գաղտնիության** էթիկայի նորմերը : | Գնահատման չափանիշն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ______________________<br><br>**Բ/ Իրազեկվածության բարձրացում**<br><br>1. Բռնության կանխարգելման վերաբերյալ սովորողների, ծնողների և ուսուցիչների համար սեմինար-քննարկումների կազմակերպում՝ բարձրացնելով հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման վերաբերյալ իրազեկվածությունը:<br><br>2. Ուսումնադաստիարակչական աշխատանքներով սովորողների մոտ ձևավորել միմյանց հանդեպ կարեկցանք, հարգալից վերաբերմունք և հանդուրժողականություն: | **Բ**/ Բռնության կանխարգելման, ահաբեկման վերաբերյալ սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին իրազեկման նպատակով տարին **2 անգամ** կազմակերպվել է **արդյունավետ** սեմինար-քննարկումներ՝ համապատասխանեցնելով սովորողների տարիքային առանձնահատկություններին, և նրանց մոտ **լիովին** ձևավորվել է միմյանց հանդեպ | գաղտնիության էթիկայի նորմերը և **ոչ գրագետ** կերպով ընդգրկելով մեդիատեխնոլոգիան:<br><br>______________<br>**Բ**/ Բռնության կանխարգելման, ահաբեկման վերաբերյալ սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին իրազեկման նպատակով **տարին 1 անգամ** կազմակերպվել է **կիսով չափ արդյունավետ** | **Բ**/ Բռնության կանխարգելման, ահաբեկման վերաբերյալ սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին իրազեկման նպատակով տարին **1 անգամ** կազմակերպվել է **անարդյունավետ** սեմինար-քննարկումներ՝ չհամապատասխանեցնելով սովորողների տարիքային առանձնահատկություններին, և նրանց մոտ **բացակայում է** միմյանց հանդեպ կարեկցանքը, | երը<br><br>Գնահատման չափանիշները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3. Իրավապահ մարմիններին ներգրավել դպրոցում բռնության և հալածանքի վերաբերյալ դասախոսություններ կատարելու, զրույցներ իրականացնելու գործում:<br><br>4. Դասղեկի ժամերին իրակացնել թեմատիկ քննարկումներ, դաստիարակչական բնույթի ֆիլմերի դիտումներ:<br>______________________________<br><br>**Գ/ Բարոյահոգեբանական մթնոլորտ և համագործակցություն**<br><br>1. Դպրոցում ապահովել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և հարգալից վերաբերմունք:<br>2. Համագործակցել | կարեկցանք, հարգալից վերաբերմունք և հանդուրժողական անություն:<br><br>_____________<br><br>**Գ/** Դպրոցում **առկա է առողջ** բարոյահոգեբանական մթնոլորտ և հարգալից վերաբերմունք: Դպրոցն **ակտիվ** համագործակցում է իրավապահ մարմինների և ՏՄԱԿ-ի հետ: | սեմինար-քննարկումներ, որոնք երբեմն չեն համապատասխանել սովորողների տարիքային առանձնահատկություններին, և նրանց մոտ **լիարժեք չի ձևավորվել** միմյանց հանդեպ կարեկցանք, հարգալից վերաբերմունք և հանդուրժողական անություն:<br><br>_____________ | հարգալից վերաբերմունքը և հանդուրժողականությունը:<br><br>_____________<br><br>**Գ/** Դպրոցում **խաթարված է առողջ** բարոյահոգեբանական մթնոլորտը : Դպրոցն **չի համագործակցում** իրավապահ մարմինների և ՏՄԱԿ-ի հետ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | իրավապահ մարմինների և ՏՄԱԿ-ի հետ:<br>3.<br><br>**Դ/ Մշտադիտարկում և գնահատում**<br>1. Ստեղծել վերահսկողության մեխանիզմեր:<br>2. Պարբերաբար գնահատել կանխարգելող աշխատանքների արդյունավետությունը:<br>3. Հաճախակի կատարելագործել դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները: | **Դ/** Դպրոցում տեղծված է վերահսկողության մեխանիզմեր: **Պարբերաբար** գնահատվում է հալածանքը, ոտարումը և բռնությունը կանխարգելող աշխատանքների արդյունավետությունը: **Հաճախակի** կատարելագործվում դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները: | **Գ/** Դպրոցում **առկա է առողջ** բարոյահոգեբանական մթնոլորտ և հարգալից վերաբերմունք: Դպրոցի համագործակցությունը իրավապահ մարմինների և ՏՄԱԿ-ի հետ **սահմանափակ է:**<br><br>**Դ/** Դպրոցում տեղծված է վերահսկողության մեխանիզմեր, սակայն **շատ հազվադեպ է** գնահատվում հալածանքը, ոտարումը և | **Դ/** Դպրոցում տեղծված **բացակայում է** վերահսկողության մեխանիզմեր, **չի գնահատվում** հալածանքը, ոտարումը և բռնությունը կանխարգելող աշխատանքների արդյունավետությունը: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ տարվող աշխատանքներ | 1. Դպրոցի աշխատակազմն ընդգրկվել է դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծման աշխատանքներում:<br>2. Դպրոցում կազմակերպվում են նախագծերի քննարկումներ:<br>3. Աշխատակազմին ծանոթացնել դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին: | Դպրոցի աշխատակազմն **ակտիվ** ընդգրկված է դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծման աշխատանքներում:Դպրոցում **պար**բերաբար կազմակերպվում են նախագծերի քննարկումներ: Աշխատակազմը **քաջ** ծանոթ է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին: | բռնությունը կանխարգելող աշխատանքների արդյունավետությունը: Դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները **աննշան են փոփոխվում:**<br>Դպրոցի աշխատակազմն **բավարար չափով է** ընդգրկված դպրոցում կազմվող իրավական ակտերի | Դպրոցի աշխատակազմն ընդգրկված չէ դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծման աշխատանքներում:Դպրոցում **չեն** կազմակերպվում նախագծերի քննարկումներ: Աշխատակազմը **չի տիրապետում** դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախագծման աշխատանքներում:Դպրոցում **հազվադեպ** են կազմակերպվում նախագծերի քննարկումներ: **Աշխատակազմի մեծ մասը ծանոթ չէ** դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին: | | |

## 9.Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն

Ծրագրի կատարման ընթացիկ վերահսկողության ձևերն են՝

- Զարգացման ծրագրի քննարկում և հաստատում մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի կողմից,
- Խորհրդի կողմից առնվազն տարեկան 2 անգամ ՝ ուսումնական տարվա առաջին կիսամյակի և ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ավարտին ,տվյալ ոսումնական տարվա աշխատանքային ծրագրով և ժամանակացույցով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկում և դրանց արդյունքների գնահատում,
- Դպրոցի զարգացման ծրագրի ընթացքին կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավումը,
- Ըստ ընթացիկ և ներքին գնահատման արդյունքների՝ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում և համապատասխանեցում ստեղծված իրավիճակին:
- Յուրաքանչյուր կիսամյակի վերջում՝ տարկան առնվազն 2 անգամ, հաստատության խորհուրդն իրականացնում է զարգացման ծրագրի վերահսկողությունն : Այն իրականացվում է տարեկան հաշվետվության միջոցով՝ իր մեջ ընդգրկելով յուրաքանչյուր գործողության իրականացման ուղղությամբ կատարած աշխատանքների, դրանց չկատարման կամ մասնակի կատարման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև տեղեկատվություն զարգացման ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

Զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվության ձևաչափը ներկայացված է ստորև.

.

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| N | Բաժիններ | Միջոցառում (գործողություն) | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառ | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ները | արկու թյունն եր | |
| 1 | Դպրոցի շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան | 1. Վերանորոգել դպրոցի հանդիսությունների դահլիճը և համալրել երաժշտական կենտրոնով:<br>2. Դպրոցում գրադարանը համալրվիլ նոր և ժամանակակից գրականությամբ:<br>3. Դպրոցում ստեղծել ռեսուրս-սենյակ :<br>4. Բարեկարգել դպրոցի բակը. այնտեղ տեղադրել նստարաններ, աղբամաններ և ստեղծել | Բարեկարգ, հարմարավետ և հարուստ նյութատեխնիկական բազայով կրթական միջավայր: | 1. Մինչև 2024թ.-ի օգոստոսի 30<br>2. Ուստարվա ընթացքում<br>3. Մինչև 2024 թ.-ի ապրիլ<br>4. 2024թ.-ի հունիսից-օգոստոս<br>5. 2024-2029թթ.<br>6. Յուրաքանչյուր ուսումնական տարում<br>7. Յուրաքանչյուր ուսումնական տարում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | խաղահրապարակ:<br><br>5. Վերանորոգել և հնարավորության դեպքում, նորով փոխարինել դպրոցի գույքը:<br><br>6. Ավելացնել մարզադահլիճի,ՆԶ Պ դասասենյակի մարզական կահավորումը՝ համագործակցելով նաև ՊՆ-ի, ԱԻՆ-ի հետ, համագործակցելով համայնքային բուժհաստատություն ների հետ՝ հարստացնել բուժկետի դեղորքային հագեցվածությունը:<br>7. Դասասենյակներրը զինել ուսումնամեթոդակա | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ն դիդակտիկ պարագաներով, նյութերով : | | | | | | |
| 2 | Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքները | ***<u>Ա/ Սովորողների ն ուղղված գործողություններ</u>***՝<br>1. Դասացուցակի կազմում և հրապարակում<br>2. Արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը<br><br>3. Կազմակերպել ներդպրոցական վերահսկողությունը՝ թեստերի, դասալսումների, հարցաթերթիկների | Սովորողների արդյունավետ ուսուցում և դաստիարակություն, կրթության որակի բարձրացում | 1. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում(սեպտեմբեր, հունվար)<br>2. Յուրաքանչյուր ուսումնական տարում՝ 2024 թ.-ի հունվարից 2029 թվականի հունվար:<br>3. Ուստարվա սկզբում (հայտորոշում), ընթացքում և ավարտին | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | և այլ միջոցների կիրառմամբ:<br><br>4. Ստեղծել ուսումնական արտադասարանական խմբակներ:<br><br>5. Ստեղծել երկարօրյա խմբակներ՝ նպաստելով ցածր առաջադիմությամբ սովորողների առաջադիմության բարձրացմանը:<br><br>6. Բանավեճերի, զրույցների, մրցույթների, քննարկումների միջոցով իրականացնել սովորողների համագործակցությունը իրենց հասակակիցների հետ: | | (ամփոփում)<br>4. Յուրաքանչյուր կիսամյակում<br>5. Յուրաքանչյուր կիսամյակում,<br>6. Ուստարվա ընթացքում<br>7. Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում<br>8. Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում<br>9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ հունիս-հուլիս ամիսներին<br>10. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 7. Էլեկտրոնային եղանակով վերահսկել սովորողների շարժը և հաճախումները<br>8. Օլիմպիադաների և մրցույթների կազմակերպում<br>9. Քննաշրջանի կազմակերպում և իրականացում<br>10. Վկայականների լրացում և բաշխում | | հուլիս-օգոստոս ամիսներին<br>11. Յուրաքանչյուր | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***Բ/ Ուսումնական միջավայրին ուղղված գործողություններ՝***<br>11. Ստեղծել բարեկարգ ու անվտանգ ուսումնական միջավայր, որտեղ պահպանվում է սովորողների առողջությունն ու հավասարությունը և հագեցված է անհրաժեշտ ուսումնական գույքով ու ռեսուրսներով:<br><br>12. Հետևել դպրոցական կարգապահությանը, միջավայրի անվտանգությանը, բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմանը: | ___<br>Բարեկարգ և անվտանգ ուսումնական միջավայր | ուսումնական տարվա ընթացքում<br>12. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>13. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 13. Դպրոցում իրականացվում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ ձևավորելու անվտանգ կենսագործունեությ ան և առողջ ապրելակերպի կարողություններու հմտություններ: <br>_______________ <br>***Գ/ Կրթության չափորոշչով սահմանված կրթության բովանդակության պահպանում և սովորողների խրախուսում*** <br><br>14. Սովորողների կրթությունն իրականացնել նոր | _______________ <br>Չափորոշչահեն կրթություն, սովորողների առաջադիմությա ն և որակի աճ, հաճախակի խրախուսված | _______________ <br>14. 2024-2029թթ-ի յուրաքանչյու ր ուսումնական տարվա ընթացքում <br>15. Յուրաքանչյո ւր ուսումնական | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՊՁ-ով:<br><br>15. Սովորողների մոտ առաջադիմության և որակի աճ ապահովել:<br>16. Արտակարգ ընդունակություններ ունեցող և ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար իրականացնել անհատական ուսուցում և պարապմունքներ:<br>17. Խրախուսել սովորողների օլիմպիադաների և առարկայական ու ուսումնադաստիարակչական մրցույթներին մասնակցություն ը:<br>18. Դպրոցում իրականացնել սովորողների | սովորող, արդյունավետ գնահատում: | տարվա ընթացքում<br>16. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>17. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>18. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>19. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում՝ համապատասխան մրցույթների արդյունքների | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գիտելիքների արժանահավատ ու արդար գնահատում:<br><br>19. Մեդալով, պատվոգրերով, շնորհակալագրերով պարգևատրել առարկայական և ոչ առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում բարձր ցուցանիշներ ցուցաբերած սովորողներին:<br><br>20. Գովասանագրերով, շնորհակալագրերով պարգևատրել բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին:<br><br>21. Սովորողների հաղթանակներն ու ձեռքբերումները լուսաբանել դպրոցի | | հրապարակումից հետո<br>20. Յուրաքանչյուր ուսումնական տարվաավարտին<br>21. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կայքում:<br>___________________<br>***Դ/ Մանկավարժական կազմին և վարած դասերի որակի սպուգմանն ուղղված գործողություններ՝***<br><br>22. Դասղեկների և մեթոդմիավորումների նշանակում, թեմատիկ պլանների ստուգում:<br>23. Իրականացնել մասնագիրական քննարկումներ:<br><br>24. Իրականցնել ներքին գնահատում:<br><br>25. Հաճախակի իրականացնել դասալսումներ և քննարկումներ<br><br>26. Մեթոդմիավորումների հետ | ____________<br><br>Մանկավարժների աշխատանքների արդյունավետ վերահսկում և բարելավում | ____________<br>22. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում՝ սեպտեմբեր ամսին<br>23. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>24. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>25. Յուրաքանչյուր կիսամյակի | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | իրականացնել վերլուծություն դասերի որակի վերաբերյալ, քննարկել ուսուցիչների հետ, վեր հանել խնդիրները և մշակել դրանց շտկմանն ուղղված քայլեր:<br><br>27. Ուսուցիչներին հաճախակի մասնակից դարձնել մասնագիտական վերապատրաստումներին:<br><br>28. Ուսուցիչներին հորդորել հաճախակի օգտվել ԿՁՆԱԿ-ի առցանց հարթակից և վերահսկել այն: | | ընթացքում<br>26. Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում՝ ամիսը 1 անգամ<br>27. Յուրաքանչյուր ուսումնական տարում<br>28. Յուրաքանչյուր ուսումնական տարում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| 3 | Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր | **Ա/ Ժողովրդավար մշակույթի ձևավորում և համընդհանուր ներառականության ապահովում**<br><br>1. Դպրոցում ստեղծել հավասար պայմաններ դպրոց ընդունվող և դպրոցում սովորող | Բոլոր սովորողների համար հավասար պայմաններ, ազատ, անկաշկանդ, հարգալից և ներառական միջավայր | 1. 01.2024թ. - 01.2029թ.՝ յուրաքանչյուր ուսումնական տարում՝ շարունակաբար:<br>2. 2024_2029թ թ-ի յուրաքանչյուր ուսումնական | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բոլոր սովորողների համար:<br>2. Դպրոցի ուսումնական գործընթացում ապահովել բոլոր սովորողների մասնակցության համար հավասար պայմաններ ՝ անկախ նրանց կարիքներից, կարողություններից ու սոցիալական խոցելիության աստիճանից:<br>3. Դպրոցում ստեղծել ներառական և հարգալից միջավայր<br>4. Խրախուսել սովորողների կարծիքներ ու գաղափարնե արտահայտելու ցանկությունը և դրանք հաշվի առնել որոշումների | | տարվա ընթացքում<br>3. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>4. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>5. 2024_2029թ թ. | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կայացման գործում:<br>5. Դպրոցում ստեղծել սովորողների և աշխատողների համար ազատ, անկաշկանդ և անվտանգ միջավայր:<br>______________<br>**Բ/ Ֆիզիկական միջավայրը հարմարեցում**<br>1. Ֆիզիկական միջավայրը հարմարեցնել և մատչելի ու հասանելի դարձնել բոլոր սովորողների առանձնահատկություններին՝ ապահովելով անվտանգությունը:<br>2. Դպրոցը համալրել ներառական կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ | ______________<br>Սովորողների կրթական կարիքներին հարմարեցված ֆիզիկական միջավայր | ______________<br>2024_2029թ թ.<br>1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>2. 2024թ.-ին<br>3. 2024թ.-ին<br>4. 2024թ.-ին<br>5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում՝ | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սարքերով, դիդակտիկ նյութերով և ձեռնարկներով:<br>3. ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծել ռեսուրս-սենյակ:<br>4. Դպրոցի վեբ կայքում ստեղծել ներառական կրթության բաժին՝ դպրոց-ընտանիք-համայնք փոխադարձ կապի ապահովման համար:<br>5. Դպրոցի ֆիզիկական միջավայրը դարձնել առավելագույն անվտանգ՝ դպրոցում ունենալ հակահրդեհային համակարգ, տարհանման պլան, տեսախցիկներ, | | պարբերաբար | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բակապահ, գրաֆիկով սահմանված հերթապահություն:<br>______________________<br>**Գ/ Ուսուցիչների մասնակցային աշխատանքների կատարում և մասնակցային կառավարում**<br>1. Դպրոցում ապահովել սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմի ներկայությունը:<br>2. Դպրոցի բազմամասնագիտական թիմին պարբերաբար մասնակից դարձնել ներառական կրթության վերաբերյալ | _____________<br>Վերապատրաստված և հմուտ բազմամասնագիտական թիմ, ԱՈւՊ-ի հիման վրա իրականացված ուսուցում, ՀՊՉ-ի հիման վրա մշակված ԱՈՒՊ | ______________<br>1. 2024_2029թթ-ի յուրաքանչյուր ուսումնական տարում<br>2. Յուրաքանչյուր ուսումնական տարում<br>3. Յուրաքանչյուր ուսումնական տարում՝ ըստ անհրաժեշտության | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերապատրաստումն երին և առաջավոր փորձը ներդնել ուսումնական գործընթացում:<br>3. Մանկավարժներին պարբերաբար մասնակից դարձնել նոր ՀՊՉ-ի հիման ԱՈւՊ-ների մշակման և լրացմանն ուղղված սեմինար - քննարկումներին:<br>4. Ուսուցիչներին ակտիվ մասնակից դարձնել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, գնահատման մեթոդների մշակման մեջ:<br>5. Ուսուցիչներին մշտապես ներգրավվել | | 4. Յուրաքանչյուր ուսումնական տարում<br>5. Յուրաքանչյուր ուսումնական տարում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | լավագույն փորձի փոխանակման, միմյանց հետ համագործակցությա ն, շարունակական մասնագիտական զարգացման մեջ:<br>**Դ/ Սովորողների ներգրավվում**<br>1. Դպրոցում իրականացվում են նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ ձևավորելու հավասարություն՝ սեռերի և ազգային փոքրամասնություննների միջև:<br>2. Սովորողներին ակտիվորեն մասնակից դարձնել արտադպրոցական միջոցառումներին, | Դպրոցի ուսումնադաստի արակչական աշխատանքներո ւմ ներառված սովորող | 2024_2029թթ..Յուր աքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշակերտական խորհրդի աշխատանքներին:<br><br>**Ե/ Դպրոցի կառավարման աշխատանքներում ուսուցիչների և շահագրգիռ կողմերի ներգրավվում /մասնակցային կառավարում/**<br><br>1. Ուսուցիչներին մասնակից դարձնել դպրոցում որոշումներ կայացնելու գործում ՝ ինչպիսիք են ներքին կարգապահական կանոնների մշակում, ռեսուրսների բաշխում, ուսուցման բարելավում: | Մասնակցային կառավարման արդյունավետ համակարգ | 2024_2029թթ-ի յուրաքանչյուր ուսումնական տարում՝ պարբերաբար | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Ապահովել խորհրդակցական մարմինների ակտիվ մասնակցությունը դպրոցի կառավարման և որոշումների կայացման գործընթացում: 3. Դպրոցում ապահովել սովորող-ուսուցիչ-ծող-տնօրեն հաղորդակցումը, համագործակցությունն ու հետադարձ կապը: 4. Համագործակցելով ՏԻՄ-ի հետ՝ իրականացնել սոցիալական աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| 4 | Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության | **Ա/ Աշխատակազմի արժևորում և խրախուսում**<br><br>1. Պարզել աշխատողների մասնագիտական զարգացման ուղղություններն ու | Խրախուսված և արժևորված աշխատակազմ | 1. 01.2024-01.2029թթ.՝ յուրաքանչյուր տարի՝ ըստ անհրաժեշտության:<br>2. Յուրաքանչյուր ուսումնական | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | միջավայրի ձևավորում | արդյունավետությունը:<br>2. Նյութական՝ նվերներով, դրամական պարգևներով, ու ոչ նյութակ միջոցներով՝ պատվոգրերով, շնորհակալագրերով, խրախուսել մանկավարժների ձեռքբերերումները:<br>3. Խրախուսել ուսուցիչների փոխադարձ համագործակցությունը:<br>4. Ողղորդել և մոտիվացնել ուսուցիչներին, որպեսզի մասնակցեն կամավոր ատեստավորմանը, տարակարգի շնորհման մրցույթներին: | | տարվա ընթացքում 1-2 անգամ ՝ ըստ անհրաժեշտության<br>3. Պարբերաբար | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5. Կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման մրցույթների մասնակցության խթանում դպրոցի կողմից տրամադրվող աջակցության՝ սեմինարների, բարոյական և նյութական աջակցման և խրախուսման միջոցով։<br>6. Խրախուսել անձնակազմի ձեռք բերած առաջավոր փորձն ու ներդնել աշխատանքում<br>7. Խրախուսել նախագծային աշխատանքների իրականացմանն ուղղված ուսուցիչների | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքը:<br>8. Հրապարակել անձնակազմի ձեռքբերումները:<br>_____________________<br>**Բ/ Աշխատակազմի ինքնակրթության միջավայրի ստեղծում**<br>1. Մանկավարժներին ապահովել կրթական ռեսուրսներով և ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններով:<br>2. Աշխատակազմի ինքնակրթության համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ:<br>3. Ըստ կրթական կարիքների՝ ուսուցիչների համար կազմակերպել | ____________<br>Աշխատակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ միջավայր և ռեսուրսներ | ______________<br>1. Շարունակա բար<br>2. , 3., 4., 5. 2024-2029թթ<br>6. 2024թ.-ի մարտ-մայիս | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերապատրաստումն եր:<br><br>4. Ուսուցիչներին մասնակից դարձնել ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորած սեմինարներին:<br><br>5. Մասնագիտական և մեթոդական գրականությամբ համալրել դպրոցի գրադարանը:<br><br>6. Ստեղծել էլեկտրոնային գրադարան:<br><br>**Գ/ Վերապատրաստման արդյունավետության ստուգում** | Վերապատրաստ | 1-3՝ | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1. Գնահատել, թե որքանով է համապատասխանում վերապատրաստումների ծրագրերի բովանդակությունը դպրոցի և մանկավարժների կարիքներին:<br><br>2. Գնահատել որքանով է արդյունավետ վերապատրաստման ընթացքում անձնակազմի ձեռք բերած կարողունակությունները և որքանով են դրանք կիրառվում դասապրոցեսներում:<br><br>3. Գնահատել դպրոցում կրթության որակի բարելավման, սովորողների | ումների արդյունավետության խթանում | 2024-2029թթ-ի յուրաքանչյուր և ավարտին | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջադիմության բարձրացման վրա աշխատակազմի վերապատրաստման ազդեցությունն ու արդյունավետությունը:<br>________________<br>**Դ/ Հետադարձ կապի ապահովում**<br>1. Աշխողների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար գնահատել նրանց կատարողականները և տրամադրել հետադարձ կապ :<br>2. Ըստ անձնակազմի անդամների կատարած աշխատանքի արդյունքների՝ ուժեղ | ____________<br>Աշխատակազմի արդյունավետ աշխատանք, մշտադիտարկումներ և հետադարձ կապ | ____________<br>1. Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում<br>2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում՝ պարբերաբա | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | և թույլ կողմերի, նրանց տրամադրել շարունակական աջակցություն: | | ր | | | | |
| 5 | Դպրոց-համայնք կապեր, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցություն | **Ա/ Դպրոց-համայնք կապի ապահովում**<br>1. ՏԻՄ-ին մասնակից դարձնել դպրոցի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման գործին:<br>2. Ակտիվացնել դպրոցի և դպրոցականների մասնակցությունը համայնքային | Դպրոց-համայնք ամուր կապ, փոխշահավետ համագործակցություն, բարելավված կրթական գործընթաց | 01.2024_01.2029թթ.-ի յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | իրենց հասանելի խնդիրների վերհանմանը և լուծմանը<br>3. Ակտիվ համագործակցել տարբեր կրթական կազմակերպությունների հետ:<br>4. Համագործակցել ՀԿ-ների հետ՝ աշակերտներ ի մեջ սերմանելով կամավորության ցանկություն:<br>5. Տարբեր ՀԿ-ների հետ համագործակցությամբ՝ սովորողների համար | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | իրականացնել տարբեր կրթական ծրագրեր:<br>6. Կրթական գործընթացում ընդգրկել համայնքային ներուժը:<br>7. Համայնքին մասնակից դարձնել սովորողների կողմից իրականացվող համայնքային զարգացման և նախագծային աշխատանքներում:<br>**Բ/Դպրոց-սովորող-ծնող համագործակցություն** | Դպրոց-սովորող-ծնող ամուր | Պարբերաբար | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 12. Սովորողների ն ակտիվ մասնակից դարձնել իրենց վերաբերվող խնդրահարույ ց հարցերին: 13. Սովորողների ն և ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ներքին կարգապահա կան կանոնների մշակմանը: 14. Աշակերտակա ն խորհուրդը քայլեր է մշակում և իրականացում ուսման մեջ հետ մնացող կամ և | համագործակցու թյուն, նրանց ակտիվ ներգրավվածությ ունը ներդպրոցական կյանքին | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | միմյանց մեջ վեճեր ունեցող սովորողների խնդիրների կարգավորմանը մասնակցելու համար<br>15. Աշակերտական և ծնողական խորհուրդներին մասնակից դարձնել արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին, էքսկուրսիաներին, շաբաթօրյակներին:<br><br>16. Ծնողական խորհրդին մասնակից | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դարձնել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին աջակցության տրամադրման աշխատանքն երին:<br><br>17. Դպրոց-ծնող կապի արդյունավետ ության բարձրացման նպատակով ստեղծել հաղորդակցմ ան առցանց հարթակներ:<br>18. Դպրոցում իրականացվո ղ կրթության որակի և ծնողների ներգրավման վերաբերյալ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ականացնել հարցումներ ծնողների և սովորողների շրջանում:<br>19. Աշակերտական խորհրդի հետ հաճախակի կազմակերպել դպրոցի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումներ և աշխատանքներ:<br>20. Աշակերտական և ծնողական խորհուրդների ն մասնակից դարձնել մանկավարժական ժողովների նիստերին: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 21. Հարցումների միջոցով պարզել սովորողների և ծնողների ներգրավվածությունը սովորողների կրթության մեջ: | | | | | | |
| 6 | Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում | **Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպում**<br><br>1. Օրենքով սահմանված կարգով և սովորողների կրթական կարիքներից ելնելով դպրոցում իրականացնել արտադպրոցական և երկարօրյա | Արտադպրոցակ և երկարօրյա ուսուցման միջոցով բարելավված կրթության որակ | 1. 2024-2029թթ-ի յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում<br>2. Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում<br>3. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ուսուցում :<br><br>2. Իրականացնել վերահսկողություն արտադպրոցական և երկարօրյա ծրագրերում սովորողների ընդգրկվածության և հաճախումների շուրջ:<br><br>3. Իրականացնել դպրոցում կրթության որակի վրա արտադպրոցական և երկարօրյա ծրագրերի ազդեցության գնահատում: | | | | | | |
| 7 | Հալածանքի, օտարման և բռնության | Ա/**Կանխարգելող գործողություններ**<br>1. Դպրոցում բարձրացնել մեդիագրագիտության | Մեդիագրագետ աշխատակազմ և սովորողներ, վերահսկողության բարձր մակարդակ, | Պարբերաբար՝ ուսումնական տարվա ընթացքում և ավարտին: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կանխա րգելում | մակարդակը:<br><br>2. Վերահսկել և կանխել դպրոցում սովորողների նկատմամբ մեդիաահաբեկչության դեպքերը:<br><br>3. Պահպանել անձանց անձնական բնույթի վեճերի կամ գործերի վերաբերյալ գաղտնիությունը:<br><br>4. Վերահսկել և կանխել սովորողի նկատմամբ հալածանքի դեպքերը: | առողջ և անվտանգ բարոյահոգեբանական մթնոլորտ: | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5. Դպրոցում ապահովել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:<br><br>6. Բոլորին դարձել լսելի:<br><br>7. Ձևավորել կարեկցանք դպրոցի շրջապատի կարիքավոր մարդկանց հանդեպ:<br><br>8. Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ՝ տվյալների հավաքագրման և դպրոցում բարոյահոգեբ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անական մթնոլորտի առկա մակարդակի որոշման նպատակով:<br>_______________<br>Բ/ **Իրազեկվածության բարձրացում**<br>9. Բռնության կանխարգելման վերաբերյալ սովորողների, ծնողների և ուսուցիչների համար սեմինար-քննարկումների կազմակերպում՝ բարձրացնելով հալածանքի, օտարման և բռնության | _______________<br>Բռնության կանխարգելման վերաբերյալ իրազեկված աշակերտական, ծնողական և ուսուցչական համայնք | _______________<br>Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում 1-2 անգամ ՝ անհրաժեշտությունից ելնելով: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կանխարգելման վերաբերյալ իրազեկվածությունը:<br><br>10. Իրավապահ մարմիններին ներգրավել դպրոցում բռնության և հալածանքի վերաբերյալ դասախոսություններ կատարելու, զրույցներ իրականացնել ու գործում:<br><br>11. Դասղեկի ժամերին իրակացնել թեմատիկ քննարկումներ, դաստիարակչ | | 11. Ամիսը 1-2 անգամ | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ական բնույթի ֆիլմերի դիտումներ:<br>____________________<br>**Գ/Բարոյահոգեբանական մթնոլորտ և համագործակցություն**<br>12. Դպրոցում ապահովել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և հարգալից վերաբերմունք:<br>13. Համագործակցել իրավապահ մարմինների և ՏՄԱԿ-ի հետ:<br>____________________<br>Դ/ **Մշտադիտարկում և գնահատում**<br>14. Ստեղծել վերահսկողու | ____________<br>Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և հարգալից միջավայր<br>____________ | ____________<br>Ուսումնական տարվա ընթացքում<br>2024-2029թթ<br>____________<br>Յուրաքանչյուր կիսամյակի | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թյան մեխանիզմեր:<br>15. Պարբերաբար գնահատել կանխարգելող աշխատանքների արդյունավետությունը:<br>16. Հաճախակի կատարելագործել դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները: | Մշտադիտարկվող և գնահատվող կանխարգելիչ շխատանքներ | ընթացքում՝ պարբերաբար | | | | |
| 8 | Դպրոցի գործունեությունը կարգավորող | 1. Դպրոցի աշխատակազմն ընդգրկվել է դպրոցում կազմվող իրավական ակտերի | Իրավական ակտերի վերաբերյալ իրազեկված աշխատակազմ: | 1.Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբում<br><br>2.Յուրաքանչյուր կիսամյակի | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրավական ակտերի շուրջ տարվող աշխատանքներ | նախագծման աշխատանքներում:<br>2. Դպրոցում կազմակերպվում են նախագծերի քննարկումներ:<br>3. Աշխատակազմին ծանոթացնել դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին: | | ընթացքում<br><br>3.Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | | | | |
| 9 | Ֆինանսատնտեսական միջոցների կառավարում | 1. Հաստիքացուցակի և տարեֆիկա իոն ցուցակների կազմում:<br>2. Աշակերտների թվի հաշվառում:<br>3. Ֆինանսական միջոցների եռամսյակային հաշվետվության տեղադրում:<br>4. Աշխատավարձի | Ճիշտ համակարգված և բաշխված ֆինանսատնտեսական միջոցներ | 1. Յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամիսը `սեպտեմբեր, հունվար<br>2. Յուրաքանչյուր կիսամյակ<br>3. Յուրաքանչյուր | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հաշվարկում և վճարում:<br>5. Կոմունալ ծառայությունների վարձավճարների փոխանցում:<br>6. Գնումների կազմակերպման գործընթաց<br>7. Ամենամյա արձակուրդի տրամադրում և վճարում:<br>8. Գույքագրում և խոտանում:<br>9. Դասագրքերի բաշխում և վճարների գանձում | | եռամսյակը մեկ<br>4. Յուրաքանչյուր ամիս<br>5. Յուրաքանչյուր ամիս<br>6. Յուրաքանչյուր կիսամյակ՝ ըստ անհրաժեշտության<br>7. Յուրաքանչյուր ուստարում<br>8. Յուրաքանչյուր ուստարում<br>9. Յուրաքանչյուր կիսամյակ | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Օգտագործվող ՏՀՏ և նորարություն | 1. ՏՀՏ գործիքների տիրապետման և ՀՊՉ-ի ճիշտ կիրառմանը նպաստող վերապատրաստումներ իրականացնել:<br>2. Դպրոցում ունենալ գերարագ և անխափան ինտերնետ կապ:<br>3. Դպրոցը համալրել նոր համակարգչային տեխնիկայով: Ստեղծել թվային գրադարան<br>4. Հեռավար դասավանդման կարողունակությունների զարգացում: | ՏՀՏ արդյունավետ դասերի մեծ քանակ, գերարագ ինտերնետ կապ, ժամանակակից համակարգչային տեխնիկա, որակյալ հեռավար դասավանդման հմտություններ: | 1. 2024_2025թթ<br>2. 2024թ. փետրվար մարտ<br>3. 2024_2026թթ.<br>4. 2024_2029թթ. | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

Սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման՝ ելնելով ժամանակի պահանջներից և իրավիճակի փոփոխությունից:

Լուսանկարներ `






ԵՎՐՈՊԱ











